Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5547
5548

1902

9(47.925)
Ш - 44

304
V/310

323.1(91.542)
Ի-60

Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

ՏԱՃԿԱՀԱՅ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՊԼՕՄԱՏԻԱՆ

336625

ԹԻՖԼԻՍ
Էլէքտր. տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ. Մադաթեան փ. № 5
1906 (204)

2012

83110
948-90
8

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ներկայ աշխատութեան հիմնական մտքերը արծարծել ենք դեռ երեք տարի սրանից առաջ։ 1903 թ. կարդացել ենք Բերլինի հայ ուսանողների մի ժողովում «Հայ ժողովրդի քաղաքական կացութիւնը» վերնագրով մի դասախօսութիւն, որի երկրորդ բաժնի մէջ թռուցիկ ակնարկներով ծանրացել ենք «Հայկական Հարցի» վրայ։ Անցեալ տարի, 1905 թ. ապրիլ ամսին, Բերլնում, Եւրօպայի հայ ուսանողութեան միութեան տարեկան հաւաքումարում կարդացել ենք՝ «Թիւրքահայ խնդրի դիպլօմատիական դրութիւնը» վերնագրով մի դասախօսութիւն, որի մէջ մանաւորապէս քննել ու լուսաբանել ենք «Հայկական Հարցի» դիւանագիտական բնոյթը և նրա ներկայ վիճակը։

Ուրեմն մեր ներկայ աշխատութիւնը մի պատահական ու հապճեպ ձեռնարկ չէ ամենևին, այլ արդիւնք տարիների երկար ու բարակ՝ խորհրդածութեան, մտքերի որոճման։ Մենք ուշի ուշով քննել ու վերլուծել ենք ամեն մի քաղաքական երևոյթ, որը մերձաւոր կամ հեռաւոր կապ ու առնչութիւն ունի «Ցանկահայ Խնդրի» հետ։

Սակայն վերոյիշեալ դասախօսութիւնները կազմում են լոկ հաւաքօտակի ամփոփումը, կմախքը, գրեթէ կոնսպեկտը ներկայ գրքոյկի։ Այնտեղ թոյլ է արտայայտուած տեսակէտը, առաջնորդող տենդենցը, իսկ այստեղ—լրիւ չափերով։ Այնտեղ հեռաւոր նիւթը աւելի աղքատ է, փաստերն անբաւարար, մինչդեռ այստեղ աշխատել ենք հնար եղածին չափ բազմակողմանի լինել։

«Հայկական Հարց»—դա մեր նորագոյն իրականութեան ամենահիւանդոտ երևոյթներից մէկն է, որ տասնեակ տարիներ շարունակ սերունդներ զբաղեցրեց ռուսահայերիս մէջ։ Այդ համազգային խնդիր յայտարարուած «վիրաւոր դատը» կլանեց իր մշտատև բոցավառ խարոյկի մէջ լաւագոյն ոյժերը մեր հասարակութեան գրեթէ բոլոր խաւերից։ Հայ մանր ու խոշոր բուրժուական բովանդակ իդէօլոգիան՝ յանձինս իր գրական արտադրութիւնների—հրապարակախօսութեան, վիպասանութեան և բանաստեղծութեան—մի կողմից, ունևորի և չունևորի նիւթական զոհաբերութիւնը միւս կողմից, պրօլետարական-դեմօկրատական խաւերի բանւորի և գիւղացու, արհեստաւորի—ֆիզիքական-ռազմական ոյժերի անխնայ սպառումը երրորդ կողմից,—այդ բոլորի հաւաքական արդիւնքը դարձել է մեր մէջ կարծէք մի յաւիտենական սրբազան ողջակէզ, նուիրաբերած «Հայկական Հարց»՝ «Ցաճկահայ Խնդիր» կոչուած կուռքին։

Երևոյթը հասկանալի է՝ իր բնական սահմանների մէջ։ Եւ մենք չենք, որ պիտի զարմանանք, գովենք կամ պախարակենք անցածն ու կատարուածը և դեռ այժմ լինելիքը։ Սակայն ո՞րն է նոյն այդ երևոյթի բուն էութիւնն ու իմաստը, վախճանական ելքը, ի՞նչ բան է ինքը՝ «Համազգային դատ» անուանուած «Ցաճկահայ Խնդիրը»,—այդ բոլորի մանրազննին քննութիւնն ու պատասխանը տակաւին չի ենթարկուել մեր մէջ հրապարակական հաշուէկշռի։ Նացիոնալիստական տեսակէտով ու տենդենցիայով առաջնորդուող մրոտումները վաղուց արդէն բաւարարութիւն չեն տալիս նորագոյն նացիոնալիստին, փոքր՝ի շատէ խստապահանջ համազգայնականին անգամ, դրա մէջ մենք կասկած չունենք։

Իսկ մարքսիստական անալիզով, մատերիալիստական ըմբռնողութեամբ ու տեսակէտով չէ շօշա-

փուել «Հայկական Հարցը» իր ամենահեռաւոր սահմանների մէջ անդամ։ Ինչպէս հասարակական ընտանութիւն և մասսայական հմայք ունեցող շատ երևոյթներ մեր մէջ, այնպէս էլ «Ցաճկահայ Խնդիրը»՝ իրենց ծագումով, զարգացումով և պատմական մերձաւոր ու հեռաւոր տենդենցիաներով, դեռ չեն գնահատուել դասակարգային մասշտաբով, դեռ չեն մերկացուել նրանց դասակարգային սուր ու շեշտակի բնոյթը։

Մեր ձեռնարկը մի հիմնական փորձ է—առաջին փորձը—մարքսիստական տեսակէտով քննելու և լուսաբանելու «Հայկական Հարցի» միայն մի կողմը—նրա ամենաճակատագրական մասը՝ «Ցաճկահայ Խնդրի» քաղաքական բնաւորութիւնը, նրա և միջազգային դիպլոմատիայի փոխադարձ առընչութիւնը և այլն (տես «Ներածութիւն»)։

Եւ մենք անվերապահ խոստովանում ենք, որ մեր շօշափած խնդիրը կազմում է ամենաղժուար ու կնճռոտ մասը ամբողջ հարցի։ Ինքը քաղաքականութիւնը մի ճկուն արուեստ է։ Քաղաքական խնդիրներն ու երևոյթները—իրենց տնօրէնութեամբ և վախճանական ճակատագրով ենթակայ պետութիւնների հաւաքական դիպլոմատիային, քաղաքական խաղերին—կազմում են դրական մշտարժէք հիմքերից զուրկ մի առաձգական ու պրոբլեմատիկ դրութիւն։ Մեզ համար ամենակարևոր խնդիրը եղել է այստեղ՝ ճշգրտօրէն որոշել եւրոպական պետութիւնների ընթաց քաղաքականութեան պատմական տենդենցները Թիւրքիայում և դրանով լոյս սփռել «Հայկական Հարցի» քաղաքական եղած ու լինելիք ընդհանուր ճակատագրի վրայ։ Անկարելի է և կարիք էլ չունենք ամենայն ճշտութեամբ նախատեսնելու կամ գուշակելու թէ արդեօք ինչ դիրք կբռնէ այս կամ այն պետութիւնը ոչ հեռաւոր ապագայում դէպի «Ցաճկահայ Խնդիրը»։ Չէ՞ որ վերջին հանգամանքը՝ ժամանակի դիրքերը, հետեողա-

կանոնէն բղխում են նրանց իրական-կենսական շահերի ըմբռնում քաղաքականութիւնից, պատմական ձգտումներից, որոնց ընդհանուր պատկերը ուրուագծել ենք մենք ըստ հնարաւորին ճիշտ եզրների մէջ։

Մեր թեմայի մէջ աշխատել ենք բաւարարութիւն տալ երկու հիմնական հարցերի. նախ՝ ի՞նչ եղաւ և ինչո՞ւ այդպէս եղաւ «Հայկական Հարցի» քաղաքական վիճակը. և երկրորդ՝ ինչ վախճանական ելք կունենայ նա ապագայում։ Առաջինը—համեմատաբար դիւրին և կարևոր բաժինը—կազմում է մեր այսպէս ասած բացասական քննադատութիւնը (նեգատիւ կրիտիկան), ուղղած այն կազմակերպութեան գործունէութեան ու հասկացողութեան դէմ, որ համարում է հայկական հարցի ու շարժման պատմական ներկայացուցիչը։ Երկրորդի—անհամեմատ դժուար ու պրոբլեմատիկ բաժնի—մէջ պիտի համառօտաբար ուրուագծենք այն հաւանական դրական հիմքերը, որոնց վրայ պիտի յանգէ «Ցաճկահայ Խնդրի» վախճանական ելքը՝ մասնաւորապէս, և Թիւրքիայի ապագան՝ ընդհանրապէս։

ՀԵՂԻՆԱԿԸ

ՏԱՃԿԱՀԱՅ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՊԼՈՄԱՏԻԱՆ

I.

Ներածութիւն

Քաղաքական խնդիրների և հասարակական երևոյթների երբակի բնոյթը։—Հայկական հարցի երեք կողմերը։—Մեր թեման և նրա ծաւալը։—Հայ յեղափոխականների վերաբերմունքը դէպի իրենց հակառակորդները։—Մեր հակառակորդների քաղաքագիտական մտածողութեան հորիզոնը։

—

Իւրաքանչիւր քաղաքական խնդիր՝ իր յեղափոխական բնաւորութեամբ, ամեն մի հասարակական երևոյթ՝ իր մասսայական ծաւալով ու գործնական արտայայտութեամբ, ունի հետազօտութեան և քննութեան երեք կողմ։ Նախ՝ այդ խնդրի կամ երևոյթի պատմական ծագումը, ծագման պատճառները, նրա աստիճանական զարգացումը և մասսայական ծաւալ ու հասարակական արժէք ստանալը։ Երկրորդ՝ այն առաջ-մղիչ ֆակտորները, որոնք տոն են տալիս ու հասունացնում այդ խնդիրը կամ երևոյթը. այն մասսայական կազմակերպութիւնը, որի գոյութեան իմաստն է՝ նվիրուել այդ խնդրին, դնել նրան կենդանի շարժման մէջ, դարձնել քաղաքական հրատապ, հերթական հարց և փութացնել դրա լուծումը։ Վերջապէս երրորդ կողմը կազմում է հէնց այդ խնդրի լուծման մեթոդը, եղանակը, վախճանական իրականացման միջոցն ու ճանապարհը, որով ձգտում է գործող կազմակերպութիւնը հասնել իր ընտրած իդէալին։

ը պարզելուց յետոյ, առաջարկել յեղափոխական կուսակցութիւններին՝ կամ աւելի որոշակի՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, դրական ծրագրեր, այսպէս անուանուած ծրագրային ըէցեպտներ, ապագայ անելիքի և ինչ եղանակով գործելու մասին։

Այս շեշտումներն ու նախազգուշացումները աւելի քան կարեւոր են հէնց սկզբում, նախաբանի մէջ, որպէսզի ապագայում մենք պարտաւորուած չզգանք ընթերցողի, մանաւանդ քննադատաբար տրամադրուած ընթերցողի, անտեղի պահանջների առաջ։

Ինչ ասել կուզի, որ մենք կրիտիկաբար և վերլուծաբար շօշափելով մի յայտնի քաղաքական խնդրի և միջազգային դիւանագիտութեան փոխադարձ յարաբերութիւնները, հարկադրուած ենք անհրաժեշտօրէն ծանրանալ այդ նոյն դիւանագիտութեանը տոն տուող եւրօպական մեծ պետութիւնների տնտեսական շահերի և քաղաքական ինտերեսների հաւասարակշռութեան վրայ սուլթանի երկրում։ Ցոյց տալով թիւրքահայ խնդրի լուծման մեթոդական բնաւորութիւնը, պիտի ապացուցանենք նրա լուծման անկարելիութիւնը՝ արդի քաղաքական պայմանների և պետութիւնների դիպլոմատիական յարաբերութիւնների դասաւորութեան շրջանում։ Մենք պիտի ապացուցել ջանանք, որ ոչ միայն տարերային հոսանքին բնազդաբար կուլ գնացած մասսայական խաւերը, հայդուկային խմբերը, այլև իրենք՝ թիւրքահայ յեղափոխութեան առաջաւոր ու ղեկավար ոյժերը, տասնեակ տարիներ շարունակ յուսախաբութեան մէջ էին մաշում իրանց կեանքը, մխիթարում, խրախոյս ու կենսունակութեան ոյժ ստանում սենտիմենտալ ու հրաբորբոք զգացմունքներից, օտար երկրների մարդասիրական կոչ ու աղաղակներից, զուրկ միանգամայն քաղաքական հորիզոնի անողոք ու բարդուած իրողութիւնները խոր, լուրջ ու անալիզօրէն, օբիեկտիւ կերպով կշռադատելու շրջահայեցողութիւնից։

Միշտ և ամեն դէպքում մի անախորժ հակառակորդ, մի անհաշտ թշնամի է համարւել հայ յեղափոխական-դաշնակցական իդէօլօգների աչքում նա, ով յանդգնել է առհասարակ կրիտիկաբար վերաբերւելու դէպի թիւրքահայ յեղափոխական շարժումը, ով կասկածել է այդ գորդեան հանգոյցի բարեյաջող լուծման նկատմամբ մինչև աննախատեսնելի ապագայ։ Տաճկահայ յեղափոխութեան իդէօլօգները բնաւ տարբերութիւն չեն դնում և բարոյական նախատինքի ու յանդիմանութեան միևնոյն մակդիրներով են որակում անխտիր այն բոլորին, որոնք հազար ու մի տարբեր, հակասական մօտիւներից դրդւած թշնամական կամ ժխտական դիրք են բռնում դէպի թիւրքահայ յեղափոխականների գործունէութիւնը՝ աւելի ճիշտ գործնէութեան եղանակը, մեթօդը։ Լինի դժգոհն ու բողոքողը, մերկացնողն ու քննադատը հաստատող բուրժուայ թէ գիւղացի, ինտելիգենտ թէ բանւոր, հոգեւորական թէ արհեստաւոր —սուբիէկտիվիստ թէ օբիեկտիվիստ, իդէալիստ թէ մատերիալիստ, բուրժուական թէ պրօլետարական իդէօլոգ և այլն, և այլն,—այդ միևնոյն է արդէն. Դաշնակցութեան գաղափարական ղեկավարները ունին այդ բոլորի հանդէպ լոկ մի չափած ձևած պատասխան, մի մեղադրական ակտ—դուք հակայեղափոխական, ազգադաւ և ապիկար մարդիկ էք, որ յանդգնում էք սրբապղծել այն սրբութեան սրբոցը, որ կառուցել է հարիւր հազարաւոր անմեղ հայ նահատակների արեան շաղախով։ Դուք բոլորդ դատում էք խնդիրը և հասկանում երևոյթը սոսկ «ամբոխային տրամաբանութեամբ», ուրիշ ոչինչ—սերտած կրկնում են նրանք ամենալաւ դէպքում իրենց հռչակաւոր պարագլխի յայտնի ֆրազը։

Եւ սակայն, այդօրինակ ինքնախաբ ու խուսափողական պատասխաններով և անփոյթ վերաբերմունքով, իրերի բնական ընթացքը մազաչափ անգամ ոչ

ղովրդի կամ մի քանի ժողովուրդների կիսանկախ կամ ամբողջական ազատագրումը տիրող բռնակալ ռէժիմի լծից, քաղաքական սպանիչ ազդեցութիւնից։ Որոնք են այն գրաւական միջոցները, որոնց ապաւինած Թիւրքիայի դարաւոր բարբարոսութիւնների անխնայ ու անպաշտպան ենթակայ ազգութիւնները՝ կարող են առաջ վարել իրենց ճակատագրական կռիւը և յանգել հետեւողական վախճանի։

Կամ պիտի ընդունել նախ այն, որ բռնակալութեան լուծը թօթափող ապստամբ ժողովուրդը թուլացնում է իր մահացու թշնամուն, ջախջախում նրա գերազանց ոյժը, յաղթում նրան և այդպէս ազատւում. երկրորդ կամ այն, որ իշխող մարմինը՝ տիրապետող դինաստիան, «մարդասիրաբար», ասենք թէ «դիւանագիտաբար» ազատութիւն է շնորհում իր այս կամ այն հպատակ ժողովրդին, երբ վերջինս չի ուզում այլ ևս մնալ պետութեան շրջանակում, կամ թէ չէ երրորդ՝ պիտի ընդունել, որ մի երրորդ ոյժ, մի միջին մարմին ինչ-ինչ մօտիւներից դրդւած միջամտում է ճնշողին ու ճնշուողին և դիւրացնում վերջինիս ապստամբութեան յաջող ելքը, աջակցում նրա ազատագրութեան։

Թէ առաջինը և թէ երկրորդը այնպիսի ուտոպիական միջոցներ են, որոնցով չի ազատւել և երբէք չի կարող ազատւել որև է տաճկահպատակ ժողովուրդ։ Երրորդ ճանապարհը, ընդհակառակը, կազմում է ամենարէալականը և մինչև օրս միակ հնարաւոր միջոցը, որով ազատւել են և՛ Յունաստանը, և՛ Ռումինիան, և՛ Սերբիան, և՛ Զերնոգորիան, և՛ Բոսնիան ու Հերցեգովինան, և՛ Բոլգարիան, և՛ Կրետէն։ Այդ բոլոր երկրները ազատւել են ոչ թէ գլխաւորապէս այն պատճառով, որ նրանք ապստամբել, յեղափոխական անսնման հերոսութիւններ են ցոյց տւել, այլ հիմնապէս այն պատճառով, որովհետև նրանցից մէկի թէ միւսի ազատութիւնը եղել արդիւնք եւրոպական պետութիւնների հա-

ւաքական միջամտութեան, մի կամ մի քանի պետութիւնների ասնակի ինիցիատիվի։ Ի՞նչ պիտի անէին հելլեններն ու սլաւոնները քաջամարտիկ գնդերը տաճկական զերաքանակ բանակի ռազմական հզօր ոյժի առաջ, եթէ դիւանագիտական խաղերը վճռականապէս չտնօրինէին իրերի ընթացքը։ Ապատամբական փորձերը լոկ մի խթան ու զարկ էին, արագացնելու իրերի ընթացքի տնօրինումը, լոկ մի առիթ է՝ միջամտութեան հարկադրելու պետութիւնների պաշտօնական ներկայացուցիչներին։ Սակայն հաւաքական միջամտութիւն ոչ ամեն դէպքում, երբ հրապարակ է նետւում բռնակալութեան ճիրաններում հեծող այս կամ այն ժողովուրդը իր արիւնլայ դեմքով, այլ ակտիւ ու վճռական միջամտութիւն միայն այն ժամանակ, երբ յարուցած խնդրի դրական լուծումով շահագրգռւած են պետութիւնները տնտեսապէս և քաղաքականապէս, եթէ դիւանագիտական ընդհանուր կոմբինացիաները նպաստաւոր դրութիւն են ստեղծում հարցի բարեյաջող լուծման համար. եթէ, ամենաանբարեպատեհ դէպքում, այս կամ այն թիւրքահպատակ ժողովրդի ազատութիւնը կամ անջատումը Թիւրքիայից, չի շոշափում լիազօր պետութիւններից մէկի կամ մի քանիսի շահերը։

Այս ընդհանուր դիտողութիւնները աւելի քան կարևոր էին մեզ համար, որպէսզի կարողանայինք պարզ ու ճշգրիտ կերպով պատկերացնել այն ընդհանուր խճճւած դրութիւնը, որ ունի տաճկահայ խնդիրը. այն, եթէ ուզում էք՝ բացառիկ վիճակը, որ անկարելի է դարձնում հայկական հարցի բարեյաջող լուծումը։

Շուտով կլրանայ 30 տարին սկսած այն օրից (1878 թ. Բերլինի կոնգրես), երբ «Արևելեան խնդրի» մի փոքրիկ հատւածը, «Հայկական Հարց» ասածդ, կընքւեց միջազգային դիւանագիտութեան աւազանում 61-րդ չարաբաստիկ յօդւածով և սանկցիա ստացաւ մեծ պետութիւններից։ Մօտ 28 տարի է, որ մի բուն

ճնշած ժողովուրդ սրտատրոփ և լի յոյսերով աչք է տնկել Եւրոպական պետութիւնների հաւաքական միջամտութեան վրայ. հանդիսաւոր խոստումների, մըշակուած ըէֆորմների իրագործում է սպասում պաշտօնական Եւրոպայից։ 28 երկարաձիգ տարիների խռովայոյզ ժամանակամիջոցում տաճիկ կառավարութեան անհամար խաբեբայութիւնները և այդ բոլորի վերաբերմամբ պաշտօնական Եւրոպայի սառնասիրտ, անտարբեր վերաբերմունքն ու լռութիւնը կարծես փաստապէս անզօր են թւում համոզելու հայ յեղափոխական կազմակերպութիւններին—ասա և գրիր՝ Դաշնակցութեան—իրենց կատարեալ յուսախաբութեան մէջ։

Տաճկահայ ժողովուրդը կազմում է մէկը այն բաղդակից ժողովուրդներից, որոնք ամբողջ դար շարունակ ողողեցին Բալկանների բարձունքները իրենց արիւնով։ Եւ տաճկահայ խնդիրը կազմում է մի դժբաղդակնճիռ օղակը այն բարդ ու առաձգական խնդրի, որ կնքուեց «Արևելեան Հարց» յայտնի պատմական անունով։ Ինչպէս հելլէնների և սլաւոնների ազատագրութիւնն էր, այնպէս էլ հայերի ազատագրական ձգտումների յաջող ելքը կախուած է միևնոյն կարուկ միջոցից. և ինչպէս «Արևելեան Հարցի» արդէն իսկ լուծուած հատուածները, այնպէս էլ «Հայկական Հարցը» (նաև մակեդոնականը) ունի լուծման միուրոյն, եզակի ու բացառաբիկ մեթոդը,—դա եւրոպական վեց մեծ պետութիւնների կամ նրանց մեծագոյն մասի, կամ առնուազը նրանցից երեքի, սակայն ամենաազդեցիկների հաւաքական միջամտութիւնն է դիւանագիտական միևնոյն համերաշխ, անհակասական պլատֆորմի վրայ։

Եւ հայ յեղափոխական շարժումների բուռն տենչանքը, Դաշնակցութեան ամենամեծ մտազբաղ հոգսը ուղղուած է եղել դէպի այդ նպատակը, ընթացել է բացառապէս լուծման այդ մեթոդի—դիւանագիտական ճանապարհի—ուղղութեամբ։

«Ինչ է մեր շարժման նպատակը»—ասում է Դաշնակցութեան պարագլուխը։—«Ուրիշ ոչինչ, եթէ ոչ կազմակերպված ու բռնի ուժով կուել, բողոքել, Տաճկաստանում տիրող սպանիչ կարգերի դէմ, մինչև որ վեց պետութիւնների երաշխաւորված միջամտութեամբ այդ կարգերը դէպի լաւը կփոխուեն [1])»։ Մի ուրիշ վկայութիւն. «...Պարզ է, որ եւրոպական միջամտութիւն առաջ բերելու համար, եթէ մի կողմից անհրաժեշտ էր տառապող հայ երկրի բողոքը թէկուզ յուսահատական ճիգերով լսելի դարձնել մարդկութեանը, նոյնքան անհրաժեշտ էր եւրոպական հասարակական կարծիքը գիտակից պահել, յուզել, աղմկել և այդպիսով անդրադառնալ միջազգային քաղաքականութեան վրայ յօդուտ հայկական դատի»—ասում է «Ցառաջի» առաջնորդողը [2]։ Մի երրորդ վկայութիւն. «Դաշնակցութիւնը գիտէ—ասում է Ego-ն,—որ իրական միջամտութիւն հրաւիրելու և զորդեան հանգոյցը լուծելու (նօարգիրը մերն է) համար՝ անհրաժեշտ են այլ կարգի ձեռնարկներ (իմա, յեղափոխական շարժում, Բ. Ի.)։ Եւ ահա, դժբաղդաբար, փաստերը գալիս են ամրապնդելու այդ համոզումը» [3])։

Ինչպէս տեսնում ենք, Դաշնակցութեան իդէօլոգների վկայութիւնները, միաբերան հաստատում են, որ նրանց տասնեակ տարիների երկուստեք ուղղութեամբ—յեղափոխական և քաղաքագիտական պրօպագանդայի ճանապարհով առաջ տարած գործունէութիւնը ունեցել է միայն և բացառապէս մի նպատակ՝ հրաւիրել եւրոպական մեծ պետութիւնների ուշադրութիւնը, հարկադրել նրանց՝ իրենց խոստման ու տանձնած պարտա-

---

1) Քր. Միքայէլեան, «Ամբոխային տրամաբանութիւն» եր. 37—38։

2) Տես «Ցառաջ» № 23, առաջնորդող։

3) Ego «Գորդեան հանգոյցը» («Ցառաջ» № 53)։

կանութեան համաձայն, ազատելու տաճկահային իր աղիողորմ վիճակից, իրագործելու գէթ համեստ բէֆորմների մի ծրագիր՝ նրա թշուառ կեանքը բարելաւելու, յառաջադիմութեան նորմալ ճանապարհի վրայ դնելու համար։ Ուրիշ խօսքով տաճկահայ յեղափոխութիւն ասածդ՝ իրերի բնական բերմունքով և այդ իրերի պատմական դասաւորութեամբ, ինքնին չէ հանդիսանում ազատագրութեան ուղղակի ճանապարհը, քաղաքական խնդրի լուծման անմիջական մեթոդը, այլ նա դառնում է մի ուժեղ խթան, մի առիթաւոր միջոց՝ տաճկահայ դատը նոր ու թարմ ելեմէնտներով յարուցանելու եւրոպական Լիազօրների դիպլոմատիական կաբինետներում և փութացնելու նրա պատմական լուծումը։

Թէ ո՞րն է տաճկահայ յեղափոխութեան այն ոյժը, որ իրը խիզախութիւն կունենան հարկադրել եւրոպական պետութիւններին դրական կամ բացասական ուղղութեամբ հաւաքական միջամտութեան դիմելու. թէ ո՞րն է Դաշնակցութեան ունեցած դիւանագիտական-պրօպագանդիստական գործունէութեան էութիւնն ու արժէքը՝ արևմտեան Եւրոպայում, յոգուտ հայկական հարցի—դրանց մասին մեր բացասական-քննադատական խօսքը կասենք իրենց տեղին ու ժամանակին։

Այստեղ հարցնենք ամենից առաջ, արդեօք ո՞ր դէպքում կարող է յաջողութեամբ գլուխ գալ եւրոպական պետութիւնների հաւաքական միջամտութիւնը և դրական իմաստով լուծել «Արևելեան Խնդրի» որև է դեռ անլուծելի հատուածը, մանաւանդ «Հայկական Հարցը»։ Որո՞նք են այն հնարաւոր շանսերը, այն ուժեղ ու անխաղտ դրաւականը, որոնք անխուսափելիօրէն կհարկադրեն միջազգային դիւանագիտութեան կոնցերտում պատմա-քաղաքական հեգեմոնիան ստանձնած պետութիւններին՝ ձեռներեց լինելու տաճկահայ խնդրի բարեյաջող կամ գէթ համեստ-բաւարար լուծման. կրս-

տիպին նրանց փոխելու քաղաքական յարաբերութիւնների քարացած կշռաչափը՝ status quo-ն։

Դա կարող է լինել միայն այն ժամանակ, երբ ինքը՝ պաշտօնական Եւրոպան կենսապէս շահագրգռուած լինի տուած հարցի լուծումով. միայն այն դէպքում, եթէ մեծ պետութիւնները ունենան տնտեսական և քաղաքական բէալ ինտերեսներ այն միջավայրում, ուր հարկադրական պահանջ կայ սահմանելու մանր ազգերի քաղաքական ճակատագիրը։ Իրենք՝ Դաշնակցութեան վերամբարձ իդէօլոգներն իսկ, մինչ Հէգելեան աստիճան իդէալիստները համարձակութիւն չունեն ուրանալու այդ տարրական իրողութիւնը, արտասոց փաստը։ «Շահի փիլիսոփայութիւնը բէալական քաղաքականութեան հիմնաքարն է»—իդէալիստ պ. Ego-ն սխալւում է երբեմն մի-մի հատիկ ճշմարտութիւն խոստովանելու։

Սակայն Թիւրքիան այն երկիրն է, ուր կարելի լինի գտնել Եւրոպայի տնտեսական շահերի և քաղաքական ձգտումների մի ընդհանուր համերաշխութիւն յօգուտ տաճկահայ խնդրի, տեսնենք այդ։

1007/33625
948 - 90

III

Եւրոպայի շահերը Թիւրքիայում

Տաճկաստանը որպէս մի շահագրգիռ օբիեկտ։—Եւրոպական մեծ պետութիւնների քաղաքական և տնտեսական-ֆինանսական շահերը Թիւրքիայում։—Թիւրքիայի պետական պարտքերը։—Երկաթուղային գծերի կառուցումը։—Գերմանիայի նուաճումները։—Թիւրքիան, որպէս ներմուծման և արտահանութեան շուկայ։—Դիպլոմատի և կապիտալիստի ապահով յոյսերը։—Շահը և դիպլոմատիան։

—

Ում համար միանգամ ընդմիշտ պարզ է, թէ առհասարակ ինչ տեղ է բռնում Թիւրքիան եւրոպական պետութիւնների քաղաքական-դիւանագիտական կոնցերտում. ում համար ակներև է, թէ իսլամական ինդոլենց մարմինը՝ իր եւրոպական և ասիական բաժիններով, որ աստիճան շահագրգիռ օբիեկտ է կազմում եւրոպական առաջաւոր պետութիւնների տնտեսական-քաղաքական շահերի տեսակէտից. նրա համար, ասում ենք, մութ ու դժւար չէ, գտնել այն հարցի պատասխանը, թէ ի՞նչ է նշանակում առհասարակ գործ ունենալ Թիւրքիայի հետ և, որ բնականօրէն հետևում է դրանից՝ ի՞նչ է նշանակում յոյս դնել եւրոպական դիպլոմատիայի վրայ, սպասել վճռական առաջխաղացում յօգուտ «Արևելեան Խնդրի» կամ նրա մի հատուածը կազմող «Հայկական Հարցի»։ Նորանոր բարդւող փաստերը ցոյց են տալիս, որ Թիւրքիան ներկայ շրջանում եւրոպական մեծ պետութիւններից մէկի, մի քանիսի և կամ բոլորի վերաբերմամբ այն չէ, ինչ նա մինչև 19-րդ դարու 70—80-ական թուականներին էր ներկայացնում։ Առաջներում ամենևին օտարօտի չէր, նկատել որև է պետութեան կողմից մասնակի առաջխաղացում և ինքնուրոյն քայլ նոյն իսկ այնպիսի խնդիրների վերաբերմամբ, որոնք անմիջապէս չէին շօշափում նրա քաղաքական շահերը։ Այդ մասնաւոր

ինիցիատիվի շնորհիւ էր նաև մեծ մասամբ Բալկանեան ազգութիւնների ազատութիւնը։ Սկսած ուղիղ այն օրից, սակայն, երբ մեծ պետութիւններից իւրաքանչիւրի դիրքն ու յարաբերութիւնը Թիւրքիայի նկատմամբ որոշ բնաւորութիւն ստացան, ինքնուրոյն քայլն ու մասնակի ինիցիատիվը տեղի է տուել մեծ պետութիւնների այսպէս ասած՝ հաւաքական միջամտութեան [4]։ Բայց հաւաքական միջամտութիւն այն որակի, որ պետութիւնների շահերը փոխադարձաբար յարգելով հանդերձ, անզօր է միևնոյն ժամանակ իրենց շահերը չշօշափող խնդիրների վերաբերմամբ վճռական քայլ անելու, այլ միայն բաւականանում է երկար ու բարակ, անգրաւական ու խաբուսիկ խոստումներով։ Զօրեղ պետութիւնների շահագրգիռ ինտերեսները իրար դէմ են ելնում Թիւրքիայում այնպիսի մեծ թափով, որ բացարձակապէս անկարող է նրանից մէկն ու մէկը առանձնապէս մի նշանաւոր խնդիր լուծելու իրաւական հիմք եւ փաստական ոյժ ու քաջութիւն ունենայ։ Հէնց այդ է պատճառը, որ այժմ սիստեմատիկաբար կոտորածի ենթակայ սլաւոնները ու հայերը գրեթէ ոչ մի ուշադրութեան չեն արժանանում պաշտօնական Եւրոպայի կողմից։

Եւրոպական շահերի փոխադարձ համերաշխութիւնը միայն քաղաքական հորիզոնում չենք գտնում, այլ նաև խորապէս տնտեսական-ֆինանսական սահմանում, ուր ամէն բան զաւթում են եւրոպական կապիտալն ու կապիտալիստը։ Մեծ պետութիւնների ակընյայտնի բարեկամութիւնը Թիւրք կառավարութեան հետ, զօրեղ կերպով աճում է Թրքական պետական պարտքերի ղեկավարութեան տակտով։ Դեռ 1881 թ.

---

[4]) Ֆրանսիական դիպլոմատ Մ. դը Ֆոգէ ասել է մի անգամ իրաւամբ. «Հէնց միայն հաւաքական միջամտութիւն խօսքերը բաւական են, որ Թիւրքային հանգիստ շնորհենք»։

դեկտեմբեր ամսին թիւրք կառավարութիւնը իր մի դեկրետով հաստատում է «Օսմանեան պետական պարտքերի վարչական մարմինը» («Administration de la Dette Publique Ottomane»), բաղկացած է մի թիւրք և հինգ օտար շահերի ներկայացուցիչներից։ Այդ հաստատութիւնը ունեցաւ եւրոպական ֆինանսական աշխարհի վրայ փառաւոր ազդեցութիւն, որովհետև Բ. Դուռը պետական պարտքերի դեկավարութիւնը և այդ պարտքերը հոգալու եկամտի աղբիւրները յանձնեց մի վարչական բոլորովին անկախ օրգանի և այդ միջոցով ապահովեց եւրոպական կապիտալը։ Այնպէս որ արևմտեան Եւրոպայի դիպլոմատն ու կապիտալիստը հնարաւորութիւն ունեն հակառակ դէպքում իրենց բաց թողած խոշոր գումարների համար «Պաշտօնական Թիւրքիան» ձեռք առնել։

Մի փոքրիկ գաղափար տալու համար, թէ պարտքերի ինչ ահագին բեռ է ծանրացած Թիւրքիայի շլինքին, առաջ բերենք մի համառօտ վիճակագրութիւն, հաշուած թրքական պետական պարտքերի վարչութեան ցուցմունքների։ Այդ խոշոր գումարումները բաժանւում են հետևեալ երկրների վրայ. Ֆրանսիա—315 միլլիոն ռուբլի (35 միլլ. թրքական ֆունտ ստերլինգ), Բելգիա—126 միլ. ռ. (12 միլ. ֆ. ստ.), Գերմանիա—85,5 միլ. ռ. (9,5 միլ. ֆ. ստ.), Անգլիա—76,5 միլ. ռ. (8,5 միլ. ֆ. ստ.), Թիւրքիայի բանկային հաստատութիւն—45 միլ. ռ. (5 միլ. ֆ. ստ.), Հոլանդիա—31 միլ. ռ. (3,5 միլ. ֆ. ստ.), Աւստրիա—13,5 միլ. ռ. (1,5 միլ. ֆ. ստ.), Իտալիա—9 միլ. ռ. (1 միլ. ֆ. ստ.), Ընդամենը կազմում է 702 միլլիոն ռ. (78 միլ. ֆ. ստ.) պարտք [5]։ Երևակայեցէք, մի երկիր, ուր պաշտօնեան, գիւղացիականը շարունակ բողոքում են իրենց անկանոն թոշակի համար, ուր ժասսայական մղձա-

---

[5]) Տես «Neue Zeit» «Die sozial-ökonomische Lage der Türkei» von Milorad Popowitsch (1902 թ. № 26)։

ւանջի ենթակայ սովալուկ ժողովրդական տարրերը քմահաճ հարկային սիստեմի և բռնագրաւիկ կողոպուտի զարհուրելի ծանրութեան տակ քամում, ոզում է իր վերջին կենսունակութիւնը, բաւական չէ, դեռ ենթակայ է օտար կապիտալի այդօրինակ խոշոր պարտքերի։

Տնտեսական-կապիտալիստական մի այլ փառաւոր ասպարէզ է բացել եւրոպական կապիտալիստների համար Թիւրքիայի այն սահմանում, ուր երկաթուղային գծեր կառուցանելու համար կազմակերպած օտարազգի ակցիոներական ընկերութիւնների (ընդամէնը 223 միլիոն բուբլի դրամագլխով) խոշոր կապիտալը թիւրք կառավարութիւնից ապահովում է մեծամեծ տոկոսներով։ Միայն 1899 թ. թիւրք կառավարութիւնը վճարել է երկաթուղային ընկերութիւններին 19,871,682 ֆրանկ։ Տնտեսական-առևտրական տեսակէտից յատկապէս շահագրգռել է վերջերս Գերմանիան։ Թիւրքիան այն երկիրն է Գերմանիայի համար, ուր ներմուծւում է Գերմանական կապիտալը և նպաստաւոր շահեցնում։ Գերմանիային յաջողել է, միւս կողմից, Թիւրքիայի զինուորների և պատերազմական նաւերի համար կարևոր պաշարեղէնի և նիւթերի մեծագոյն մասը ինքը հոգալու։ Երկաթուղային գծերի և հեռագրական թելերի կառուցումը կատարւում է մեծ մասամբ գերմանական կապիտալիստների միջոցով։ Մինչև վերջին ժամանակներս շաքարի ներմուծումը դէպի Թիւրքիա, կատարւում էր գրեթէ բացառապէս Աւստրիայից և Ռուսաստանից։ Այժմ Գերմանիային յաջողել է Թիւրքիայի շաքարի շուկայում բաւական ուժեղ տեղ գրաւել։

Կարիք կա՞յ արդեօք երկար բացատրութիւններով և փաստական-վիճակագրական տեղեկութիւններով ապացուցել ու հաստատել, թէ ինչ շահագրգիռ օբիեկտ է ներկայացնում Թիւրքիան Եւրոպայի համար։ Մթթէ

պարզ չէ բոլորիս համար, որ մերձաւոր Արևելքը՝ ինքը Թիւրքիան, կազմում է մի նմանը չտեսնուած մրցարան այն քաղաքական ազդեցութիւնների և տնտեսական դրաւումների ու շահատակութիւնների, որ ունեն եւրոպական պետութիւնները։ Թիւրքիան մի առաջին կարգի շուկայ է իր միլիոնաւոր սպառող ազգաբնակութեամբ այն ինդուստրիական արդիւնքների համար, որոնք ներմուծւում են այդ տեղ կապիտալիստական Եւրոպայից։ Թիւրքիան հում նիւթերի մի բերրի միջնավայր է, որի անբաւ հարստութիւնները արտահանում են եւրոպական ազգերը և իրենց հայրենիքում շահագործում նորագոյն տեխնիկայի կատարելագործուած միջոցներով։ Թիւրքիան, վերջապէս, մի ամուր յենակէտ, մի անխախտ խարիսխ է այն քաղաքական հակընդդէմ շարժումների ու մրցող ձգտումների համար, որ ունեն վեց մեծ պետութիւնները, մանաւանդ նրանցից մի քանիսը։

Նշանակում է, երբ եւրոպական դիպլոմատն ու կապիտալիստը Թիւրքիայում գործ դրած իրենց քաղաքական և տնտեսական-ֆինանսական ջանքերի համար փառաւոր կերպով վարձատրւում են կամ վարձատրւելու գեղեցիկ ու ապահով յոյսեր ունեն, ինչպէս օսմանեան կառավարութեան թշնամի հանդիսանան, ընդդէմ գնան նրա քաղաքական շահերին որևէ միջանկեալ խնդրի համար։ Ինչպէս «Մեծ Մարդասպանը» սարսափէ, դողայ իր արիւնահեղ կոտորածների համար, երբ նա մի անգամ ընդմիշտ լաւ է ըմբռնել եւրոպական պետութիւնների հաւաքական միջամտութեան էութիւնը, տեսական ընթացքը և անվնաս սաստկութիւնը։ Կարիք կա՞յ արդեօք առանձնապէս յիշելու, որ Թիւրք կառավարութիւնը մի քանի կէտերում նոյն իսկ շատ ընդունակ է եւրոպականանալու արդի ժամով. այսինքն նա շատ լաւ է ճանաչում, քան գուցէ որև է մէկը, արդի կաշառատութեան բոլոր միջոցները, որպէսզի դրանով թէ

եւրոպական մամուլի [6]) և թէ ամենագեղեցիկ դիպլոմատների բարեկամութիւնը վաստակել կարողանայ։

Սրանք են ահա տնտեսական-ֆինանսական և քաղաքական բացէ ի բաց թէ ինտիմ յարաբերութիւնները, որոնք գտնուում են եւրոպական հզօր պետութիւնների և տկար ու մնանկացած Թիւրքիայի միջև։ Ընդունում ենք այս յարաբերութիւնները իրենց ճշգրիտ և իրական եզրների մէջ, ապա ուրեմն երբէք չպիտի սխալուենք, եթէ դրանից հետևցնենք, որ եւրոպական ցինիկ դիպլոմատիան ամենևին վճռական քայլ չէ անելու, արմատական ըէֆորմների շուտափոյթ իրագործում չէ պահանջելու որևէ թրքահպատակ սրախոխող ժողովրդի համար, գոնէ մինչև անքան ժամանակ, որքան նա պարտքերի տոկոսներով և ակցիոներական երաշխաւորութեամբ շաղկապուած է Թիւրքիայի հետ։

Շահը՝ տնտեսական թէ քաղաքական բնաւորութեամբ, կազմում է այն իրական հիմնաքարը, այն ըէալ խարիսխը, բազիսը, որի վրայ ամուր յենուում է այս կամ այն պետութեան պատմական քաղաքականութիւնը, դասաւորում են նրա դիպլոմատիական յարաբերութիւնները։ Համառօտ և ընդհանուր գծերով ցոյց տալով այն տնտեսական-քաղաքական լայն հորիզոնը, որի վրայ ուժեղ մրցակցութեան են դուրս գալիս եւրոպական լիազօր պետութիւնները, անհրաժեշտ է մեզ համար, այնուհետև իմանալ թէ ո՞րն է այն ընդհանուր դիպլոմատիան, որ ունեն, մի կողմից՝ եւրոպական պետութիւնները իրար մէջ և միւս կողմից նրանք բոլորը միասին վերցրած՝ Թիւրքիայի նկատմամբ առ-

---

[6]) Թերևս այժմ մոռացած լինեն այն կարիկատուրաները, որոնք Սասունի կոտորածի ժամանակ լոյս էին տեսնում Փարիզի ամենաապականած թերթերից մէկի («Petit Journal»)-ի մէջ, որ ցոյց էր տալիս, թէ իբր Թիւրքերն են հայերից կոտորուում, գոհ տալիս։ Այդ իրողութեան կեղծիքը գիտէր անշուշտ մամուլի ղեկավարը։

հասարակ և «Արևելեան Խնդրի»—մանաւանդ «Հայկական Հարցի»—վերաբերմամբ մասնաւորապէս։ Միայն ընդհանուր պօզիցիաների ճիշտ ըմբռնողութիւնից ու բնորոշումից է, որ մենք կարող ենք և հնարաւոր է «Հայկական Հարցի» նկատմամբ հանել ճշգրիտ ֆացիտ, անմիջական ու որոշ հետևանք։

IV.

Պետութիւնների դիպլոմատիան եւ Թիւրքիան

«Արևելեան հարցի» վիրաւոր կողմերը։—Եւրոպական դիպլոմատիան Բերլինի կոնգրեսից առաջ։—Պաշտօնական հովանաւորութեան շրջանը։—Դիւանագիտութիւնը 1878 թ.-ից յետոյ։—Թիւրքիան՝ դիալեկտիկական հակասութեան մէջ։—Պետութիւնների իրական և պաշտօնական քաղաքականութիւնը։—Մարքսի կարծիքը։—Թիւրքիայի երկսայրի քաղաքականութիւնը։—Լոկ խոստումների արտաքին միսիան և իրական ներքին միսիան։

—

«Չկայ բացարձակապէս միջազգային քաղաքականութեան մի սահման, ուր եւրոպական դիպլոմատիան այն աստիճան անընդունակ (նօտրագիրը մերն է) եղած լինի, ինչպէս Արևելեան խնդիրն է»[7])—ասում է Ֆրանց Մերինգը։

Անպայման ճիշտ է Մերինգի այդ խօսքերի հիմնական միտքը։ Սակայն մենք աւելի շուտ կասէինք հետևեալը. չկայ միջազգային դիւանագիտութեան ողջ կոնցերտում մի այն աստիճան վիրաւոր ու հանդու-

---

[7]) Fr Mehring «Eine Wunderkur» («Neue Zeit» XX տարի, 2 հատ. եր. 485)։

ցաւոր կէտ, մի այնպիսի դժուարակնճիռ խնդիր, ինչպիսին ներկայացնում է մերձաւոր արևելքի հարցը՝ պայմանաւորուած Թիւրքիայի գոյութեամբ, որպէս այդպիսին։ Մի հարց, որ մեխել, կաշկանդել է դիւանագիտական յարաբերութիւնների պրոցեսը status quo յայտնի հիմնակէտի վրայ. մի հարց, որի անլուծելի մնացած հատուածները այնքան զուրկ են նպաստաւոր լուծում ստանալու հնարաւոր շանսերից, և հէնց այդ պատճառով մի հարց, որ մինչ անանխատեսնելի ապագայ օժտուած է ապրելու, յարատևելու ուժեղ կուսակցութիւններով։ Եւ այս բոլորը ասելու, պնդելու և հաստատելու իրաւունք տալիս է մեզ քաղաքական համբընթաց կեանքի ճնշող լոգիկան՝ Բերլինի կոնգրեսից յետոյ աւելի, քան առաջ։

Պարզենք մեզ մի քանի խօսքով՝ ո՞ւն է միջազգային դիպլոմատիայի էական բնոյթը 1878 թուականից (Բերլինի կոնգրեսից) առաջ և յետոյ։

78 թուականից առաջ եղած դիւանագիտութիւնը մենք անուանում ենք թիւրքահպատակ քրիստոնեայ ժողովուրդների վրայ «պաշտօնական հովանաւորութիւնը» ապահովող և պարտաւորեցնող մի շրջան. պաշտօնական հովանաւորութիւն Եւրոպական մի կամ մի քանի պետութիւնների կողմից։ Դեռ 1774 թ. ռուսաց կայսրուհի Եկատերինա II-ի օրով, Քիւչիւք-Քայնարջիի դաշնագիրը դրեց տաճկահպատակ սլաւոնների ռուսական կառավարութեան հովանաւորութեան տակ։ 1815 թ. Վիեննայի կոնգրեսում ռուս կառավարութիւնը առաջարկում է Եւրոպայի ընդհանուր հովանաւորութեան տակ առնելու տաճկահպատակ քրիստոնեաներին։ Իսկ 1854 թ. ապրիլի 21-ին (ն. տ.) Անգլիան, Ֆրանսիան, Աւստրիան և Պրուսիան մի հաւաքական ուլտիմատումով պահանջում են Թիւրքիայից՝ ապահովել տաճկահպատակ քրիստոնեաների քաղաքական և կրօնական իրաւունքները։ Երկու տարի յետոյ, 1856 թ. այդ պահանջը դարձաւ Փարիզի դաշնագրի 9-րդ յօդուածը, իսկ

1860 թ. նոյն այդ պահանջը իրաւունք տուեց Աւստրիային, Պրուսիային և Ռուսաստանին պարտականութիւն դնելու Տաճկաստանի վրայ, որ վերջինս ընդունէ լուրջ վարչական միջոցներ՝ բարելաւելու օսմանական կայսրութեան հպատակ բոլոր քրիստոնեաների կացութիւնը։

Այսպէս մի շարք ուլտիմատումներով՝ մասնաւոր ինիցիատիվի ղեկավարութեամբ, եւրոպական դիպլոմատիան Բերլինի կոնգրեսով մտնում է իր զարգացման երկրորդ խոշոր ֆազիսը։ Սովորական ուլտիմատում պահանջների շարքը ընդհատւում էր մերթ ընդ մերթ ազատագրական ահեղ ու անզուսպ բունկուիներով Բալկանեան թերակղզում, որոնք պետութիւնների միջամտութեամբ յանգում էին նպաստաւոր վախճանի։

Բերլինի կոնգրեսն արդէն ստեղծեց դիւանագիտական յարաբերութիւնների մի նոր պլատֆորմ մի կողմից եւրոպական պետութիւնների, իսկ միւս կողմից Թիւրքիայի միջև։ Այդ ժամանակ էր միայն, որ «Արևելեան Խնդրի» բոլոր հատուածներում ուժեղ շեշտուեց միջազգային իրաւունքի և մասնակցութեան անհրաժեշտութիւնը։ Անպայման այսօր եւրոպական վեց մեծ լիազօրներից մէկը թէ միւսը ունի աւելի շատ տնտեսական շահեր, ֆինանսական ինտերես Թիւրքիայում, աւելի զօրեղ քաղաքական ազդեցութիւն Բ. Դրան վրայ, աւելի է վայելում դիւանագիտական հեգեմոնիայի պատիւը, քան միւսները։ Սակայն եթէ եղել է մի շրջան Թիւրքիայի պատմական կեանքում, երբ այս կամ այն միջազգային խնդիրն կարգաւորելու, առաւոր կոնֆլիկտը լուծելու համար այնքան մեծ կարիք է զգացուել պետութիւնների հաւաքական համաձայնութեան ու միջամտութեան, դա եղել է 1878 թուականից ի վեր, Բերլինի կոնգրեսից յետոյ։

Այդ ժամանակից ի վեր է, որ Թիւրքիան դրուել է մի դիալեքտիրական կոլօսալ հակասութեան մէջ և դարձել մի փափուկ կուախնձոր բոլոր պետութիւնների հա-

մաբ։ Մեծ պետութիւններից իւրաքանչիւրի—սկսած փոքրիկ Իտալիայից մինչև վիթխարի Ռուսաստանը—պատմական-ճակատագրական ձգտումն է՝ որքան կարելի է տնտեսական-ֆինանսական շահերի և քաղաքական ազդեցութեան մեծ մասնակցութիւն ունենալ Թիւրքիայում, շահագործել բարեպատեհ ատիթները և որքան հնարաւոր է աշխատել սուլթանի երկրի այս կամ այն տերրիտորիան, ծայրն ու անկիւնը, ծովափեայ քաղաքը, նեղուցը գրաւել, իր փաստական գերիշխանութեան տակ առնել. ուրիշ խօսքով՝ օգտուել, ստանալ ու ձեռք բերել աւելի ու աւելի, քան եւրոպական որևէ այլ ախոյեան այդ անել կարող է։ Դա կազմում է պետութիւնների իրական քաղաքականութիւնը։

Միւս կողմից դիպլոմատիական կոմբինացիաների ժամանակ պետութիւններից իւրաքանչիւրի պաշտօնական (միտումաւոր) միսիան է՝ ի տես եւրոպական միւս Լիազօրների, ամենամեծ նախանձախնդիր հանդիսանալու Թիւրքիայի քաղաքական ամբողջութեան, նրա հիմնական իրաւունքների անձեռնմխելիութեան և պաշտպանելու նրա պետական սուվերենիտետը (գերիշխանութիւնը)։ Պետութիւնների այդ պաշտօնական ձգտումները արտայայտեցին մի քարացած ֆորմուլայով—անխախտ և անեղծանելի պահել status quo, իրերի մի անգամ ընդմիշտ որոշած դրութիւնը։

Ահա այս հակընդէմ ու հակադարձ ձգտումների խորքումն են թաքնուած միջազգային դիպլոմատիայի դիալեկտիքական կօլօսալ հակասութեան արմատները Թիւրքիայի հողի վրայ։ Մի հակասութիւն, որ անմիջապէս բղխում է կապիտալիստական արդիւնաբերութեան սիստեմից. մի հակասութիւն, որ բնականհրաժեշտօրէն պայմանաւորուած է բուրժուազիայի և նրա դասակարգային պետութեան գաղութային քաղաքականութեամբ։ Ուրեմն մի իրի, մի օբիեկտի նկատմամբ միևնոյն պետութիւնները ունեն երկու կարգի միմեանց

դիամետրալ հակառակն, միմեանց ջնջող ձգտումներ, նրանից (այդ օրիենտից) կտորներ գրաւելու, ասել է նրան կազմալուծելու, և միևնոյն ժամանակ նրան պահպանելու, ամբողջութիւնը անխախտ պաշտպանելու ձգտումներ։ Երկուսն էլ անխուսափելի, երկուսն էլ կենսական։ Սակայն շնորհիւ այն հանգամանքի, որ այդ օրիենտը ուրիշ ոչ ոք չէ, բայց եթէ ինքը շահագրգիռ Թիւրքիան, այդ պատճառով մինչև օրս, մանաւանդ Բերլինի կոնգրեսից ի վեր, իր լիարժէք բովանդակութեամբ իշխել է քաղաքական հորիզոնի վրայ պետութիւնների պաշտօնական միտքն. Թիւրքիայի անգամ ամենաչնչին կտորի գրաւումը որևէ պետութեան կողմից, մանաւանդ Կ. Պոլսի ափերում, ոչ միայն ցանկալի չէ միւս պետութիւնների համար, այլև մի այդօրինակ փորձ կհանդիպէ նրանց ուժեղ ու զինուած ընդդիմադրութեան։ Ուստի իրերի բնական ընթացքը շնորհել է մինչ այժմ սբբագործուած status quo-ին տևական գոյութեան ուժեղ հիմքեր, նեցուկներ։

Այսպէս ուրեմն պետութիւնների պաշտօնական միտքի կոնկրետ արտայայտութիւնը, միտումաւոր քաղաքականութիւնը Թիւրքիայի պետական ամբողջութեան նկատմամբ, ոչ միայն փաստապէս նսեմացրեց և անարժէք դարձրեց նրանց պաշտօնական հովանաւորութիւնը թիւրքահպատակ քրիստոնեաների վրայ, այլև ստեղծեց շահերի և յարաբերութիւնների մի այնպիսի «հաւասարակշռութիւն» ու «համերաշխութիւն»—թէև առաձգական և բաղխումներով յղի, բայց և այնպէս մշտատև հաւասարակշռութիւն ու համերաշխութիւն,—որ անորոշ ժամանակով շնորհեց Տաճկաստանին յարատև գոյութեան մի ամուր յենարան։ Սնանկ ու քայքայուած, հիւանդ գոյութիւն, բայց և այնպէս յարատև գոյութիւն հէնց այդ վիճակի մէջ։ «Թիւրքիան—ասում է Կարլ Մարքսը—կազմում է լեգիտիմիստ Եւրոպայի մի վիրաւոր կէտը։ Լեգիտիմիստ և միապետական կառավարութեան սիստեմի

անընդունակութիւնը՝ սկսած ֆրանսիական առաջին յեղափոխութիւնից, արտայայտել է մի նախադասութեան մէջ՝ ուղիղ և անխախտ պահել status quo-ն։ Այդ ընդհանուր համաձայնութեան մէջ—այն է թողնել իրերը այնպէս, ինչպէս նրանք որևէ պատահականութեամբ առաջացել են—կայանում է տիրապետող պետական ոյժերի անզօրութեան և աղքատութեան այն ապացոյցը, որ նրանք կատարելապէս անընդունակ են զարկ տալու յառաջադիմութեան և քաղաքակրթութեան»[8]։ Որքան էլ ճիշտ և բնորոշ լինեն Եւրոպայի հասցէին ուղղած այդ մերկացումները ու բացասական յատկութիւնները, այնուամենայնիւ փաստը մնում է միշտ փաստ, այսինքն այն, որ Թիւրքիան շնորհիւ իր աշխարհագրական դիրքի՝ իր ասիական և եւրոպական բաժիններով դարձել է օտար տնտեսական-քաղաքական շահերի համար մի անդուսպ ու անսանձ վրցութեան ասպարէզ, մի կուսինձոր, իսկ դա մի փափուկ դրութիւն է, որ մինչ աննախատեսնելի ապագայ ապահովում է նրա իրաւական-փաստական գոյութիւնը։

Այսքանը մեծ պետութիւնների անխուսափելի հակասութիւններով լի ընդհանուր դիպլոմատիայի մասին Թիւրքիայի նկատմամբ, որի առանձին կէտերին կդառնանք մենք դեռ յետոյ։ Այժմ մի քանի խօսքով տեսնենք թէ ինչ քաղաքականութեան է հետևում ինքը Թիւրքիան պետութիւնների հանդէպ։

Դիւանագիտական այն կոմբինացիան, որ վերասաղծուեց Բերլինի դաշնագրի զօրութեամբ, հարկադրեց սուլթանի կառավարութեան դիմելու երկսայրի քաղաքականութեան հայերի նկատմամբ։ 61-րդ յօդուածի հիման վրայ նա ենթարկուում է «խիստ մեծ»

---

[8]) Marx, «Die Nationalitäten in der Türkei beim Beginn des Krimkrieges» (*Տես* «Neue Zeit» XV *տարի*, 2 *հատ. եր.* 69) *գրած* 1853 *թ.* «New-Iork Tribuna» *թերթում։*

պատասխանատուութեան պետութիւնների հաւաքական ոյժի առաջ։ Նշանակում է նա պիտի դիմէր դրա վերաբերմամբ համապատասխան քաղաքականութեան։ Տասնեակ տարիների ընթացքում դատարկ խոստումների և խաբուսիկ յոյսերի անվերջ շարանը կազմեց սուլթանի արտաքին պաշտօնական միտքը, նրա քաղաքական պատասխանատուութեան էութիւնը։ Սակայն նրա համար ամենագլխաւորը ներքին իրական միտքն էր՝ էր պետական շահերի համապատասխան ըէալ քաղաքականութիւնը։

Ո՞րն էր այդ քաղաքականութեան բուն իմաստը։

Հայաստանում մտցնելիք ըէֆորմների ծրագիրը սև ուրուականի նման հետևում էր Ելդըզ-Քիոսկի հրէշին և ծնեցնում նրա ուղեղում ջարդ ու կոտորածի դիւային ծրագրները։ Սուլթանը, այդ՝ անպայման խելօք ու ենթադիտ քաղաքագէտը, շատ լաւ գիտէր, որ ըէֆորմների հիմքում դրած է հայերի և մուսուլմանների թիւ յարաբերութիւնը։ Ուրեմն կոտորածով թէ դաղթականութեամբ հարկաւոր էր որքան կարելի է շատ նուազեցնել հայերի քանակը հայկական վիլայէթներում, որպէս զի թուական ոյժն ու առաւելութիւնը այնքան ծանրանայ, որ ոչ մի կարևորութիւն չունենայ այլևս, որպէս զի Հայաստան առանց հայերի մարդաջինջ լոզունգը հանէ իրականացման ամենաբարձր և ամենաայլանդակ չափերին։ Խոստումներ, առաջադրած ուլտիմատումներին ներողամտական սին պատասխաններ արտաքուստ, պաշտօնապէս, և կոտորած, մասսայական ջարդ ու աւեր՝ ներքուստ — ահա սուլթանի երկսայրի քաղաքականութիւնը, որով այդ «թագակիր Մաքիավելին ոտքից մինչև գլուխ շաղախուած մարդկային արեան մէջ, կարողանում էր խաբել և դեռ մինչև այժմ խաբում է և քթից բռնած մեզ է ածում եւրոպական պետութիւններին՝ հաստատելով իր բարեկեցութիւնը նրանց փոխադարձ երկիւղի և տարաձայ-

նութիւնների վրայ»։ Իսկ կոտորածների կրիտիքական բոպէներին թիւրք կառավարութիւնը կարողանում է «առևտրական մենարտօնութիւնների, ընծաների և դիւանագիտական զիջումների միջոցով որև է պետութեան (մի կամ մի քանիսի) բարեացակամութիւնը վաստակել», որն իր կողմից վստահեցնում է իր ինտիմ բարեկամին հեռևեալով՝ մենք վճռաբար չենք բարձրացնի բարենորոգումների հարցը, մենք կլսենք և կպահպանենք status quo, բայց, խնդրեմ, դուք էլ այնպէս արէք, որ ձեզանում գոնէ արտաքուստ, ամեն ինչ խաղաղ լինի» [9]։

Միջնադարեան բռնակալը շարունակեց մինչև օրս ամենայն յաջողութեամբ իր ջարդ ու կոտորածի քաղաքականութիւնը, անցնելով Ցաճկահայաստանում ու Մակեդոնիայում չտեսնուած ահագնասոսկ սարսափների մի շրջան։ Իսկ դիպլոմատի և կապիտալիստի պաշտօնական Եւրոպան սառնասրտութեամբ դիտեց և և համբերատարութեամբ տարաւ այդ բոլորը. այսինքն նա բռնեց այդ ամենի հանդէպ այն դիրքը, որն ամենից շատ համապատասխանում էր իր շահերին ու դիւանագիտական ձգտումներին։ Եւ տաճկահայ խնդիրը քննողն ու հասկացողը պէտք է ոչ թէ բարոյագէտի մեղադրական ակտ կարդայ Եւրոպայի հասցէին, այլ պէտք է քաղաքագէտի ռէալիստական մաշտաբով վերլուծէ երևոյթի արմատներն ու պատճառները։

---

[9]) Ալեքսանդր Ամֆիտէատրով «Եւրոպա և Հայաստան» եր. 16 և 18։

V.

Հայկական հարցի լաւատեսութեան եւ հոռետեսութեան շրջանը

Դիպլոմատիական դուալիզմը։—Տաճկահայ խնդրի քաղաքական երկակի բնոյթը Բերլինի վեհաժողովից յետոյ։—Ակնկալութիւնների և իլլիւզիաների շրջանը։—Դաշնակցութեան իդէօլոգների խանդավառ յոյսերը։—Միսսեմարիկ կտորածների միաւորուր քաղաքականութիւնը։—Քր. Միքայէլեանի հակասութիւնները։—61-րդ յօդուածը՝ լաւատեսութեան և յոռետեսութեան մի մայրուն աղբիւր։—Եւրոպական պետութիւնների և Թիւրքիայի ընդհանուր քաղաքական պլատֆորմը և Տաճկահայ խնդիրը։

—

Նախընթաց գլխում մենք համառօտաբար ուրուագծեցինք եւրոպական մեծ պետութիւնների ընդհանուր դիպլոմատիական Թիւրքիայի հանդէպ և Թիւրք կառավարութեան քաղաքականութիւնը Եւրոպայի հանդէպ։ Երկու դէպքում էլ քաղաքականութիւն ասածդ երկակի բնոյթ ունէր—երես ու ասատառ, արտաքին ու ներքին միասիս, պաշտօնական և իրական քաղաքականութիւն.—ահա այն դիպլոմատիական դուալիզմը, որ ճակատագրական անհրաժեշտութեամբ դարձաւ պետութիւնների «Die heilige Allianz»-ի—«Սուրբ Դաշնակցութեան»—պատմական-քաղաքական շարժումների և տնտեսական նուաճումների Էսսէնցիան, կորիզը։

Այժմ տեսնենք, թէ ինչ վիճակի մէջ էր «Հայկական Հարցը» սկսած Բերլինի վեհաժողովից, այսինքն այն օրից ի վեր, երբ նա դարձաւ մի քաղաքական օբիէկտ ընդհանուր դիպլոմատիայի համար։

Տաճկահայ խնդիրը ևս երկակի քաղաքական բնոյթը ունէր, տաճկահայերի դրութիւնը ևս ենթակայ էր մի ճակատագրական դաժան դուալիզմի։ Այդ երկակի բնոյթը մենք ձևակերպում ենք այսպէս. 1878 թ. ըսկսած Թիւրքահայերի համար բացւում է անպտուղ յոյսերի, դատարկ խոստումների, անբովանդակ ոգևորութեան և վերամբարձ իլլիզիաների մի տեսական շըր-

ջան։ Այդ մի կողմից։ Միւս կողմից, սակայն, հէնց նոյն շրջանը բաց արաւ հայերի համար անլուր սրածութեան ու աւերածութեան, անխնայ ջարդ ու կոտորածի, բարբարոսութիւնների և հալածանքների մի յամբընթաց ու անվերջ պրոցեսս։

Երկուսն էլ անխուսափելիօրէն կատարուած երևոյթներ։

Առաջին բուն աղբիւրը Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածն էր. ապա 1895 թուականի մայիսեան բէֆորմների ծրագիրը կամ առհասարակ միջազգային դիւանագիտութեան կօնցերտում առաջացած հայերի համար պատճ մի նպաստաւոր երևոյթն ու կոմբինացիան, լինեն դրանք՝ Ալէքսանդր II կայսրի բռնած «նպաստաւոր» դիրքը, Լօրդ Գլադստօնի «մարդասիրական կրակոտ» ճառերը, նախկին մինիստր Դելկասէի տուած «մխիթարական» խոստումներն ու յոյսերը, թէ Միացեալ Նահանգների նախագահ Ռուզվելտի արտայայտած պլատօնական «ցաւակցութիւնը»—ողջ մէկ են։ Ամեն անգամ յոյսն ու խանդավառ ոգևորութիւնը, ապագայի փայլուն հեռանկարը տոգորում էր ոչ միայն պարզամիտ հայ ժողովրդին, այլև նոյնքան պարզամիտ և քաղաքագիտական հոտառութիւնից զուրկ հայ յեղափոխական կազմակերպութեան։

«Հեռագիրն իսկոյն լուր տարաւ ամեն կողմ—ասում է պ. Ego-ն ինքնաբաւական տոնով,—թէ Դելկասէն ընդունել է Դրօշակեան ծրագիրը (մշակուած 1901 թ.)։ Եւ դարձեալ ուրախութիւն, դարձեալ յոյսի ճառագայթներ հայկական շրջաններում։ Ինչո՞ւ թագցնել—մենք էլ ուրախ էինք (նօտր գէրը մերն է)։ Զարթ օրեր էին, հազւագիւտ, յուսատու։ Առաջին անգամն էր, որ դիպլոմատիան ընդունում էր մի յեղափոխական կուսակցութեան պատուիրակութիւն և տկանջ դնում նրա իրազեկ թելադրութիւններին» 10)։

10) Ego, «Գորդեան Հանգոյցը» (տես «Ցառաջ» № 58)։

Այսքան թեթև ու միամտորէն են վերաբերուել Հ. Յ. Դաշնակցութեան իդէօլոգները դէպի քաղաքական երևոյթները։ Բաւական էր յարաբերութիւնների մի կրիզիս, մի քաղաքական կոնֆլիկտ Թիւրքիայի և եւրոպական որևէ մեծ պետութեան մէջ, որպէսզի դաշնակցական «քաղաքագէտները» փարեն արտաքին գործոց մինիստրին և յոյսերի ու ակնկալութիւնների մի վիթխարի հիւսուածք բարձեն նրա շլինքին։ Եւ վերջումը դարձեալ յուսախաբութիւն, դարձեալ վհատում։ Տասնեակ տարիների ընթացքում նրանց քաղաքագիտական ժանկամտութիւնը չհասունացաւ, չմարզուեց դիւանագիտութեան հնոցում, դուրս չեկաւ իր օրօրոցային վիճակից։

Տաճկահայ խնդրով տարուած Հայ Յեղ. Կազմակերպութիւնը չէր դադարում օրն ի բուն ճառելու և գրելու, որ միջազգային դիւանագիտութեամբ սրբագործուած «Հայկական Հարցը» պիտի շատ շուտով ստանայ իր բարերար լուծումը, նպաստաւոր յենակէտ ունենալով Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը։

«Մենք մի զօրեղ նպաստաւոր հանգամանք ունեցանք,—ասում է Դաշնակցութեան նախկին պարագլուխը,—որ վերջապէս պիտի որոշէր, արագացնէր հայութեան ելքը իր տատանման շրջանից։ Այդպիսի մի հանգամանք եղաւ Բերլինի դաշնագիրը իր 61-րդ յօդուածով։ Եթէ մինչև այդ յօդուածը՝ ջնջման հեռանկարից խուսափել ուզենալով, ջլատուած, տկարացած և իր տրխուր անցեալի բազմաթիւ բացասական հետքերը կրող հայը կարող էր նաև վախենալ ըիսկի (յեղափոխական ըիսկի, Բ. Ի.) վտանգից,—այդ յօդուածով (նօտրգիրը հեղինակինն է) հայութիւնն իրեն արդէն դաշնակից (նօտրգիրը մերն է) է տեսնում եւրոպական վեց պետութիւններ և աջողութեան պայմանական յոյսերը ուղղակի հաւատի պիտի

փոխարկէին» (նստրգիրը մերն է) 11)։

Ուրեմն 61-րդ յօդուածը դարձաւ հիմնակէտն ու ելակէտը այն բոլոր իլլիւզիոն ակնկալութիւնների և ազատագրական ձգտումների, որոնցով ոգևորուում էին հայ յեղափոխական կազմակերպութիւնները և յորդորներով ոգևորցնում իրենց ստորագրուած ժողովրդական մասսաներին։ Սա արդէն տաճկահայ խնդրի առաջին ընոյթն էր՝ խոստումներով եւ սոսկ յոյսերով վարագուրուած արտաքին շղարշը։

Սակայն մենք գիտենք, որ նոյն այդ յօդուածը ամենամեծ և գրեթէ միակ պատճառը դարձաւ տաճկահայ խնդրին մի այլ, և իրաւ աւելի իրական ու ներքին ընոյթ շնորհելուն։ Դիւանագիտական հետամտութիւնը՝ թէև թոյլ ու անբողոք, և ծրագրային ըէֆորմների իրականացման ուլտիմատումները հարկադրեցին Թիւրքիային մշակելու և իրականացնելու մի առանձին քաղաքականութիւն հայերի նկատմամբ, որ առաջ գոյութիւն չունէր նոյն չափով ու ծաւալով։ Դա Թիւրքիայի սիստեմատիկ կոտորածների ու հալածանքների միտումաւոր քաղաքականութիւնն էր, որի մասին մենք խօսեցինք նախընթաց գլխում։ Եւ Հ. Յ. Դաշնակցութեան հանգուցեալ պարագլուխը, որ վերոյիշեալ ցիտատով ազատագրութեան այնքան մեծ յոյսեր է վերագրում 61-րդ յօդուածին, և միամտօրէն հայերին՝ աջակից դաշնակիցներ հռչակում եւրոպական վեց պետութիւններին, ամենևին չի նկատում, թէ ինչպէս նա ուղղակի իր այդ ասածների դէմ քարեր է շպրտում մօրալիստի այն շանթահար ու յանդիմանիչ պարսաւանքներով, որոնց նա իր գրքի զանազան մասերում (օրինակ երես 13, 27, 57 և այլն) ուղղում է Եւրոպայի հասցէին—«հասմոլ, աչքածակ և դաւաճան» Եւրոպայի դէմ։ Քր. Մի-

---

11) Քր. Միքայէլեան, «Ամբոխային տրամաբանութիւն» եր. 32—33։

քայէլեանը չի նկատում բոլորովին, թէ ինչպէս իր թուած բոլոր յայտնի հեղինակներից առաջ բերած կարծիքները՝ որոնց տակ Գր. Միքայէլեանը ջուխտ ձեռքով ստորագրում է, հիմնապէս հերքում են իր սեփական կարծիքը 61 րդ յօդուածի մասին։ Եւրոպայի և Ամերիկայի բազմաթիւ գրողներ ու պարլամենտական գործիչներ՝ սկսած միսիոնար Գրինից մինչև սոցիալիստ Ժորէսը (օրինակ՝ Մակ-Կոլ, Բրայս, Դիլօն, Կամարովսկի, Լեպցիուս, Բոլէն-Ժակմէն և այլն), որոնք արտայայտել են «Հայկական Հարցի» առթիւ, միաբերան վկայում են, որ 61-րդ յօդուած ասածդ ունեցաւ ամենաաղէտաբեր նշանակութիւնը տաճկահայերի համար, որ ըէֆորմների այդ ուլտիմատում պահանջները դարձան ամենագլխաւոր պատճառն ու մօտիւը այն չարիքների՝ կոտորածների ու հալածանքների (մի՞թէ կարիք կայ թուել այստեղ, թէ որոնք են այդ կոտորածներն ու հալածանքները), որոնք կազմեցին սուլթանի միտումաւոր քաղաքականութեան էութիւնը տասնեակ տարիներ շարունակ (տես նախընթաց գլուխը՝ Թիւրքիայի երկսայրի քաղաքականութեան մասին)։

Ուրեմն պահանջների և ըէֆորմների մի յօդուած, մի դիւանագիտական ակտ, որ 70-ական թուականների վերջերից սկսած աղատագրուած բարեկեցիկ կեանքի նախանշաններ էր ցոյց տալիս, յոյս ու ոգևորութիւն ներշնչում հայ ժողովրդին ու նրա յեղափոխական իդէօլոգներին, նոյն այդ յօդուածը իրապէս դարձաւ դըժոխային կեանքի վերաստեղծման և դառն յուսախաբութեան մի անկիւնաքար։ Միևնոյն դիւանագիտական ակտը, ասում ենք, դարձաւ լաւատեսութեան ու յոռետեսութեան մի միայն աղբիւր։ Այսպիսով հայերի վիճակը, «Հայկական Հարցի» դիպլոմատիական դրութիւնը ևս անխուսափելիօրէն խճողուած էր մի դիալեկտիկական հակասութեան մէջ։ Զէ՞ որ ինքը Տաճկա-Հայաստանը ընդհանուր դիւանագիտական խաղերին ենթակայ մի օբիեկտ

էր՝ մի կողմից եւրոպական պետութիւնների, միւս կողմից Թիւրքիայի միջև. նշանակում է նրանց հակասական քաղաքականութիւնից պիտի անհրաժեշտօրէն ըղխէր մի հակասական անել դրութիւն և՛ հայերի ու «Հայկական Հարցի» համար։

—

Մինչև այժմ, նախընթաց գլուխներում—եթէ ուշի ուշով հետևել է ընթերցողը—մենք համառօտաբար և ճշգրիտ սահմանների մէջ ուրուագծեցինք այն ընդհանուր քաղաքական պլատֆորմը,—առհասարակ «Արևելեան Հարցի» և մասնաւորապէս «Հայկական Խնդրի» նկատմամբ,—որ ունեն՝ մի կողմից եւրոպական մեծ պետութիւնները՝ իբրև մի հաւաքական միութիւն, իսկ միւս կողմից Թիւրքիան՝ իբրև մի առանձնացած միաւոր։ Ապա մենք ցոյց տուինք այդ պլատֆորմի վրայ այն միջին դիրքը, որ ունի Տաճկահայ Խնդիրը, երկուստեք դիպլոմատիական յարաբերութիւնները միմեանց օղակող օբիէկտը։

Ուրեմն եթէ մեզ համար պարզուեցին քաղաքական մարմինների (Եւրոպայի թէ Թիւրքիայի) մի անգամ ընդմիշտ գրուած պօզիցիաները en bloc,—ըստ քաղաքական-պատմական տենդենցիաների՝ ամուր ու մնայուն, իսկ ըստ ձևերի՝ առաձգական ու փոփոխական դիրքերը,—ապա մեզ մնում է այժմ անցնել մեր թեմայի երկրորդ՝ գուցէ աւելի կարևոր մասին. ոն է, արդեօք, այն պետութիւնը, որ ամենամեծ քաղաքական դերն է խաղում «Արևելեան Խնդրի» վերաբերեալ եղած ընդհանուր դիւանագիտական կոմբինացիաների ժամանակ և կազմում ամենաուժեղ հակառակորդն ու ազդեցիկ խոչնդոտը Տաճկահայ Խնդրի նպաստաւոր լուծման. այնուհետև՝ ինչ են ներկայացնում միւս պետութիւնները առանձին-առանձին վերցրած՝ «Հայկական Հարցի» նկատմամբ։

VI.

Ռուսաստանի քաղաքականութիւնը եւ տաճկահայ խնդիրը

Ռուսաստանի ծանրակշիռ դերը «Արեւելեան Հարցում»։—Նրա իմպերիալիստական ձգտումների նպատակը։—Ռուսաստանի մասնակցութիւնը Կրետէի և արեւել. Ռումիլիայի գործում։—Ցարի դիպլոմատիան Մակեդոնիայի նորագոյն ապստամբութեան օրով։—Եւրոպայի դիրքը Ռուսաստանի առաջխաղացման հանդէպ մերձաւոր արեւելքում։—Ռուսաստանի քաղաքականութիւնը «Հայկական Հարցի» նկատմամբ։—Դաշնակցական իդէօլոգների խոստովանութիւնը։—Ռուսաստանի հետեւողական ու սիստեմատիկ քաղաքականութեան մօտիւները «Հայկական Խնդրի» վերաբերմամբ։—
1. Թիւրքիայի ամբողջութեան անձեռնմխելիութեան խնդիրը։—
2. Ռուսաստանը՝ ինքնավար Հայաստանի պատմական թշնամի։—
3. Ռուսաստանի և Թիւրքիայի մտերմութեան-բարեկամութեան ձգտումը։

—

Ով ուշի ուշով հետեւել է «Արեւելեան Խնդրի» վերաբերմամբ տեղի ունեցած և ունեցող մեծ պետութիւնների դիպլոմատիական յարաբերութիւնների այսպէս կոչած հանգոյցաւոր կէտերին, նա պարզ նկատած կլինի, թէ վեց պետութիւններից որն է վերցնում իր վրայ կնճռոտ հարցին պատասխանելու առաջին և վերջին խօսքը, ով է ծանռակշիռ դեր խաղում և վճռական ուղղութիւն տալիս դիւանագիտական յարաբերութիւններին։ Դա Ռուսաստանն է, բռնակալ ցարիզմի թունաւոր գոյութիւնը, եւրոպական կուլտուրայի և յառաջադիմութեան ամենամեծ մահացու թշնամին։ Եթէ կայ միջազգային դիւանագիտութեան ողջ կօնցերտում մի սահման, ուր այնքան մեծ արժէք ու նշանակութիւն ստացաւ Ռուսաստանի քաղաքական հեգեմօնիան, առաջնութեան դիրքը, դա «Արեւելեան Հարցն» էր և է։ Երբ Բերլինի կօնգրեսից առաջ, ասում ենք, ցարի կառավարութիւնը սեփական ինտերեսնե-

րից շահագրգռած էր զգում ստանձնել իր վրայ սլաւ ազգութիւնների ազատութեան ձեռներէցութիւնը, ապա 70—80 թուականներին՝ երբ «Արևելեան Խնդրի» բոլոր հատուածներում այնքան ուժեղ (բայց ոչ հաւասարապէս) շեշտուեց միջազգային իրաւունքի մասնակցութեան անհրաժեշտութիւնը, շարունակուեցին, այնուամենայնիւ, ծանրակշիռ նշանակութիւն ունենալ Ռուսաստանի եղակի ցանկութիւնն ու դիւանագիտական որոշումները։

Սերբիայի և Բուլգարիայի ազատութիւնից յետոյ Ռուսաստանը շատ լաւ էր հասկանում, որ իր «ազատարար» դերը Բալկանեան թերակղզում չունի ամենևին այն նպաստաւոր հետևանքները, որոնք սկզբում շահագիտական ձգտիներ են ծառայել նրա համար մերձաւոր արևելքի քաղաքականութեան մէջ։ Նրա ձգտումների նպատակը՝ ձեռք բերել ծովափեայ մասերի և Դարդանելեան նեղուցի վերահսկողութիւնը, կլանել իր մէջ ազատագրուած ժողովուրդների տերիտորիաները—գլուխ չէ եկել և չի կարող ժողովուրդների «ազատարար» դերով։ Ռուսաստանի նուաճողական—իմպերիալիստական տենդենցիաները քարին էին դիպչում Բերլինի դաշնագրից յետոյ աւելի ու աւելի, քան առաջ։ Եւ մեծ մասամբ այդ է պատճառը, որ նա 78 թուականից ի վեր մերձաւոր արևելքի իր դիպլոմատիական շարժումներին տրուաւ բնակալական անողորմ ընթացք։ Արևելեան քրիստոնեաների պաշտօնական «պաշտպանը» իրապէս դարձաւ արևելեան քրիստոնեաների տեսական սարկութեան շղթաները դարբնողը։

Ռուսաստանն էր, որ Բերլինի կօնգրեսից մի քանի տարի անցած ուժեղ կերպով ընդդիմանում էր Արևելեան Ռումիլիան Բուլգարիայի հետ միացնելու ձգտումներին. մի ուլտիմատում, մի ցանկութիւն, որի դէմ եռապետական դաշնակցութիւնը ոչինչ չունէր ասելու և անելու։ Ռուսաստանն էր, որ մինչև վերջը

խանգարեց Կրետէն Յունաստանի հետ միացնելուն, անելով այն անհիմն ու կեղծ առարկութիւնը, որ իբր այդ հանգամանքը առիթ կտար Բալկանեան թերակղզու ազգութիւնների անհանգստութեան և գժտութեան։ Եւ Ռուսաստանի այդ եղակի ցանկութեան շտապեց միանալ Գերմանիան, ապա միւս պետութիւնները։ Անգլիան չէր կարող և զգալի չահ էլ չունէր այդ խնդրի առթիւ Ռուսաստանին հակառակելու։ 1897 թ., երբ Վիլհելմ Լիբկնեխտը ևս առիթ ունեցաւ Կրետէի մասին արտայայտելու, խոր յոռետեսութեամբ և իրաւացի պաթոսով, կծու կրքոտութեամբ նկատում էր ի միջի այլոց հետևեալը. «Ամբողջ աշխարհը ներկայացնում է Ռուսաստանի համար կամ մի գիտակից զօրաւիգ, օգնական, կամ թէ ոչ մի ստրկամիտ գործիք։ Եւրոպան մի գժանոց է ներկայացնում ինքն իրենից»։

Դիմենք նորագոյն անցեալին։

Մի քանի խօսքով շօշափենք այստեղ այն դիպլոմատիական շարժումը, որ տեղի ունեցաւ մակեդոնական ապստամբութեան օրով։ Բաւական երկար ժամանակ էր տևել մակեդոնական խռովայոյզ ցոյցերի սկզբնաւորութիւնից մինչև այն րոպէն, երբ ռուսական արտաքին գործերի մինիստր կոմս Լամսդորֆը բարձրագոյն հրամանով ժամանել էր Վիեննա՝ տեղական իր դաշտօնակցի՝ Գոլուխովսկու հետ, բէֆորմների ծրագիր մշակելու համար։ Ով հետևել է այդ ժամանակ քաղաքական կեանքի ընդհանուր տրամադրութեան, նա լաւ նկատած կլինի, թէ ինչպէս արևմտեան Եւրոպայի հանրական կարծիքը, քաղաքական մամուլը, պարլամենտը, հրապարակական միտինգները և այլն, իրենց թեր և դէմ վճիռներով, զբաղման նիւթ էին դարձրել խիզախ Մակեդոնիայի հերոսական կռիւը։ Սակայն ոչ մի տեղից չէր նկատւում որև է դրական քայլ։ Բարացել էր ամբողջ արևմտեան Եւրոպան և աչքը յառել իր արևելեան հզօր ու բռնակալ դինակցին։ Այո, նա է միակը,

նա է վճռական ու կտրուկ ոյժը, որի ձայնին շտապեցին միւս հինգ պետութիւնները՝ համակիր թէ հակակիր, իրենց համաձայնութեան քուէն տալ։ Ոչ մէկը նրանցից թոյլ չտուաւ իրան կամ անպատշաճ համարեց յօգուտ կամ ի վնաս Մակեդոնիայի որև է առաջարկութիւն անելու ծրագրուած ըէֆորմների նկատմամբ և անցկացնելու։ Ռուսաստանի համար օրինական գոհացուցիչ նորմանները առանց այլևայլութեան գոհացուցիչ համարուեցին և միւս պետութիւնների համար։ Ֆրանսիական հանրապետութիւնը նկատելով իր դաշնակցի առաջխաղաց քայլը, շտապեց բազմաթիւ գործակալներ կարգել Մակեդոնիայում և ֆրանսիական դրոշակը փողփոխել տալ։ Սակայն նա ստիպուած էր շուտով յետ նահանջել իր յոգատար ձգտումներից, որովհետև դրանով ստէր էր ընկնում իր հզօր դաշնակցի առաջնակարգ հեղինակութեան վրայ. մի բան, որ իր ժամանակին նկատեցին Պետերբուրգի դիպլոմատիական շրջանները և նրանց օրգանները, ամենից առաջ «Новое Время»-ն։

Եւրոպական միւս հինգ պետութիւնները—այս մոռանալու չէ երբէք—ամենևին շահագրգռուած չեն զգում իրենց ըէալ ինտերեսների հետ առընչութիւն չունեցող որևէ խնդրի նկատմամբ առաջխաղաց քայլ անելու մանաւանդ այն դէպքում, երբ նրանցից մէկի կամ մի քանիսի այդօրինակ վերաբերմունքը անախորժութիւն կպատճառէ արևելեան քրիստոնեաների պաշտօնական հովանաւորին։ Միանգամայն այլ բան է. իհարկէ, եթէ Ռուսաստանի շահագիտական առաջխաղացումը մերձաւոր արևելքում զգալի վտանգ է սպառնում միւս պետութիւնների քաղաքական շահերին։ Այդ դէպքում արդէն դիւանագիտութիւնը փոխում է իր նորմալ ընթացքը և դիմում լուրջ, հակազդող միջոցների։ Փաստ՝ Ղրիմի պատերազմի ժամանակ Անգլիայի և Ֆրանսիայի բռնած ժխտական դիրքը դէպի Ռուսաստանի իմպերիա-

լիստական քաղաքականութիւնը։ Փաստ՝ Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ յօդուածի փոխարինումը՝ Անգլիայի ձեռներէցութեամբ, Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածով, երբ ժամանակակից անգլիական դիւանագիտութեան տոն տուող երկու ազդեցիկ ներկայացուցիչները՝ Լօրդ Բեկոնսֆիլդ և լօրդ Սալիսբիւրի ի միջի այլոց կործանեցին Մեծ Բուլգարիայի ծրագիրը, ստիպեցին դուրս հանել Հայաստանից ռուսաց զօրքերը։

Ռուսաստանի այս ընդհանուր դիրքից՝ դէպի «Արևելեան Խնդիրը», դիւրին է այժմ մեզ համար անցնել նրա մասնաւոր քաղաքականութեան՝ դէպի «Տաճկահայ Խնդիրը»։

Եթէ Ռուսաստանը իր quasi ազատարար դերը առհասարակ «Արևելեան Հարցի» նկատմամբ, փոխարինել է ձեռնպահ, դժկամակ և բացասական դերով, ապա մասնաւորապէս «Հայկական Հարցի» վերաբերմամբ նա,—գաղտնիք չէ այդ—դաւադիր է և նենգամիտ, բացարձակ հակառակորդ է։ Տասնեակ տարիների պատմութիւն ունենք մեր յետևը, սկսած յատկապէս 90-ական թուականներից, որ բացայայտ վկայում է թէ ով է «Հայկական Հարցի» անլուծելի, առկախ վիճակի ամենամեծ պատճառը։ Յիշենք 1895 թ. մայիսեան ըէֆորմները, որոնց մեծ պետութիւնների դեսպանները միահամուռ դիմումով վճռական պօստուլատ էին դարձրել և իրագործման միջոցներ պահանջում սուլթանից։ Սակայն բաւական էր ռուսական դեսպան Նելիդովի դաւադիր, երկդիմի դիրքը՝ բոլորի վճիռն ու տրամադրութիւնը փոխելու համար։ Դա Ռուսաստանի ամենաակնյայտնի և ուժեղ քացասական քաղաքականութիւնն էր հայերի նկատմամբ։ Եւ այս խոշոր փաստը բաւական չէ միայն ապացուցանելու, որ միջամտող պետութիւններից ամենամեծ չափով Ռուսաստանն է «Հայկական Խնդրի» լուծման անընկճելի հակառակորդն ու թշնա-

մին, այլև այն, որ միայն Ռուսաստանի դիրքն ու ցանկութիւնը բաւական էր, որ այս կամ այն ուղղութիւնը տար դիւանագիտական գաղտնի յարաբերութիւններին՝ «Հայկական Հարցի» նկատմամբ։ Իսկ Ռուսաստանը, ինչ ասել կուզէ, ունի միշտ սրտակից քարեկամ իր կողմը թեքելու համար,—դա ամենից առաջ Գերմանիան է, ապա Աւստրիան, իսկ այնուհետև Ֆրանսիան և Անգլիան ոչ միայն ոչինչ չեն կարող անել, այլև չէին ուզենայ անել։ Լօբանով-Ռոստովսկին—ռուս. արտաքին գործերի մինիստրը—ոչ միայն չէր ուզում երկրորդ Բուլգարիա ստեղծել յանձինս Ցաճկա-Հայաստանի, այլև նրա Պօլսի ներկայացուցիչը՝ Նելիդօվը, ջարդ ու կոտորածի ցինիկական խրախոյս էր կարդում արնախում հրէշին. «Massacrez, Majesté, massacrez» ջարդեցէք, Վեհապէտ, ջարդեցէք,—լսուեցաւ։

Ինքը՝ Դաշնակցութեան կենտրոնական-պաշտօնական օրգանն իսկ հեռու չէ խոստովանելու այդ տարբական իրողութիւնը. «Տասը տարի առաջ—ասում է «Դրօշակ»-ը,—երբ հայկական կոտորածների սարսափեցուցիչ լուրը աշխարհ պատեց, առաջին կառավարութիւնը, որ հրճուանքով լեցուեց՝ Մոսկովեան միապետութիւնն էր, և առաջին գահակալը, որ իր յաղթութիւնը կրկնապատկուած տեսաւ, դա ամերային պալատի գաղտնի թուլամիտն էր։ Երկուսն էլ՝ մէկը իբրև ղեկավարող, միւսը իբրև գործադրող, իրագործուած տեսան Լօբանովի գաղտնային բերանով պատգամուած ծրագիրը՝ Հայաստան առանց հայութեան» [12]։ Այնուհետև «Կովկասեան վէրքերի» մէջ Է. Ակնունին բազմաթիւ փաստերով ցոյց է տալիս, թէ ինչպիսի մեծ չարիք, անպարտելի խոչընդոտ է համարւում ռուս կառավարութիւնը ոչ միայն Կովկասում՝ խեղդելու համար ամեն մի յեղափոխական շարժում յօգուտ թիւրքահայերի, այլև դիպլօմատիական յարաբերութիւնների ժա-

---

12) «Դրօշակ», առաջնորդող, № 2, 1905 թ.։

մանակ՝ խորտակելու «Հայկական Խնդիր» ասածդ, նոյն իսկ ըէֆորմների ամենահամեստ ծրագրով։ «Ամեն անգամ—նկատում է Ակնունին,—երբ յուզված Եւրոպան փորձեր էր անում, թէև թոյլ, արդարութեան ձայն (նստրագիրը մերն է) բարձրացնելու յոգուտ տանջուող ու կուող հայութեան, միշտ և ամեն տեղ արևելեան քրիստոնեաների պաշտպանն էր (Ռուսաստանը), որ հանդէս էր գալիս իբրև դիմադրող, հակառակորդ և յաճախ՝ իբրև բացարձակ թշնամի» 13)։

Այնուհետև վերջին ժամանակներս, լեգալ մամուլի մէջ 14), դաշնակցական իդէօլօգները աւելի ու աւելի համոզված շեշտումներով պնդում ու խոստովանում են, որ իրաւ Տաճկահայ Խնդրի մինչ այժմ առկախ մնալու և նրա լուծման գործում ամենամեծական ու ամենաուժեղ ֆակտորը կազմում է Ռուսաստանը։ Թէ ինչպիսի խոշոր ու անել հակասութեան մէջ ընկաւ Դաշնակցութիւնը իր խոստովանութիւններով և իրական գործունէութեամբ, դրան կդառնանք մենք յետոյ, երբ կքննենք Դաշնակցութեան գործունէութեան երկակի մեթոդը։ Իսկ առայժմ քննենք և տեսնենք, թէ ի՞նչ շարժառիթներից, ի՞նչ ըէալ մոտիւներից դրդված է Ռուսաստանը դիմում այդ օրինակ հետեւողական ու սիստեմատիկ քաղաքականութեան՝ «Հայկական Հարցի» նկատմամբ։

Ռուսաստանի մտածված ու հեռատես քաղաքականութիւնը՝ «Հայկական Խնդրի» նկատմամբ, առաջնորդւում է, անտարակոյս, իր որոշ մոտիւներով։

Նախ ընդհանուր առմամբ։ Միահեծան Ռուսաստանը աւելի, քան եւրոպական որև է այլ պետութիւն, շահագրգռված է միահեծան Թիւրքիայի գոյութեամբ,

---

13) Է. Ակնունի «Կովկասեան վէրքեր» եր. 284։

14) Տես «Յառաջ» № 22—25, առաջնորդող. ապա «Յառաջ» 53, 56, 58, 61 և 64, «Գորգեան հանգոյց», Ego-ի։

նրա ամբողջութեան անձեռնմխելիութեամբ։ Կամ Թիւրքիայից պոկւած, բաժանւած կտորները՝ Փոքր Ասիայում թէ Բոսֆորի ափերում, իմ ձեռքս ընկնեն, կամ թէ չէ նա Ճայ անսասան իր լի ամբողջութեամբ,— ահա ինքնակալ ցարիզմի դարաւոր քաղաքականութեան դեմքը։ Եւ վերջին տասնամեակների ընթացքում, երբ Ռուսաստանն իր նւաճումների և գրաւումների քաղաքականութեան յենակէտը մերձաւոր արևելքից տեղափոխեց ծայրագոյն արևելք,—նա հետևեց Թիւրքիայի վերաբերմամբ ունեցած իր երկընտրանք դեվիզի երկրորդ մասին։ Ցարի կառավարութիւնը լաւ գիտէ, որ Թիւրքիան դառնալով միջազգային քաղաքականութեան մի օբիեկտ, չի յաջողիլ իրեն առանց այլևայլութեան իր օկկուպացիայի տակ առնել Բոսֆորը, անկարող պիտի լինի իր ձեռքը «զաւթելու» հաւանած ու ցանկացած մասերը Փոքր Ասիայում։ Նոյն իսկ, եթէ ուզում էք, Ռուսաստանի համար ցանկալի չէ Դարդանելի լուծումը, որովհետև հակառակ դէպքում Ռուսաստանի Սև Ծովեան նաւահանգիստները կոնֆլիկտի բոպէներում կենթարկւեն անգլիական կամ այլ թշնամացած պետութեան պատերազմական նաւերի ոմբակոծութեան վտանգին։

Երկրորդ. Ռուսաստանը չունի բացարձակապէս ոչ մի շահ ու ինտերես—եթէ չասենք վնաս ունի—տեսնել ինքնավար Հայաստան Փոքր Ասիայում, կամ դէթ բարւոք վիճակ ունենցող հայութիւն նոյն միջնավայրում։ Չէ որ միջազգային դիւանագիտութեան գրաւականներով ապահովւած ու երաշխաւորւած ինքնավար Հայաստանը կդառնայ ամենամեծ արգելառիթ խոչնդոտը՝ ընդմիշտ մի անանցանելի պատնեշ փորելու Ռուսաստանի գաղութային քաղաքականութեան տենդենցիաների առաջ մերձաւոր արևելքում։ Չէ որ ազատ ու բարեկեցիկ Տաճկա-Հայաստանը կդառնայ որոշ գաղթավայր-ապաստան, արդիւնաբերական շահագործութեան

և տնտեսական ուժեղացման մի զրաւիչ աղբիւր այն հայութեան (կովկասահայերի) տիրապետող տարրերի համար, որին՝ միւս ռուսահպատակ ազգութիւնների հետ միասին, ձգտում է ճզմել ու կազմալուծել ռուսացման-համալուսնականութեան ներքին քաղաքականութիւնը։ Ուրեմն որքան միաժիտ յոյս ու հաւատ պիտի ունենալ, սպասելու, որ ցարի կառավարութիւնը երբ և իցէ բարեթեք վերաբերմունք կունենայ «Ճաճկահայ խնդրի» նկատմամբ։ Մենք յետոյ կդառնանք դեռ հայ լիբերալ հրապարակախօսութեան և յեղափոխական իդեօլոգիայի այն քաղաքագիտական մանկամտութեան, որով նրանք խրատական դասեր էին ուղղում Ռուսաստանի հասցէին, թէ իբր նա չի հասկանում, որ իր քաղաքակրթական միսիայի դերը կարող էին ստանձնել ընդունակ հայերը մերձաւոր արևելքում այն դէպքում, եթէ Ռուսաստանը ազատագրէ հայերին Օսմանեան ծանր լծից։

Երրորդ. որքան Ռուսաստանը ոչ միայն չի հովանաւորում թիւրքահպատակ քրիստոնեաներին, այլև իր պրոփոկացիայով քաջալերում է «Մեծ Մարդասպանի» քաղաքականութիւնը, պաշտպանում նրա դիւաբնար ծրագրների իրականացումը, այնքան էլ, բնականաբար, աւելի ու աւելի է ժոեռմայնում և իրենից կախման վիճակի մէջ դնում սուլթանական կառավարութեան։ Այդ առթիւ իրաւամբ նկատում է Էդուարդ Բերնշտայնը հետևեալը. Ռուսաստանը ոչ միայն տրամադրութիւն չունի մի «Հայկական Բուլգարիա» վերաստեղծելու, այլև նա ամենևին չէ շտապում տաճկահայերին իր սեփական պաշտպանութեան տակ առնելու։ Նրա համար փոյթ չէ, ընդհակառակը անհամեմատ աւելի է քաղցրացնում նրա տրամադրութիւնը,—երբ մերթ ընդ մերթ վրայ է հասնում Թիւրքիայում հազարաւոր հայերի մասսայական նախճիրը, երբ հայ կանայք, աղջկերք ու մանուկներ ամենասոսկալի կոպտութեամբ

բոնաբարում, սրածութեան զոհ են գնում։ Որովհետև իւրաքանչիւր կոտորած աւելի է լարում Թիւրքիայի և Անգլիայի յարաբերութիւնը և աւելի ու աւելի ամրացնում ցարին ու սուլթանին շաղկապող օղակը» (նոտր գրերը մերն են) 15)։

Եւ հէնց մեծ մասամբ այդ մտերմական-բարեկամական յարաբերութեան շնորհիւ է, որ Ռուսաստանի քաղաքական ազդեցութիւնը Թիւրքիայի վրայ այնքան ուժեղ է։ Ռուսաստանի համար ցանկալի է, որ մինչև անհասկանալի ապագայ յարատևէ Թիւրքիայի ամբողջական գոյութիւնը. սակայն ներքնապէս քայքայուած, թոյլ ու հիւանդ գոյութիւն, որպէսզի նա կարողանայ իր նպատակներին գործիք ծառայեցնել, որպէսզի Թիւրքիային իրենից կախման վիճակի մէջ պահէ և միշտ զգալ տայ նրան, որ ինքը նրա պաշտպանն է, որ նրա գոյութիւնը պայմանաւորուած է իր գոյութեամբ։

«Թիւրքիան—նկատում է նոյն Բերնշտայնը—դարձել է ռուսական դիպլոմատիայի խաղալիքը։ Սուլթանը նայում է Ռուսաստանի վրայ, որպէս իր առաջնակարգ պաշտպանի վրայ, ինչպէս Ռուսաստանը շատացնում է, այնպէս էլ նա պարում է։ Իր ներկայ կազմակերպութեամբ Թիւրքիան ոչ միայն կասկածելի չէ Ռուսաստանի համար, այլ ընդհակառակը նրա ամենահաճելի հարևանն է։ Թող չափազանցութիւն չլինի, եթէ ասենք, որ Թիւրքիան Ռուսաստանի պահապանն է Բոսֆորի և Դարդանելի վրայ» 16)։ Հէնց այդ պատճառով էլ—ասում է Բերնշտայնը մի այլ տեղ—արևելեան ժողովուրդները եկել են այն գիտակցութեան, որ միակ մեծ պետութիւնը, որի բարեկամութիւնը անհրաժեշտ

---

15) Ed. Bernstein «Die deutsche Sozial-demokratie und die türkischen Wirren» («Neue Zeit» XX տարի, 1 հատ. եր. 115)։

16) Ibid, եր. 112։

է, իսկ հակառակութիւնից պէտք է խուսափել,—դա Ռուսաստանն է» 17)։ Հէնց այդ է պատճառը,—կաւելացնենք մենք,—որ Ռուսաստանի ամեն մի դիպլոմատիական քայլը, ամեն մի ուլտիմատում՝ Թիւրքիայի հասցէին՝ դրական թէ բացասական ուղղութեամբ, անհամեմատ խոշոր նշանակութիւն ունի իր հետևանքներով, քան նոյնօրինակ քայլը եւրոպական մի կամ մի քանի պետութիւնների կողմից։

Շատ հեռու չգնանք. լսենք դարձեալ մի նոր դաշնակցական ինքնասպան խոստովանութիւններից։ «Ցարիզմը—ասում է «Դրօշակ»-ը—սուլթանականութեան թիկունքն է Կովկասի և Բալկանեան սահմանների վրայ. սուլթանականութիւնը՝ ցարիզմի առաջապահակն է Փոքր-Ասիական և Բալկանեան քաղաքական բոլոր խըլրտումների դէմ»18)։

Ահա այն բէալ մոտիւները, այն շահագիտական միտումները, որոնք հիմք ու տոն են տուել Ռուսաստանի հետեւողական ու սիստեմատիկ քաղաքականութեան «Տաճկահայ Խնդրի» նկատմամբ։ Այլ ընթացք սպասել ռուսական դիպլոմատիայից—ինչպէս սպասել են տարիներ շարունակ հայ լեգալ և անլեգալ իդէալիստ գործիչները—նշանակում է նախ չհասկանալ ռուսական տնտեսական շահերն ու քաղաքական ձգտումները և երկրորդ՝ ամենևին չըմբռնել այդ բոլորի վրայ հիմնուած ռուսական դիւանագիտութիւնը։ Մենք դեռ յետոյ կտեսնենք այդ իդէալիստական հասկացողութեան, ասել է՝ քաղաքական երևոյթների, սխալ ու տկար ըմբռնողութեան հետևանքները։

---

17) Ed. Bernstien «Kreta und die russische Gefahr» («Neue Zeit», XV տարի, 2 հատ. եր. 17)։

18) «Դրօշակ», 1905 թ. № 2, առաջնորդող։

VII.

Անգլիայի քաղաքականութիւնը եւ Տաճկահայ Խնդիրը

Անգլիան և տաճկահայ խնդիրը։—Անգլիան՝ «հայասիրութեան» հայրենիք։—Դաշնակցական իդէօլոգների քաղաքագիտական բորկութիւնը։—Ուլտիմատումների և ճառերի անվերջ հակասութիւնները Անգլիայում։—Անգլիական ճարպիկ ու առաձգական քաղաքականութեան տենդենցները։—Անգլիան, որպէս առաջնակարգ արտայայտիչ համաեւրօպական տենդենցիաների։—Նրա «հայասիրութիւնը» և հակամարտ քաղաքականութիւնը Ռուսաստանի դէմ։—Անգլիայի վերջին տարիների ձեռնպահ դիրքի պատճառը։ «Հայկական Հարցի» նկատմամբ։

Մենք մինչև այժմ քննեցինք «Հայկական Հարցի» բարեյաջող լուծման ամենամեծ ու ամենաազդեցիկ հակառակորդի դիրքը, քաղաքական պօզիցիան։ Արդ՝ տեսնենք ինչ են ներկայացնում «սրբազան դաշնադրութեան» միւս մասնիկները, իսկական արևմտեան Եւրօպան, քաղաքակիրթ աշխարհը, որից այնքան մեծ բարիքներ էին ակնկալում, բարիքների դէթ վերջին «պատառը» հայցում հայ իլլիւզիօնիստ յեղափոխականները։

Նախ դիմենք Ռուսաստանի ծայրայեղ անտիպոդին՝ «հայասիրութեան» հայրենիք Անգլիային։

Եթէ ռուսական դիպլօմատիայի բացասական ուղղութեան նկատմամբ Դաշնակցական իդէօլոգները հրապարակ եկան իրենց ուշացած եւ գործնական արժէքից զուրկ խոստովանութեամբ, ապա Անգլիայի դիւանագիտութեան վերաբերմամբ նրանք բացէ ի բաց ցոյց տուին քաղաքագիտական մի անծայր բորկութիւն, մինչև օրս շարունակւող մի բութ հասկացողութիւն։ «Մեծ մարդասէրի»—ինչպէս սիրում է բուրժուական իդէօլոգիան թիւել նմանօրինակ արտայայտութիւններ,—Գլադստօ-

նի՝ ազատ հայրենիքը դարձաւ հայ յեղափոխականների ազատագրական ձգտումների և յուսավառ տենչերի ամենամեծ զօրաւիգն ու փրկարարը։

Զէ որ Անգլիան էր իսկական հեղինակը՝ հայկական բարենորոգումների խնդիրը՝ 61-րդ յօդուածով, միջազգային «հոգացողութեան» առարկայ դարձնողը։ Զէ որ այնտեղ էին որոտում Գլադստօնի «հայասիրական» բարձրակոչ ու կրակոտ ճառերը։ Զէ որ մայիսեան բէֆորմների իրականացման ամենամեծ նախանձախնդիրը Անգլիան էր։ Զէ որ նոյն իսկ պահպանողական կուսակցութեան պարագլուխ լորդ Սոլսբիւրին 1896 թ. այն աստիճան սպառնական ուլտիմատում էր ուղղել Սուլթանին ի նպաստ հայերի։ Ուրեմն ինչպէս չը ոգեւորուել, յոյսերի և ակնկալութիւնների շէնքեր չկառուցանել, երախտագիտութեան բուռն զգացմունքներ չարտայայտել դէպի այդ «ասպետ» ժողովրդի «մարդասէր» քաղաքագէտները. ինչպէս չպնդել ու չհամոզուել ամենից առաջ, որ «տասը տարի առաջ Անգլիան անկեղծ (նստրգիրը մերն է) կերպով կամեցել է փրկել խողխողուող հայ ժողովուրդը» [19]։

Սակայն միւս կողմից ինչպէս հասկանան և ինչով բացատրեն Դաշնակցական իդէօլոգները անգլիական պրեմիերների երկդիմի և հակասական դիրքերն ու ճառերը։ Զէ որ սպառնական ուլտիմատումի հեղինակ Սոլսբիւրին յետ նահանջեց իր «հոգատար» ձգտումներից, առարկելով, որ Տաւրոսի լեռները անմատչելի են անգլիական նաւատորմի համար։ Զէ որ Գլադստօնի յաջորդը՝ ազատամիտների պարագլուխ լորդ Ռոզբերին, 1896 թ. մարտի 3-ին իր ամբողջապէս հայանպաստ ճառից ութ ամիս յետոյ, արտասանում է մի տրամագծօրէն հակառակ ճառ ընդդէմ հայերի։ Զէ որ «տասը տարի առաջ հայերին անկեղծ կերպով փրկել կամեցող

---

19) Տես «Յառաջ» № 25 առաջնորդող (1906 թ.)։

Անգլիան», վերջին տարիներս բոլորովին անուշադրութեան տուեց հայն ու Հայաստանը։

Այսպիսի դէպքերում Դաշնակցութեան անգլուխ ու վերամբարձ իդէօլոգներին ուրիշ ոչինչ չէ մնում անել, բայց եթէ լական ու միստիկ քարոյագէտի նման դիմել էտիկայի կոդեքսին և վերցնել նրա արսենալից «թունդ» պարսաւանքներ և «խարազանող» յանդիմանութիւններ, ինչպէս օրինակ—քաղաքական այլանդակ, աննօրմալ ցատկոտումներ, լիրբ պոլիտիկան, այլասեռած ու նախատեսնելու ընդունակութիւնից զուրկ դիպլոմատներ» [20]) և այլն ասուանել հերոպացիներին,—առանց հասկանալու և հաշի առնելու քաղաքական երևոյթների և նրանց փոփոխութիւնների պատճառակցական (կաուզալ) հիմքերն ու արժատները։

Գէթ մի անգամ Հ. Յ. Դաշնակցութիւնը և մանաւանդ նրա ձգտումների արտայայտիչ իդէօլոգները լուրջ հարց տուին հրապարակով և ստացան իրենց քաքաքական հասկացողութեան պաշարից գոհացուցիչ պատասխան, թէ արդեօք, ունի՞ Անգլիան ազգային-պետական հիմնական, շօշափելի շահեր՝ տեսնել Փոքր-Ասիայում ազատ, ինքնավար Հայաստան, կամ դոնէ իրականացած ըէֆօրմների բարեմասնութիւնները վայելող խաղաղ ու անվրդով հայութիւն. եթէ այո, ինչ չափով, եթէ ոչ—ինչու։ Վառ ֆանտազիան և բանալ դատողութիւնների շաբլօնիզմը, գրչի սուր ու յանդիմանական հարուածները և սրտաբուղխ զգացմունքներն են միայն, որ կազմեցին նրանց համար մշտական լաւատեսութեան և յոռետեսութեան մի անհատնում աղբիւր։

Անգլիայի ճարպիկ ու առաձգական քաղաքականութիւնը ունեցել է շատ աւելի այլազան տենդենցներ, քան

---

20) Ֆր. Միքայէլեան «Ամբոխային տրամաբանութիւն» եր. 56 և 57։

այդ ըմբռնել կարող էին Դաշնակցութեան «սօցիօլօգ» քաղաքագէտները։

Անգլիայի «հայասէր» դիւանագիտութեան իսկական աղբիւրը և անմիջական առաջ-մղիչ ոյժը՝ սկսած յատկապէս 1878 թուականից, եղել է այն պատմական կատաղի հակամարտութիւնը, որ ունի Անգլիան Փոքր-Ասիայում, կամ առհասարակ Թիւրքիայում՝ Ռուսաստանի դէմ։ Անգլիական դիպլոմատիայի ամեն մի «հայանպաստ» քայլը, ասում ենք, արտայայտուած լինի դա վճռական ուլտիմատումներով թէ պարլամենտական ճառերով,— եղել է մի-մի շեշտակի հարուած, մի պարսաւաքար՝ նետուած կղզիաբնակ երկրից դէպի սառցապատ Նեվայի ափերը, ուղղուած «Ծովային Թագուհուց»՝ «Հիւսիսային Արջի» հասցէին։

Որքան ռուսական իմպերիալիզմը ձգտում էր արշաւանքներ գործել մերձաւոր արևելքում իր ընդգծած պատմական ուղիով, այնքան էլ Անգլիան մի ճակատագրական անխուսափելիութեամբ՝ որպէս արթուն հովիւ, հսկում էր նրա քայլերը և խոչնդոտներ յարուցանում նրա առաջ։ Կասկած չկայ, որ ընդհանուր-եւրոպական տնտեսական շահերն ու քաղաքական ձգտումները թելադրում են՝ ըստ հնարաւորին արգելքների և խոչնդոտների մի ամուր պարիսպ քաշել Ռուսիայի առաջ՝ Բոսֆորի ափերին և Փոքր-Ասիայի սահմանների վրայ։ Այդ համաեւրոպական տենդենցիաների արտայայտութեան ու պաշտպանութեան պատմական հեգեմոնիան ստանձնեց իր վրայ Անգլիան։ Անգլիան էր, որ Ղրիմի պատերազմի ժամանակ՝ դաշնակցած Ֆրանսիայի հետ, ցցեց իր հզօր ոյժը ռուսական մարտանաւերի հանդէպ և արգելեց նրա նաւաճողական առաջընթացումը։ Անգլիան էր, որ գրեթէ իր առանձնակի հեղինակութեամբ ջուրը նետեց ռուսական ծրագիրը Բերլինի դաշնագրի յօդուածներով՝ հայկական և մակեդոնական, ու դրանով «Արևելեան Հարց» ասածդ ազատելով ռու-

սական մոնոպոլիայից, դարձրեց միջազգային դիպլոմատիայի մի օբիեկտ։

Եւ նոյն այդ Անգլիան անշեղ շարունակեց իր հակամարտութեան քաղաքականութիւնը տասնեակ տարիներ շարունակ—ոչ ազատ տակտիքական միտումներով պայմանաւորուած երբեմնակի սպրդումներից,—նաև զուտ «Հայկական Հարցի» նկատմամբ։

Մենք ասում ու պնդում ենք, որ Անգլիայի «հայասիրութիւնը» կամ «հայասէր» քաղաքականութիւնը արտայայտուեց միայն այնչափ, որչափ դա անհրաժեշտ էր կատարելու իր պատմական հակառակորդի՝ Ռուսաստանի դէմ։ Իսկ Անգլիայի այդ հակամարտութեամբ պայմանաւորուած «հայասէր» քաղաքականութեան իմաստը կայանում էր Ռուսաստանի ճիշտ հակառակ ձգտումների մէջ։ Որքան ցարի կառավարութեան համար ցանկալի է ազատ պահել Փոքր Ասիայի սահմանները իրական արգելառիթ պատնէշներից՝ իր առաջխաղացումը չկասեցնելու համար, նոյնքան ցանկալի է Անգլիայի համար ճիշտ դրա հակառակը։ Վերջինիս ձգտումների իրականացման միակ նպատակայարմար՝ թէև մինչ անկարելիութեան աստիճանը դժուար, միջոցը ինքնաբար Հայաստանը կամ ըէֆորմների գործադրութեամբ ապահովուած հայկական տերրիտորիան կլինէր,—միջազգային իրաւունքներով երաշխաւորուած մի կտոր ազատ հող, որ կկանգնէ Ռուսաստանի իմպերիալիստական արշաւանքների առաջ որպէս մի անասան պատնէշ և որի սահմանները կոխոտելը կկատարուէր միայն միջազգային կոնֆլիկտի գնով։ Դա ճիշտ նոյն քաղաքականութիւնն էր, ինչ ունէր եւրոպական դեմոկրատիան անցեալ դարու 60-ական թուականներին, երբ նա բուռն ցանկութիւն էր արտայայտում և աջակցում բարոյապէս, որ ռուսական Լեհաստանը անկախութիւն ձեռք բերէ և դառնայ դրանով մի պատուար՝

արևմտեան Եւրոպան պաշտպանելու համար ցարիզմի աւանտիւրիայից։

Եւ իսկապէս, Անգլիայի այդ «հայասէր» քաղաքականութիւնը արտայայտւում էր ամեն մի պատեհ րոպէին—կոտորածների և սարսափների օրերին,—երբ դիւանագիտական կոմբինացիաները, ըստ երևոյթին, ռէֆորմներ իրականացնելու նշաններ էին խոստանում։ Եւ եթէ վերջին տարիներս Անգլիան ձեռք վերցրեց իր շահագիտական «հայասէր» քաղաքականութիւնից, ապա այդ միայն և բացառապէս այն պատճառով, որ նախ Ռուսաստանը առժամանակ արիւն էր նետել Թիւրքիայից կտորներ «դուրեելու» քաղաքականութեան ծրագիրը և իր գաղութային-առևտրական նուաճումների յենակէտը տեղափոխել ծայրագոյն արևելք (դարձեալ Անգլիայի հետ հակամարտութեան վայրեր) և երկրորդ՝ որ մեծ պետութիւնների աստիճանաբար աճող շահագրգռութիւնը Թիւրքիայով՝ մինչ աննախատեսնելի ապագայ ըստ ինքեան կանձահարէ Ռուսաստանին և ըստ ինքեան կհանգստացնէ Անգլիային,—մի պայման, որ իր կողմից չէզօքացնում և ընաւ չեզօքացնում է վերջնիս «հայասէր» քաղաքականութեան մօտիւները։

Այս բոլորից յետոյ պարզ է, թէ որ աստիճանին միամիտ ու խակ հասկացողութիւն է, ասել, որ Անգլիան «տասը տարի առաջ անկեղծ կերպով (նստրգիրը մերն է) կամեցել է փրկել խողոդուող հայ ժողովրդին» —ինչպէս «Յառաջ»-ի (№ 25) առաջնորդողն է ասում։ «Անկեղծութիւն» դիպլոմատիայի մէջ,—մենք մերկացրինք արդէն այդ անհեթեթ դատողութիւնը։

Այսքանը Ռուսաստանի և Անգլիայի մասին։

Ինչ են ներկայացնում Ֆրանսիան ու Գերմանիան. տեսնենք այդ։

VIII.

Ֆրանսիական քաղաքականութիւնը եւ Տաճկահայ Խնդիրը

Նոր ակնկալութիւնների շրջանը։ — Ֆրանսիան և Տաճկահայ խնդիրը։ — Դարձեալ յուսախաբութիւն։ — Դաշնակցական «Հայրենիք»-ի յոյսերը Ֆրանսիական նոր մինիստրութեան վրայ։ — Յեղափոխական անվերջ լարախաղացութիւն։ — Ունի՞ Ֆրանսիան առանձնայատուկ շահեր՝ գործելու ի նպաստ հայկական դատի։ — Ֆրանսիայի դիպլոմատիան՝ պայմանաւորած ֆրանկո-ռուսական դաշնակցութեամբ։ — Պատմա-քաղաքական անցեալը և ներկան։ — Բնական հետեւանքները։

—

Ֆրանսիա...

Նոր յոյսերի և սպասելիքների մի շրջան է ըսկըսւում 90-ական թուականների վերջերից։ Կենտրոնական առանցքը, որի շուրջը պտտում էին քաղցր երազներն ու իլլիւզիաները, կազմում էր Ֆրանսիան։ Անգլիայի «հայասէր» քաղաքականութեան բնական դադարը, վերջ տուեց նաև հայկական շրջաններում տիրող անզլիասիրութեան ու անգլիամոլութեան։ Ազգային յեղափոխականները բևեռեցին իրենց ակնկալող ու հայցող ուշադրութիւնը դէպի «մարդասէր» ու «աղատասէր» Ֆրանսիան։ Անգլո-սաքսերի հայրենիքից յետոյ՝ օսմանների յեղափոխական հայրենիքը, բուրժուա-դեմոկրատական միապետութիւնից յետոյ՝ բուրժուա-դեմոկրատական հանրապետութիւնը...

«...Մի յայտնի ժամանակ,— ասում է սպեցիֆիկ դաշնակցական իլլիւզիաների պսակը այնքան փառահեղ ու քաղցրահնչիւն բառերով հիւսող ու ձևակերպող պ. Ego-ն,— մինիստրութիւնը Ֆրանսիայում՝ կարելի է ասել, հայասէրների տրամադրութեան տակ էր. նրանք կարողանում էին առաջ բերել այս կամ այն քայլը յո-

զուտ Թիւրքահայերի, իրագործել էին տալիս այս կամ այն անյետաձգելի պահանջը...»[21]։

Չէ՞ որ Կոմիթի մինիստրութեան օրով «հայասիրութիւնն» ու հայանպաստ շարժումը այնքան բուռն ծաւալ ընդունեց Ֆրանսիայում։ Չէ՞ որ սոցիալիստ պատգամաւորների հարկադրաբական հարցապնդումները՝ յօգուտ Տաճկահայ Խնդրի, դղրդեցնում էր Ֆրանսիական պարլամենտը։ Չէ՞ որ Դելկասէն խոստմնալից յոյսեր էր տալիս, ընդունեց Դաշնակցութեան պատուիրակութիւնը և «Դրօշակ»-ի մշակած բեֆորմների ծրագիրը 1901 թ.։ Չէ՞ որ նոյն Թեական-կանին Տուբինիների և Լոտանոյների դէպքի առթիւ ծագած կոնֆլիկտը՝ Թիւրքիայի և Ֆրանսիայի մէջ, մեծ յոյսեր էր ներշնչում հայ յեղափոխականների մէջ, որովհետև Միտիլէն մարտանաւ ուղարկող Դելկասէն ստիպողական պահանջ էր դարձրել նաև «Հայկական Հարց»-ի լուծումը և այլն, և այլն։ Այս բոլորը իրաւացի և փաստացի հիմքեր էին համարում դաշնակցական իդէօլոգները նոր յոյսեր տածելու, փայլուն հեռանկարներ ուրուագծելու։ «Ուրախութեան և յոյսի ճառագայթներ, զարթ ու հաղագիւտ օրեր, կաղգուրիչ վայրկեաններ» էին այդ բոլորը Հ. Յ. Դաշնակցութեան համար։

Սակայն դժբախտ ճակատագիր. սուլթանը շտապեց զիջել և բաւարարութիւն տալ Դելկասէին։ Միւս կողմից Պետերբուրգի կաբինետի հարկադրութեամբ հեռացաւ Միտիլէնից Ֆրանսիական ժարտանաւը. ուրեմն «ինչ շահեց» Դաշնակցութիւնը, «ոչինչ, բացարձակապէս ոչինչ։ Ֆրանսիան—շեշտում է պ. Ego-ն վշտացած տոնով—մի անգամ ևս դրժեց իր աւանդական հմայքը (նոտրգրերը մերն են) ի դէպս իր կառավարութեան։ Հակառակ պարլամենտի ստիպողական պահանջներին՝

---

21) Ego, «Գորգեան հանդոյց» (տես «Յառաջ» № 53, 1906 թ.)։

նա անտես արաւ Հայաստանի արիւնլուայ ժողովրդին...» [22]։

Նշանակում է՝ դարձեալ պատրանք ու յուսախաբութիւն, դարձեալ լքու�, դարձեալ բոպէական էֆեկտային լաւատեսութեան յաջորդող մեայուն ու հատու յոռետեսութիւն։ Եւ այդպէս շարունակ։ Մի անգամ բարոյական պարսաւանք ու նախատինք՝ երբեմի «հայասէր» Անգլիայի հասցէին, որ նա չարդարացրեց հայ պարզամիտ ժողովրդի յոյսերն ու հայ նայիւ յեղափոխականների սպասելիքները։ Միւս անգամ մի այլ դաշնակցական իդէօլոգի բերանով նոյն յանդիմանութիւնը Ֆրանսիայի հասցէին, որ նա «դրժեց իր աւանդական հմայքը և անտես արաւ Հայաստանի արիւնլուայ ժողովրդին»։ Մի այլ անգամ նոյնը՝ երբորդ թէ չորրորդ պետութեան հասցէին. և այդպէս անվերջ։

Ռուվիէի մինիստրութիւնից յետոյ Դաշնակցութիւնը դարձեալ զգաստացաւ. մի կողմ նետեց իր տարիների ինքնախաբէութեան դառն փորձերը և աչք տնկեց Սարէն-Կլեմանսօ-Բուրժուայի նորակազմ արմատական մինիստրութեան։

«Կլեմանսոն մեր կողմն է. նա միշտ տնկեղծ (նօտրգիրը մերն է) պաշտպան մը հանդիսացած է հայկական խնդրին։ Նա նախ «Pro Armenia»-ի խմբագրներէն մէկն է, ունի իր մարդասիրական եւ անաչառ (նօտրգրերը մերն են) օրգան մը». Բուրժուա՝ «դա էլ իր հայասիրութիւնը ցոյց տուած է բազմաթիւ առիթներու մէջ». Բրիյան՝ «սա էլ սոցիալիստ է, մեզ կ'օգնի ու կ'օգնի. հայկական խնդիրը իր սրտին շատ մօտ է, թէև հրապարակաւ ցոյց տուած չէ իր հայասիրութիւնը»։ Ուրեմն ինչ պիտի անել։ «Գեղեցիկ ու գնահատելի գործ մը պիտի ըլլար,—շարունակում է դաշնակցական «Հայրենիքը» իր ինքնաբաւական դիտողութիւն-

---

22) Jbid № 58։

ները,—եթէ արտասահմանի հայ կենտրոնները փութայ-
ին շնորհաւորել Ֆրանսիայի նախարարութիւնն ու
առհասարակ անոր բոլոր անդամներն, ընդհանուր ի-
մաստով հեռագիր մը ուղղելով պ. Բլէմանսոյին և պ.
Պուռժուային...»։ «Հայ Յեղ. Դաշնակցութիւնը,—շարու-
նակում է «Հայրենիքը»—պատրաստ է անոնց (այսինքն
արտասահմանի հայ կենտրոններին. Բ. Ի.) աջակցել,
եթէ այս դիւրին գործ մը ևս իրենք իրենց գլուխ հա-
նելու դժուարանան» [23])։

Այսպէս, ինքնախաբուսիկ յոյսերը, անպտուղ ո-
գևորութիւնը, յեղափոխական մարդանքներն ու անվերջ
լարախաղացութիւնը համարեցին դաշնակցական իդէա-
լոգներն ու օրգանները իսկական յեղափոխականին
վայել հոգացողութիւն ու գործնէութիւն։ Ինչպէս միշտ,
այնպէս էլ այս դէպքում, մեր յարգելի դաշնակցական-
ները բացէ ի բաց վկայում են, թէ որ աստիճան ընդ-
ունակ են նրանք այդքան թեթև վերաբերելու դէպի
մի առաջին կարգի բարդ ու կնճռոտ քաղաքական
խնդիր. թէ ինչպէս որևէ ժամանակի, պահ մի մխիթա-
րական և ուրախաւոիթ երևոյթ գիւանագիտութեան հո-
րիզոնի վրայ՝ յափշտակում, էքստազի մէջ է ձգում
նրանց տաք գլուխներին, ժամանում անպտուղ զգաց-
մունքների աշխարհը։

Ինչպէս Անգլիայի, այնպէս էլ Ֆրանսիայի նկատ-
մամբ,—երկու երկրներ, որոնց վրայ ազատագրական
ամենամեծ յոյսն է ունեցել և ունի մինչև այժմ Հ. Յ.
Դաշնակցութիւնը, — հայ յեղափոխականների «քաղա-
քագէտ» պարագլուխները ցոյց տուին ամենամեծ քա-
ղաքագիտական պրօֆանացիան, տհասութիւնը։ Մէկից
թէ միւսից, առանձին պահանջներ ու սպասելիքներ՝ առանց
հաշիւ տալու, թէ ինչու, յանուն ինչի՞, ի՞նչ պատճառով։

Չենք հասկանում, ունի՞ Ֆրանսիան առանձնայա-

---

23) Տես, «Հայրենիք» № 14 (1906 թ., հրատ Ամերիկայում)։

տուկ շահեր հայկական վիլայէթներում մշակուած բէ-ֆորմների ծրագիրն իրականացնելու, կամ իրականացման նախաձեռնութիւն ստանձնելու իր վրայ, որ նրա շլինքին բարձում են առանձին կարգի ակընկալութիւններ։ Բուրժուական հանրապետութիւնը նոյնքան, որքան որևէ բուրժուական միապետութիւն Եւրոպայում, ունի իր առանձին տնտեսական-քաղաքական եւ ֆինանսական շահերը սուլթանի երկրում և այդ շահերի պաշտպանութեան ու առաջխաղացման համար նա ոչ միայն կարիք ու առիթ չունի Թիւրքիայի հետ թշնամանալու կամ նրան նեղութիւն պատճառելու որ և է միջանկեալ խնդրի համար, այլև շահագրգռուած է՝ հաժաեւրօպական status quo-ի սահմաններում, Բ. Դրան հետ պահպանելու հաշտ յարաբերութիւնների մի modus, մի ըստ կարելոյն տևական արժէք ունեցող ձև ու եղանակ։

Անպայման, մենք չենք ուրանում, որ պետութիւնների հաւաքական միջամտութեան դէպքում Ֆրանսիան ինքնին վերցրած՝ առաջիններից մէկը լինի, որ իր դրական ձայնը կտայ ի նպաստ Տաճկահայերի։ Սակայն հէնց այդտեղ՝ այդ հանգոյցաւոր կէտի մէջ է թաղնուած մի խոշոր չարիք, որի մասին մտածել ու հաշիւ տալ չեն ուզում մեր նացիոնալիստները ամեն անգամ, երբ նրանք գութ ու օգնութիւն են հայցում Ֆրանսիայից։ Քանի Ֆրանսիան կշարունակէ պահպանել իր այնքան սրտակցական ու բարեկամական դաշնագրութիւնը Ռուսիայի հետ, այնքան էլ նրա դիւանագիտական դիրքն ու տակտիկը՝ ընդհանրապէս արևելեան և յատկապէս հայկական հարցի նկատմամբ, սերտ միացած պիտի լինի Ռուսաստանի դիւանագիտութեան հետ. աւելի ճիշտ՝ պիտի ստորադասւած և ենթարկուած լինի ռուսական քաղաքականութեան։ Տարիների քաղաքական պատմութիւն ունենք մեր յետեը, դիպլոմատիական մի շարք կոմբինացիաներ, որոնք առանց մաղաչափ կասկածի վկայում են մեր ասածները։

«Ցայտնի է ամենքին,—ասում է Ալ. Ամֆիտէատրով,—որ Անգլիան հայկական սպանդանոցի տպաւորութեան տակ պատրաստ էր պնդելու, որ անյապաղ իրագործուեն բարենորոգումները՝ համակարծիք և աջակից ունենալով Իտալիային։ Բայց դիպլոմատիական այդ արշաւանքը քանդեց Ֆրանսիան՝ ի դէմս արտաքին գործերի մինիստր Հանոտոյի, որ հայկական հարցի հիմունքը խիստ վտանգաւոր համարեց Ֆրանս-ռուսական դաշնադրութեան համար (նորարգրերը մերն են) [24]։

Հանոտոյի յաջորդը՝ Դելկասէն, որ կարծէք ամեն բանում աշխատում էր իր նախորդի հակառակը լինել, հայկական խնդրում հիմնապէս մնաց նոյնը, բացի մի քանի անարժէք կոկետութիւններից։ Ցաճախ ենք լսել ցարիզմի դաշնադրութեամբ շլացած մինիստրի պարլամենտում արտայայտած պլատոնական հաւակրանքը հայերի հասցէին, միշտ, սակայն, որ գլխաւորն է, հակադրելով իրեն արած հարցապնդումներին, որ «Ֆրանսիան միակ ստորագրողը չէ Բերլինի դաշնագրին», հետևապէս Ֆրանսիայից շատ բան սպասել անկարելի է։ Դելկասէին առհասարակ գովաբանող «Դրօշակը» սովոր է միշտ այսպիսի դէպքերում յուզելու, իր բարոյական զայրոյթն արտայայտելու, անուանելով այդ քաղաքագիտական զգուշաւոր խօսքերը՝ «ընդհանուր բառեր, տարտամ, երկսայրի յայտնութիւններ» [25]։

Վերջապէս մենք յիշեցնում ենք Մակեդոնիայի նորագոյն անցեալի ապստամբութիւնը և այդ առթիւ հրապարակ եկած դիպլոմատիական շարժումը (տես VI գլուխը), որի ընթացքում Ֆրանսիան այն աստիճան ենթարկուած էր Ռուսաստանի դիւանագիտական տակտիկային։

Նոյնքան անմիտ են նոր յոյսերը ներկայ արմա-

---

24) Ալ. Ամֆիտէատրով, «Եւրոպա եւ Հայաստան» եր. 25։
25) «Դրօշակ» 1901 թ. № 8, առաջնորդող։

տական մինիստրութեան վրայ. այն մինիստրութեան, որի արտաքին գործերի ղեկավարը այնքան ջերմ ճառ արտասանեց սկզբում՝ ֆրանկո-ռուսական դաշնակցութեան հասցէին, ցանկանալով նրա անխաղտ ու տևական յաջողութիւնը. այն մինիստրութեան, ասում ենք, որի ամենափայլուն ու դեմոկրատ (բուրժուական) ներկայացուցիչը՝ Կլեմանսոն դիւրացրեց ռուս կառավարութեան վերջին մեծ փոխառութիւնը. իսկ նրա այդ քայլը մի ուժեղ հարուած էր ռուսական յեղափոխութեան հասցէին և մի հսկայական նեցուկ՝ բիւրոկրատական-ինքնակալական ըէակցիայի հզօր տիրապետութեան. այն մինիստրութեան, կրկնում ենք, որ պօրտֆէյլները ստանձնելուն պէս մի կատաղի արշաւանք սկսեց բանւորական գործադուլների և սինդիկատների (փոստ-հեռագրատան ծառայողների) դէմ և դրանով ապացուցեց, թէ դեռ որքան պաշտպան ու հաւատարիմ կարող է լինել՝ աջակողմեան կուսակցութիւնների նման, խոշոր բուրժուազիայի շահերին մի մինիստրական կաբինետ, որ հաւակնութիւն ունի արմատական ռամկավար կուսակցութեան ներկայացուցիչը լինելու։

Ով սովոր է դաշնակցականների նման իդէալիստի ակնոցով նայել բէալ յարաբերութիւններին և քաղաքական երևոյթների արժէքը չափել ու գնահատել բարոյական մասշտաբով, միայն նա կարող է զարմանալ և յանդիմանել կամ մեղադրել հանրապետական Ֆրանսիային, թէ ինչու նա ինքնաանկախ չէ իր մերձաւոր արևելքի քաղաքականութեան մէջ, այլ ստորադաս ու ենթակայ դիրքով սերտ միացած է իր հզօր դաշնակցի հետ։ Ով ըմբռնում է, թէ որ աստիճան կենսական է եղել և է Ֆրանսիայի համար նրա սերտ դաշնադրութիւնն ու զինակցութիւնը Ռուսաստանի հետ՝ պետութիւնների ընդհանուր արէօպագում քաղաքական առաջնակարգ ֆակտօրներից մէկը ճանաչելու և համարելու տեսակէտից, նա պարզ կըմբռնէ

նաև, թէ որքան անհրաժեշտ ու հարկադրական է եղել և է Ֆրանսիայի համար, հակառակ քաղաքական քայլեր չանելը այն բոլոր դէպքերում, երբ նրանք վնասում են Ռուսիայի շահերին, հակասում են ցարի քաղաքականութեան. մի խօսքով հաճելի չեն իր դաշնակցի համար։ Եթէ դաշնակցական իդէօլօգները շարունակել են՝ հակառակ այս արտառոց փաստի, բաղխել Ֆրանսիայի մինիստրների և պարլամենտական գործիչների դռները՝ օգնութիւն հայցելու նրանցից, նշանակում է կամ նրանք բոլորովին չեն ըմբռնել այդ շօշափած փաստը կամ թէ չէ յեղափոխական մարդանքներն ու լարախաղացութիւնը գերադասել են յեղափոխական լրջմտութիւնից ու շրջահայեցողութիւնից։

Մեր այս ասածների եզրափակումը՝ Ֆրանսիայի նկատմամբ, կարող է միայն հետևեալը լինել. նախ Ֆրանսիական բուրժուա-դեմօկրատական հանրապետութիւնը առանձնապէս շահագրգռուած չէ Ցաճկահայ Խնդրի լուծման կամ ռեֆօրմների գործադրութեան ինիցիատիւը իր վրայ ստանձնելու. և երկրորդ հաւաքական միջամտութեան դէպքում նա չի մասնակցիլ կօալիցիային, եթէ Ռուսաստանը դէմ է կամ ծեռնպահ այդ դիւանագիտական քայլի նկատմամբ։

IX.

Գերմանիայի քաղաքականութիւնը եւ Ցանկահայ Խնդիրը

Գերմանիայի դարաւոր քաղաքականութեան դեմքը։—Գերմանիան և ճնշուած ազգերի ազատագրութիւնը։—Գերմանիան և Հայկական Հարցը։—Գերմանիայի քաղաքականութիւնը մերձաւոր արևելքում։ Նրա գաղթականական և տնտեսական-առևտրական ձգտումները Փոքր-Ասիայում։—Պանգերմանիստ քաղաքագէտների իղձերը։—Բաղդատի երկաթուղին և տաճկահայերը։—Դարձեալ յոյսեր ու երազներ։—Երկաթուղու տնտեսական-կուլտուրական նշանակութիւնը հայերի համար։—Կապիտալիստական շահագործութիւնը և քաղաքական միտումները։—Անհիմն երազներ։

—

Մեծ է Գերմանիայի պատմական բացասականութիւնը ազգերի ազատագրութեան նկատմամբ։ Դարաւոր քաղաքականութիւն ունի իր յետև այդ երկիրը՝ նուաճողական քաղաքականութիւն, լի աշխարհակալական ձգտումներով, բռնութեամբ և ճնշումներով՝ ուղղուած միշտ ազգերի ազատագրական ջանքերի դէմ—ինչպէս գեղեցիկ կերպով ցոյց է տալիս Կարլ Մարքսը։ Մի պետութիւն, որի դարաւոր քաղաքականութեան պատմական դեմքը նուաճողական է, ագրեսիւ յարձակողական, նա ոչ միայն զուրկ կլինի նոյն իսկ պլատոնական համակրանքից և հեռաւոր աջակցութիւնից ազգերի ազատագրութեան վերաբերմամբ, այլև կդառնայ՝ կողմնակի թէ անմիջական ուղղութեամբ, մի մեծ բռնաւոր ճնշուած ազգերի վրայ։ Շնորհիւ տնտեսական գործոնների հասունութեան և ընդհանուր կուլտուրական զարգացման առանձնայատկութիւններին, Գերմանիայում անհամեմատ մեծ չափով է տիրող ու տևական եղել այդ իւնկէր-բիւրոկրատական անողորմ քաղաքականութիւնը, քան Եւրոպայի որ և է այլ երկրում։ Մեծ մասամբ այդ է պատճառը, որ «Գերմանիան արտասահմանում՝ նոյնիսկ իր բոլոր ժողովուրդներից,

այնքան աւուած ու արհամարհուած է»[26]։

Խոտալական, ունգարական և լեհական ազատագրութեան կռիւների ժամանակ Գերմանիան եղել է խայտառակ կողմնակիցն ու աջակիցը ռէակցիայի, բոնակալական ռէժիմի։ Արևելեան խնդրի գրաւոր պատմութեան ընթացքում Գերմանիան ոչ միայն չէ եղել երբէք—և շահ էլ չունէր լինելու ձեռներէցը այս կամ այն ժողովրդի ազատագրութեան, այլ և շատ դէպքերում նա չեզօք ու ձեռնպահ է եղել դիպլոմատիական կոմբինացիաներին —հաւաքական միջամտութեան ակտին—մասնակցելու նկատմամբ։ Սա պատմական փաստ է, Գերմանիայի սպեցիֆիկ քաղաքականութիւնը բնորոշող փաստ։

Ի՞նչ դիրք ունի Գերմանիան Հայկական Հարցի նկատմամբ—այս է հետաքրքրում մեզ ներկայ րոպէին։

Խոստովանելու է, անտարակոյս, որ ոչ Տաճկահայաստանի ազգային ջոջերը, ոչ «քաղաքագէտ» հոգևորականութիւնը, ոչ կովկասահայ լիբերալիզմը և ոչ էլ դաշնակցական թէ հնչակեան յեղափոխական կազմակերպութիւնները առանձին յոյսեր ու ակնկալութիւններ չեն ունեցել Բիսմարկի հայրենիքից։ Երկաթէ կանցլերի աւանդաբար անցած քաղաքականութիւնը—բացասական-ժխտական դիրքը—շատ աւելի պարզ ու որոշ է եղել, որպէս զի կարելի լինի նրանից երբ և իցէ յուսալ ու ակնկալել։ Սակայն սրանով չի ասում ամենևին, որ մեր յեղափոխական մարմինները անտարբեր են եղել և չեն գործել Գերմանիայում «նպաստաւոր կարծիք» պատրաստելու համար, մի երևոյթ, որին կդառնանք մենք, երբ կքննենք նրանց քաղաքական-պրոպագանդիստական գործունէութեան եղանակը Եւրոպայում։

Գերմանիան վերջին տարիներս դիմել է մի սիս-

---

[26]) Ed. Bernstein. «Die Leiden des armenischen Yolkes und die Pflichten Europas», եր. 37.

տեմատիկ ու հետեւողական քաղաքականութեան մերձաւոր արեւելքի նկատմամբ. կարճ տարիների ընթացքում նրա տնտեսական-առեւտրական, ֆինանսական և նոյն իսկ քաղաքական շահերը (տես գլուխ III.) անհամեմատ արագ են մուտք գործել և ծաւալուել Թիւրքիայում, քան այդ յաջողել է եւրոպական որև է պետութեան։ Վիլհելմ II-ի ըստ երեւոյթին սրտակցական բարեկամութիւնը Աբդիւլ-Համիդի հետ, եղել է քաղաքական ճարպիկութիւններից մէկը՝ ըստ կարելոյն շատ մենարտօնութիւնների գրաւականներ ձեռք բերելու համար։ Եւ միայն Վիլհելմի նման ցինիկ տիպերն են ընդունակ՝ դեսպանի միջոցով «պաշտօնապէս բողոքելու Բ. Դրանը հայկական կոտորածների դէմ, և միևնոյն ժամանակ ինքնագիր նամակ ուղղելու սուլթանին՝ մի carte blanche արքայական բարեկամին, որի մէջ ասւած էր՝ «թագաւորիր, ինչպէս կամքդ ուզում է. չէ՞ որ դու Ալլահի ստուերն ես երկրի վրայ» [27])։

Քաղաքականութեան այդ տենդենցը պարզ արտայայտւում է բոլոր alldeutsche-իստ-պանգերմանիստ իդէօլոգների կողմից՝ սկսած ակադեմիկ հռչակաւոր գիտնականներից մինչև մերձաւոր արեւելքի բողոքական միսիոներութեան — քրիստոնէական հաւատատարսութեան — գլուխ կանգնած դոկտ. Լեպցիուսն ու Ռոհրբախ, որոնց պլատոնական ցաւակցութիւնից այնքան շատ զգացւում և շատ խաբւում են հայ յեղափոխականները։

Գերմանիան ճիգ ու ջանքեր է թափում զուգահեռաբար առաջ տանելու Փոքր-Ասիայում երկու՝ մէկը միւսին նպաստող ձգտումներ. զաղթականական եւ տնտեսական-առեւտրական ձգտումներ։ Գերմանական շատ պանգերմանիստ քաղաքագէտներ են մատնանշել այն հանգամանքի վրայ, որ անգլիական, ֆրանսիական և հոլանդական գաղթավայրերից զուրկ Գերմանիան՝ գաղ-

---

[27]) Ալ. Ամֆիտէատրով, «Եւրոպա և Հայաստան» եր. 27։

թականութեան և տնտեսական շահագործութեան մեծ ու նշանակալից միտիա ունի Փոքր-Ասիայում։ Դեռ 1841 թ. հանճարեղ զօրավարը՝ Մոլտկէն, չորս տարի թիւրքական զօրաբանակի մէջ ծառայելուց յետոյ, մի մեծ յօդուած է հրատարակում «Augsburger Zeitung» յայտնի օրգանի մէջ, որով նա լայն հորիզոններ է բաց անում գերմանական քաղաքականութեան առաջ Փոքր Ասիայում։ Անհրաժեշտ է, որ գերմանական գաղթականութիւնը ուղղէ իր հոսանքը դէպի Փոքր-Ասիա, Եփրատի և Տիգրիսի բերրի հովիտը, Բաբելոնի շրջակայքը, քան դէպի Ամերիկա—շարունակ այս գաղափարն են ստեղծել բուրժուական իմպերիալիստ իդեոլոգները աւելի քան կէս դարուց ի վեր։ Եթէ մինչև այժմ մասսայական գաղթականութիւն չէ եղել Գերմանիայից դէպի Փոքր-Ասիա, բացի միսիոներական ընկերութիւններից, առևտրական և տեխնիկական պերսօնալից, ապա այդ ոչ այն պատճառով, որ Գերմանիան անուշադիր է վերաբերուում դէպի այդ խնդիրը, այլ բացառապէս նրա համար, որովհետև այդ երևոյթը իր քաղաքական հեռաւոր տենդենցիաներով սարսափեցնում է Բ. Դրան դիպլոմատներին։ Հէնց ինքը՝ Աբդիւլ-Համիդը, Անատոլիայի երկաթուղային ընկերութեան կօնցեսիա տուել է այն պայմանով, որ Գերմանիան գաղթականութիւն չընակեցնէ Բաղդատի երկաթուղային գծի տարածութեան վրայ։ Այդ է պատճառը, որ Գերմանիան առ այժմ զարկ է տալիս միւս ծրագրի արագ կիրառման — տնտեսական-առևտրական շահերի ծաւալման և երկաթուղային գծերի կառուցման։

Ոչ սրի համար մութ ու գաղտնի չեն այն խոշոր օգուտները, այն աննման ծառայութիւնը, որ պիտի ունենայ Բաղդատի երկաթուղին Գերմանիայի համար. դրա վրայ այստեղ կանգ առնել աւելորդ է։ Հարկաւոր է միայն շեշտել, թէ որ աստիճան անմտութիւն կլինի

յուսալ և ի նպաստ Հայկական Հարցի դրական միջնորդութիւն սպասել մի պետութիւնից այն ժամանակ, երբ նա իր տնտեսական-ֆինանսական և քաղաքական շահերի առաջխաղացման համար գերազանցապէս շահագրգռուած է մտերիմ ու բարեկամ լինել կամ գոնէ ցոյց տալ՝ տաճիկ կառավարութեան. ասել է ուրիշ խօսքով՝ միջանկեալ, իր շահերի հետ անմիջական առընչութիւն չունեցող խնդիրների համար՝ զանազան ուլտիմատումներով նեղութիւն չտալ կարմիր սուլթանին:

Ուրիշ են սպասելիքները Գերմանիայի ապագայ դիրքից սև քաղաքականութիւնից Փոքր Ասիայում:

Մի մեծ յոյսեր են դնում Բաղդատի երկաթուղու վրայ: Գերմանիան, ասում են, հարկադրուած կլինի հէնց իր շահերի տեսակէտից բարենորոգումներ մըտցնել, տանելի պայմաններ ստեղծել հայկական կեանքում: Դոկտոր Բայնօլդի այդ խնդրի նկատմամբ արտայայտած կարծիքը «Pro Armenia»-ի մէջ՝ առաջ է բերում Բուլգարիայում հրատարակուող Դաշնակցական «Ռազմիկ»-ը և հաստատում նոյնը: Իսկ դոկտոր Բայնօլդը պնդում է հետևեալ անհեթեթութիւնը. «Առայժմ յոյսը Գերմանիոյ վրայ դնելու է. Գերմանիա եթէ իսկապէս կուզէ Փոքր-Ասիոյ մէջ բան մը ընել, հայերու միջոցաւ պիտի կրնայ ընել: Ո՛չ քուրդերը և թուրքերը թունելներ կամ կամուրջներ կշինեն, բայց հայերը կընեն. ուրեմն միակ յոյսը Պաղտատի երկաթուղիի ծրագրին լուրջ իրագործումն է, որ կրնայ հայերուն փրկութիւն բերել» (նոտրգրերը մերն են): [28]):

Այդօրինակ կարծիքներ արտայայտել ու պաշտպանել են հայ լիբերալ օրգանները (յաճախ յեղափոխականների բերանով) շատ անգամ, երբ խօսք է եղել Բաղդատի երկաթուղու հայանպաստ հետևանքների մասին:

---

28) Տես «Ռազմիկ», առաջնորդող, № 68, 1906 թ.

Սակայն դատել այսպէս, կնշանակէ շատ թիւր գաղափար ունենալ կապիտալիստական շահագործութեան մասին. շահագործութիւն օտարի և օտար կապիտալի ձեռներէցութեամբ։

Մեր ուսումնասիրութեան վերջում մենք պիտի ծանրանանք եւրոպական խոշոր կապիտալի շահագործութեան հետեւանքների վրայ Թիւրքիայում, այնպէս որ այստեղ բաւականանանք միայն մի փոքրիկ նկատողութեամբ Բաղդատի երկաթուղու հետեւանքների մասին հայերի համար։

Միայն այնքան, որքան Բաղդատի երկաթուղին կանցնէ հայաբնակ վայրերի միջով կամ մօտով, միայն այդքան էլ նա կունենայ տնտեսական-կուլտուրական ներգործութիւն. քաղաքային հայ համայնները՝ մշակները և գիւղական մարարանները կենթարկուեն պրոլետարիզացիայի,—կդառնան երկաթուղային գծի բանուորներ։ Հայ ժողովրդի միջին խաւերը կմատակարարեն տեխնիքական և առևտրական ատորին պերզօնալը։ Իսկ վերին առևտրական-ունևոր խաւերը իրենց ժողոված բերքերն ու արդիւնքները հաղորդակցութեան դիւրին միջոցներով կտեղափոխեն զանազան կողմեր, կդառնան գերմանացի կամ այլազգի կապիտալիստի ագենտներն ու կօմիսարները ծայրագաւառներում։ Իսկ այս բոլորը, անտարակոյս, մի զգալի տնտեսական կուլտուրական յեղափոխութիւն է, պայմանաւորուած երկաթուղի կոչուած կուլտուրական խոշոր ֆակտորով։

Ինչ ասել կուզէ, որ ի նպաստ կապիտալիստական շահագործութեան, գերմանացի ձեռնարկուները կգերադասեն տեղացիներից—հայերից թէ մահմեդական տարրերից—վարձել իրենց սեւ աշխատանքի վարիչները՝ բանուորները, որովհետև նրանց կարելի է աւելի, քան եւրոպացիներին, բանեցնել աշխատանքի յաւելեալ ժամերով և վարձատրութեան ցածր նօրմայով։

Սակայն մի հանգամանք չպէտք է մոռանալ։ Ինչ-

պէս շեշտեցինք սկզբներում, Գերմանիան շատ է շահագրգռուած Փոքր-Ասիան—գոնէ նրա նպատակայարմար մասերը—իր գաղթավայրը դարձնելու, մասսայական քանակով գերմանացիներ տեղափոխելու այնտեղ, բայց նա դժուարանում է այդ քաղաքական ծրագիրը գլուխ բերել, որովհետև Թիւրքիան ամենայն ըղդուշութեամբ ժխտական դիրք է բռնում դրա հանդէպ։ Մեզ շատ հաւանական է թւում, սակայն, որ Բաղդատի գիծը կառուցանելուց յետոյ Գերմանիան կարող է ուրիշ պատրուակով առաջ տանել իր քաղաքական միտումները. նա կարող է երկաթուղային գծի ծառայողների և աշխատաւորների անունով հետզհետէ գերմանացիներ քաշել Փոքր-Ասիայի խորքերը և ժամանակի ընթացքում պատկառելի ծաւալով մի գաղթավայր ունենալ այնտեղ։ Այդ դէպքում հայերի (և տեղացիների) պրոլետարիզացիան կամ առհասարակ մասնակցութիւնը տնտեսական-հաղորդակցութեան ձեռնարկութիւններին՝ տեղի կունենայ աւելի դանդաղ։

Այսպէս թէ այնպէս, առաջին թէ երկրորդ դէպքում, արագ թէ դանդաղ պրոցեսով առաջ կընթանայ տնտեսական-կուլտուրական մի յարաճուն փոփոխութիւն տաճկահայ նահապետական ժողովրդի վիճակում։

Սակայն որ աստիճանի ժամանութիւն և քաղաքական պրիմիտիւ հայեացք պիտի ունենայ մարդ, երբ այդ բոլորից եզրակցնում է, որ «միակ յոյսը Բաղդատի երկաթուղիի ծրագրին լուրջ իրագործումն է, որ կըընայ հայերուն փրկութիւնը ըլլալ»։ Մի նայիլ կարծիք, որ շտապեցին թուքակել կրկնակի նայիլ հայ յեղափոխականները։

Անտարակոյս մի բան ճիշտ է, որ գերմանական կառավարութիւնը կապահովէ միայն այնքան հայերի կեանքը, ֆիզիքական եսի գոյութիւն, որքան վարձու ստրուկներ են հարկաւոր գերմանական կապիտալիստի գործարաններում կամ երկաթուղային գծի հաստա-

տութիւնների մէջ շահագործելու համար. և այդ բարուկներին միայն այն չափով կապահովէ ու կխնամէ, որչափով կարևոր է նրանց միշտ սարուկ պահելու համար։ Միայն այս չափով ուրիշ ոչինչ։

Դեռ մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ Գերմանիան՝ իւնկերների և բիւրոկրատների Գերմանիան, շահ չունի երբէք արմատական բարենորոգումներ պահանջելու, մտածելու, «հայերու փրկութեան» մասին, հարցնենք ամենից առաջ՝ ինչպէս, իրաւասութեան որ սահմաններում, քաղաքական ինչ լիազօրութեամբ կարող է Գերմանիան «փրկել» կամ գէթ դիւրացնել «փրկութիւնը» մի ազգի, եթէ նոյն իսկ նա ուզենայ այդ, շահագրգռուած լինի դրանում, երբ «Հայկական Հարցը»—իր նեղ թէ լայն չափերի մէջ,—լինելով միջազգային դիպլոմատիայի ենթակայ մի քաղաքական խնդիր, կլուծէ միայն բոլոր կամ ապրեցնող մեծամասնութեան հաւանութեամբ։

Նշանակում է՝ յոյս դնել Բաղդատի երկաթուղու վրայ և սպասել նրանից փրկութիւն մօտիկ ապագայում, դա մի նոյնքան ուտոպիա է և անհիմն երազ, ինչպիսին միւս սպասելիքների է ակնկալութիւնների շարքերն էին, որոնց հետ մենք ծանօթացանք նախորդ գլուխներում։

X.

Աւստրիան, Իտալիան եւ Տաճկահայ խնդիրը

Աւստրիայի և Իտալիայի դերը միջազգային դիւանագիտութեան մէջ։—Աւստրիան, Իտալիան և Արևելեան Խնդիրը։—Նրանց դիրքը Հայկական Հարցի նկատմամբ։—Նրանց զրաւած տեղը դիպլոմատիական կոմբինացիաների ժամանակ։

—

Եւրոպական վեց մեծ պետութիւնների համաշ-

խարհային քաղաքականութեան կենցերտում Աւստրիան ու Իտալիան իրերի բնական բերմունքով գրաւել են երկրորդական տեղ, չափաւոր դեր։ Միջազգային դիւանագիտական կոմբինացիաների ժամանակ նրանք, մանաւանդ Իտալիան, աւելի շուտ հետևել են հեղինակաւոր ձեռներէցութեան, քան ինքնուրոյն քայլերի, առաջնորդելով միշտ, անպայման, սեփական շահերի տեսակէտով։

Արևելեան Խնդրի նկատմամբ Աւստրիան աւելի մօտ ու շահագրգռած է եղել միշտ քան Իտալիան, թէև Աւստրիան այն պետութիւնը չէ, որ ամեն մի քաղաքական ակտի, այս կամ այն հարցի լուծման դէպքում առանձին տոն տալու ոյժ ու հեղինակութիւն ունենար։ Քաղաքականութեան դարաւոր տրադիցիայով (a la գերմանական) և շահերի մօտ զուգորդութեամբ եղել է Աւստրիան մէկը այն պետութիւններից, որի հետ սովորաբար տեղի էր ունենում Entente cordiale—մի ներքին համաձայնութիւն—Բալկանեան թերակղզու այս կամ այն ժողովրդի քաղաքական ճակատագիրը տնօրինելու համար։ Եւ այդ Ententenmächte—համաձայնութեան եկող պետական ոյժերը—լինում են սովորաբար Ռուսաստանն ու Աւստրիան՝ «Արևելեան Խնդրին» մօտ կանգնած պետութիւնները։

Համաձայն 1887 թ. Աւստրո-Ունգարական և Իտալական դաշնագրի մէջ «Արևելեան Հարցի» վերաբերեալ ընդունուած մի պասուսի, պիտի երկուսը միասին որոշ, երաշխաւորուած դիրք ունենան Status quo-ի անխաղտ պահպանման կամ փոփոխութեան դէպքում։ Թէև այդ կէտը չի արգելում երբէք մէկին դրական մասնակցութիւն ունենալու որևէ քաղաքական ակտին այն դէպքում, երբ միւսը ձեռնպահ է մնում։ Խնդիրը վերաբերում է միայն երաշխաւորման և փոխադարձ համաձայնութեան։

Սակայն ինչ են ներկայացնում, ինչ արժէք ու-

նեն այդ պետութիւնները «Հայկական Հարցի» նկատմամբ, այդ է կարևորը և մեզ հետաքրքրողը։ Իսկապէս ասած ոչինչ, Աւստրօ-Ունգարիայի և Իտալիայի դրական թէ ժխտական-բացասական վերաբերմունքը դէպի «Տաճկահայ Խնդիրը»՝ լոկ թւական առաւելութեան և նւազման մի խնդիր է ուրիշ ոչինչ։ Այդ երկու պետութիւնները չունեն այժ ու կարիք «Հայկական Հարցի» նկատմամբ ձեռներէց լինելու՝ դրական թէ բացասական ուղղութեամբ։ Այժ ու հեղինակութիւն չունեն, որովհետև, ինչպէս սկզբում շեշտեցինք, նրանց չէ վերապահւած միջազգային դիպլոմատիայի մէջ առաջնակարգ դիրք գրաւելու և դեր խաղալու նախապատուութիւն։ Կարիք չունեն, որովհետև պակասում են անմիջական-եսական շահերը, որպէս զի հարկադրէին նրանց յօգուտ տաճկահայերի, ի նպաստ նրանց համար խոստացւած բէֆօրմների գործադրութեան՝ պայքարելու, ընդդիմադրելու հակառակորդ պետութիւնների դէմ։ Ընդհակառակը, եթէ նրանք որև է շահ ունեն, դա մի որև է վիճանկեալ խնդրի համար Թիւրքիային չնեղացնելու, իրենցից չսառցնելու, յետ չմղելու ձգտումն է նրանց կողմից, մանաւանդ այնպիսի մի ժամանակ, երբ ուրիշ պետութիւններ, ամենից առաջ Գերմանիան, Թիւրքիային այնքան սիրաշահելու, նրա հետ բարեկամանալու, շահագիտական ջանքեր չեն խնայում։

Եւ առաջխաղացման առանձին յոյսեր ու ակնկալութիւններ չեն էլ սպասել այդ պետութիւններից այն հայ յեղափոխականները, որոնք ուրիշ երկրների դիւանագէտների դռները ժաշելու այժ ու եռանդ չեն խնայում։

Պատմական անցեալը վկայում է, որ այն դէպքում, երբ տեղի է ունենում որև է «վճռական» ուլտիմատում անելու քայլ Թիւրքիայի դէմ՝ հայկական, մակեդոնական կամ նմանօրինակ հարցերի համար, Աւստրօ-Ունգարիան թեքւում է դէպի Ռուսաստանն ու

Գերմանիան, իսկ Իտալիան՝ դէպի Ֆրանսիան ու Անգլիան։ Պետութիւնների այդ կարգի դասաւորութիւնը արդիւնք է գլխաւորապէս նրանց քաղաքական սիստեմների և պետական բէժիմների սուր տարբերութեան—մի տեղ աբսոլիւտիստական և կիսաբսոլիւտիստական-սահմանադրական կազմ, իսկ միւս տեղ՝ դեմօկրատական պարլամենտարիստական կազմ։ Բայց մենք տեսանք և դեռ կտեսնենք, թէ որ աստիճան թոյլ ու անզօր է երկրորդ կարգի պետութիւնների (Ֆրանսիա, Անգլիա և Իտալիա) հաւաքական քայլը, առանց առաջինների, մանաւանդ Ռուսաստանի անմիջական մասնակցութեան։

Այսպէս ուրեմն շնչտակի արտայայտած մեծութիւններ չեն ներկայացնում Աւստրօ-Ունգարիան և Իտալիան «Հայկական Հարցի» համար, ուստի և նրանց քաղաքականութեան վրայ առանձնապէս ծանրանալու կարիք չենք զգում։

XI.

Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Տաճկահայ խնդիրը

Ակնկալութիւնների և յուսիւդիաների նորագոյն փոփոխը։—Դաշնակցական իդէօլոգիայի հակասութիւնների անվերջ շղթան։—Պրիմիտիւ քաղաքագիտութեան և նահապետական-զեհկական լոգիկայի փաստաբանութիւնը։—Ամերիկայի Միաց. Նահանգների շահերի և ազդեցութեան պայքարը Թիւրքիայում։—Միաց. Նահանգները և Տաճկահայ Խնդիրը։—Ամերիկայի քաղաքական կոմպետենցիան սուլթանի երկրում։—Ռուզվելտի մերժողական պատասխանի իմաստը։

—

Միացեալ Նահանգներից «հաւանական» սպասելիքներ, փրկարար յոյս ու ակնկալութիւն ունենալը

կազմում է Հ. Յ. Դաշնակցութեան անպտուղ երազների և անյատակ իլլիւզիաների նորագոյն ֆազիսը։ «Խռոված» ու «երես դարձրած» պաշտօնական Եւրոպայի «անխիղճ սառնասրտութիւնից» հայ յեղափոխականների «հանճարեղ» քաղաքագիտութիւնը յառեց իր ուշադրութիւնը Ատլանդեան ովկիանոսի միւս կողմը։

Նոր յոյսեր փշրուածների փոխարէն, նոր պայծառ աստղ՝ մթագնած հեռանկարների փոխարէն...

Ի՞նչ անել։ Խաբուած՝ «ասպետ» Անգլիայի դիւանագիտական «շողոքորթութիւնից» և հիասթափուած՝ «ազատասէր» Ֆրանսիայի պարլամենտական «փայփայանքներից», Դաշնակցութեան իդէօլոգները գլուխ մէկ արած դիմեցին կամ խորհուրդ տուին դիմել «ամերիկական մեծ հանրապետութեան կորովի նախագահին» [29]։ Ուլտրա-դաշնակցական «Հայրենիքը» Ամերիկայում, «սոցիալիստ» «Յառաջն» ու «Ալիքը» Կովկասում խրախուսանքի և քաջալերութեան ներբողներ առաքեցին ղէպի օտարազգի «հայասէր» ականաւորները և հայկական գաղթավայրերը, յայտարարելով նրանց դիմումը որպէս «Հայկական Հարցի» բարեյաջող լուծման համար մի կարևորագոյն ձեռնարկութիւն։

«... Մենք Հաագայի առաջիկայ համագումարին կապած յոյսերը (նօտրգիրը մերն է) բացարձակապէս ցնորական չենք համարում և կուզէինք, որ համայն հայութիւնը (նօտրգիրը մերն է), ուր և լինէր նա, իր կոչերով, իր դիմումներով աւելի այժ տար ամերիկական մեծ հանրապետութեան կորովի նախագահին» [30]։ Այսպէս է յայտարարում Դաշնակցութեան բերան օրգանը։

Ուրեմն փետրուար ամսին (1906 թ.) Դաշնակցութեան քաղաքագիտական հոտառութիւնը հաւատացած

---

29) «Յառաջ», № 24, առաջնորդող, 1906 թ.
30) Jbid, № 24։

էր կատարելապէս՝ ինչ-ինչ «նպաստաւոր հանգամանքներ» աչքի առաջ ունենալով, որ նախագահ Ռուզվելտը կատանձնէ իր վրա Հասագայի խորհրդաժողովում «Ճաճկահայ Հարցը» քննութեան նիւթ դարձնելու և նրա նպաստաւոր լուծման զարկ տալու ինիցիատիւը. չէ՞ որ «վերջին տարիներս—ըստ պ. Ego ի—նախագահ Ռուզվելտը վաստակել է քաղաքակիրթ աշխարհի հանրային կարծիքի առաջ՝ ընչաձների ասպետի (?) համարում» 31):

Սակայն դեռ մի ամիս չանցած (մարտի 22-ին) Ռուզվելտի մերժումից յետոյ, Դաշնակցութեան իդէօլոգիան ջնջում ու ջրում է մի ձեռքով գրածը միւս ձեռքով: Նոյն պ. Ego-ն—«Հայկական Հարցի» պաշտպանութեան եզակի մենաշնորհիստը—փետրուար ամսին իր կուսակցութեան ունեցած յոյսերն ու հաւատները «ասպետ» նախագահի նկատմամբ, համարում է «մակերեսային զառողութիւն»: Ինչո՞ւ: Որովհետև «շահի փիլիսոփայութիւնը իդեալական քաղաքականութեան հիմնաքարն է, Եւրոպայում թէ Ամերիկայում» 32): Ուրեմն Ռուզվելտը մերժելուց յետոյ դաշնակցական իդէօլոգները հասկացան ու փաստաբանեցին երևոյթը բոլորովին այլ կերպ, տրամագծօրէն հակառակը, թէև դեռ ոչ հիմնովին մարսած, ինչպէս այդ կտեսնենք:

Այդ առաջին հակասութիւնը:

Զորս ամիս անցած (յուլիս ամսին) «Յառաջի» պատանի յաջորդը՝ «Ալիքը», եկաւ նորից հակառակը աւետելու դաշնակցական աշխարհին: «Զնայած մի քանի ամիս սրանից առաջ մամուլի մէջ հրատարակուած Ռուզվելտի մերժման, մենք արժանահաւատ աղբիւրից (նստրգիրը մերն է) տեղեկութիւն ունենք, որ Միացեալ Նահանգները յանձին նոյնիսկ իրենց պաշտօնա-

---

31) Ego. «Դորդեան հանդոյց» («Յառաջ» № 53, 1906 թ.):
32) Jbid, № 53:

կան ներկայացուցիչների՝ տոգորուած են լաւ տրամադրութեամբ դէպի Թիւրքաց Հայաստանի դատը և որ ամերիկական պատգամաւորները ոչ մի միջոց չպիտի զլանան շօշափել տալու հայկական հարցը առաջիկայ խորհրդաժողովին։ Ամերիկայի ձայնը միշտ աւելի ու աւելի բարձր է հնչում թէ միջազգային արէօպագում և թէ մանաւորապէս Բոսֆորի ափերում»,—յայտարարում է դաշնակցական «Ալիքը» նոյն պ. Fgo-ի բերնով—«Եւ եթէ հարցը դրւի ձեռնհաս կողմից (այսինքն Ամերիկայի պաշտօնական ներկայացուցիչներից), ապա յոյսեր կան, որ նա յետ չի մղւի» [33]) (նօտրգրերը մերն է)։

Նշանակում է՝ դաշնակցական իդէօլոգների յուլիսեան դատողութիւնը կրկին արդարացրեց և հաստատեց նրանց փետրուարեան յոյսերը և իր կողմից ջրեց մարդ ամսին այդ բոլորը «մակերևոյթային դատողութիւն, յուսախարութիւն և հիասթափութիւն» համարող ֆրազանները։

Այդ էլ երկրորդ հակասութիւնը, կամ հակասութեան հակասութիւնը։

Դաշնակցութեան ասածների և արածների, գրածների և գործածների մէջ ամենափայլուն կերպով և յաջող պրօբով գործադրւում է Հեգելի հակասութեան դիալեքտիկան։

Մարդիկ յեղափոխականներ են համարւում, առանց յեղափոխական լայն հորիզոնի, քաղաքական դատի վարիչներ՝ առանց քաղաքագիտական ընդարձակ շրջահայեցողութեան, մի որոշ կազմակերպութեան իդէօլոգներ՝ առանց միուրոյն տեսակէտի, զուրկ մտքերի հետևողականութիւնից, դատողութիւնների յաջորդականութիւնից։ Ընդունում են երևոյթի լոկ արտաքին կեղևը, դատում ու փաստաբանում բոպէական էֆֆեկտների ազդեցութեան տակ, գալիս վճռական եզրակա-

---

33) «Ալիք» № 65, առաջնորդող, 1906 թ.

ցութեան թռուցիկ ու խարուսիկ, պահ մի նպաստաւոր տպաւորութիւններից։

Ի՞նչ հիման վրայ և ի՞նչ բիսկով է Դաշնակցութեան քաղաքական իդէօլոգիան յոյսեր տածում և ակընկալութիւններ սպասում Ամերիկայից։ Ո՞վ է Ռուզվելտը, ի՞նչ գործ ու առնչութիւն ունի Ամերիկան Արևելեան կամ Հայկական Հարցերի հետ։ Այս է կարևոր, քննենք այս խնդիրը։

Պրիմիտիւ քաղաքագիտութիւնը և նահապետական-գռեհկական լոգիկան փաստաբանում է այսպէս.

Ամերիկան Եւրոպայի ուրիշ պետութիւնների նման ազդեցութեան պայքար է մղում Բոսֆորի ափերին և հայկական բարձրավանդակի վրայ։ Վերջին տասնամեակում յաճախ վտանգուել են Թիւրքիայում ամերիկական միսօնարները և այդ հանգամանքը գրգռել է ամերիկացիներին, ստիպել է նախագահ Ռուզվելտին մի քանի անգամ լուրջ ազդարարութիւններ անել Բարձր Դրան, հատուցում պահանջել։ Ամեն մի այդ կարգի սպառնալիք խրախուսել է հայ ժողովրդին և թեյադրել նրան, որ մի նոր ծանրակշիռ ֆակտոր է աւելանում արեօպագում՝ սուլթանական կամայականութեան դէմ։ Ամերիկան Աբդիւլ Համիդի վրայ ճնշում գործ դնելով կարողացաւ ամերիկական դեսպանութիւն ստեղծել Կ. Պոլսում և այսուհետև Միսցիալ Նահանգների կառավարութիւնը իր գործօն միջամտութիւնը պիտի ունենայ Տաճկաստանին վերաբերեալ որոշ քաղաքական գործերում։ Ահա հէնց այդ յարմար ժամանակը (այսինքն Ամերիկայի քաղաքական ազդեցութեան աստիճանական ուժեղացումը Թիւրքիայում) շահագործելու և Ամերիկայի նպաստաւոր (?) տրամադրութիւնից օգտուելու համար, հայ յեղափոխականները վճռեցին ձեռնարկել անդուլ ու եռանդուն հայանպաստ գործունէութեան Ամերիկայում՝ բանաւոր, ժամուլի և միտինգների միջոցներով։ Սկսուեց «Armenia» թերթի հրատա-

բակութիւնը։ Եկաւ կաթողիկոսական պատգամաւորութիւնը և սիրալիր ընդունելութիւն գտաւ նախագահից։ Վերջապէս խմբովին դիմումներ եղան զանազան ականաւոր հայասէրներից, որոնք խնդրում էին Ռուզվելտից գնել տաճկահայերի հարցը Հաագայի խորհրդաժողովի առջև 34)։

Ահա այս մանկական թոթովանքների, այս բանալ պոլիտիկայի դէմ է, որ բողոքում է քաղաքագիտական անգամ տարրական ծանօթութիւնն ու հասունութիւնը։ Եթէ ծայրագոյն արևելքում շահախնդրական արշաւանքներ գործող Ամերիկան վերջին տարիներս առանձին եռանդով տնտեսական-առեւտրական պայքար է մղում նաև արևելքում՝ Պօլսում, Զմիւռնիայում և այլ առևտրական քաղաքներում պահանջկոտ շուկաներ գտնելով իր առատահոս նաւթի համար. եթէ իր սեփական քաղաքացիների կեանքն ու գոյքը ապահովելու, իր քաղաքական ազդեցութիւնը տարածող հաւատարոս միսիոնարներին պաշտպանելու և Պօլսում դեսպանութիւն հիմնելու համար Միացեալ Նահանգների նախագահը սպառնալիք է կարդում, ճնշում է գործ դնում Թիւրքիայի վրայ, նշանակում է, ուրեմն, ըստ դաշնակցական իդէօլոգիայի փաստաբանութեան, որ դրանք «մի շարք նպաստաւոր հանգամանքներ են», որոնք իրաւունք են տալիս ֆրադէօլոգ յեղափոխականներին քաղցր անուրջների աշխարհը մտնելու և զառանցելու նորանոր իլլիզիաներ։ Չէ՞ որ Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա և Գերմանիա առանձին-առանձին վերցրած աւելի շատ տնտեսական-ֆինանսական շահեր ունեն Տաճկաստանում՝ եւրոպական թէ ասիական բաժիններում, աւելի ուժեղ ու անմիջական է նրանց քաղաքական ազդեցութիւնը, աւելի շատ են շահագրգր-

---

34) Տես, Էջ0, «Գորգեան Հանդոյցը» (« Ցառաջ» № 53) և «Ալիք» № 65, առաջնորդող։

գուած Թիւրքիայի այս կամ այն կերպ կացութեամբ, աւելի յաճախ են ճնշել և սպառնալիքներ ուղղել սուլթանի հասցէին իրենց սեփական շահերի տեսակէտից, քան Ամերիկան, ինչու՞ այդ հանգամանքը «նպաստաւոր» հող չպատրաստեց մինչև օրս հայ յեղափոխականների համար։ Ի՞նչ փոյթ մի հայկական կամ մակեդոնական հարցի համար, որ այսօր Ամերիկան, վաղը գուցէ նոր հզօրացած Եապոնիան «քաղաքական ազդեցութեան պայքար» կմղեն Բոսֆորի ափերում։ Մի՞թէ կարելի է քաղաքական խնդրի վիճակի տնօրինումը կապել աւվերջ պատահականութիւնների հետ։

Բայց շեշտենք այստեղ ամենակարևոր հանգամանքը։

Դաշնակցականները պէտք է լաւ իմանան, որ Միացեալ Նահանգները զուրկ են քաղաքական կոմպիտենցիայից ակտիւ միջամտելու կամ նոյն իսկ նպաստելու մի այնպիսի քաղաքական հարցի լուծման համար, որի ճակատագիրը կախուած է եւրոպական վեց մեծ պետութիւնների դիպլոմատիական լիազօրութիւնից՝ սկսած Բերլինի դաշնագրի յայտնի դէպքից։ Եւ նախագահ Ռուզվելտի մերժողական պատասխանը պատուում է հէնց այդ կէտի շուրջը. «Միացեալ Նահանգների ջանքերը չունեն անհրաժեշտօրէն օրինական (նօտրգիրը մերն է) և հզօր միջամտութեան ոյժ»—ասում է զգոյշ քաղաքագէտը։ Պանամերիկանիստ Ռուզվելտը լաւ գիտէ, որ ամենն մի միջամտական քայլ իր կողմից կլինէր մի անհաշիւ ու չնախատեսնուած ձեռնարկ, որ անխուսափելիօրէն առաջ կկոչէ «մի ուրիշ պետութեան (կամ պետութիւնների) գործերի ու շարժառիթների բացասականութիւնը»։ Եւ վերջապէս կապիտալիստ տուզերի և ֆինանսիստ բարոնների նախագահը շատ լաւ գիտէ, որ իր հայրենիքը չունի բացարձակապէս որև է անհրաժեշտ շահ՝ հայկական կամ մակեդոնական հարցերի բարեյաջող լուծման նպաստելու համար, փոյթ չէ ամենևին,

որ հայ յեղափոխականների քաղաքագիտական գաղա-
ճութիւնը կշարունակէ անվերջ հռչակել նրան «կորովի
նախագահ», «ճնշուածների ասպետ» և այլ մի շարք չե-
ղած ու չունեցած շողոքորթական արտայայտութիւն-
ներ, որոնք ամեն բան են, բացի յեղափոխական ֆը-
բաղներ լինելուց։

Եթէ Հաագայի առաջիկայ խորհրդաժողովին եւ-
րոպական ազդեցիկ պետութիւնների ներկայացուցիչ-
ները ըստ սովորականին կրկին զամբիւղ նետեն «Հայ-
կական Հարցը» կամ ամենալաւ դէպքում մի պլատո-
նական, գործնական արժէքից բոլորովին զուրկ բեզոլիւ-
ցիա թէ ուլտիմատում մշակեն, դաշնակցական քաղա-
դաքագէտի մտամոլոր գրիչը պիտի նորից ուշքի գայ
և «անէծք ու նզովք» թափելով «նիւթապաշտ ու գծուծ»
շահերով տարուած Եւրոպայի գլխին, կրկին ջրէ իր
վերջին (յուլիսեան) յոյսերն ու սպասելիքները։

Իսկ դա կլինի արդէն հակասութեան հակասու-
թիւն և դարձեալ հակասութիւն։

XII

Ամփոփում եւ եզրափակում

Պետութիւնների շահերն ու ձգտումները Թիւրքիայում։— Դիւանագիտական յարաբերութիւնների անհպաստ դասաւորու-թիւնը՝ անգլո-ռուսական հակամարտութիւն, ֆրանկո-ռուսական դաշնակցութիւն, գերման-թիւրքական բարեկամութիւն։—Մեր հետազօտութեան եղանակը։—Պ. Ego-ի մի սեծ հակասութիւնը։— Բաւական չէ խոստովանութիւնը։—Դաշնակցութեան քաղաքագի-տական իդէօլոգիայի պատկերը։—Քր. Միքայէլեանը և ամբոխա-յին-նահապետական տրամաբանութիւնն ու հոգեբանութիւնը։— Բարոյական նախատինք և բէալ քաղաքականութիւն։

---

*Մեր աշխատութեան նախկին գլուխներում սիս-
տեմատիկաբար թուեցինք ու հաստատեցինք այն ա-*

մենը, ինչ անհրաժեշտ էր հասկանալու՝ մի կողմից Տաճկահայ Խնդրի լուծման մեթոդական բնաւորութիւնը, միւս կողմից՝ միջազգային դիպլոմատիայի պատմական տենդենցիան, իսկ երրորդ կողմից՝ այդ երկուսի փոխադարձ առընչութիւնը։ Մենք ցոյց տուինք եւրոպական պետութիւնների առևտրական-ֆինանսական և քաղաքական շահերը եւրոպական ու ասիական Տաճկաստանում, ապա յանուն այդ շահերի՝ նրանց պատմական ձգտումները, նրանց դիպլոմատիական դուալիզմը, երկդիմի քաղաքականութիւնը Թիւրքիայի ամբողջական գոյութեան նկատմամբ։ Ապա ցոյց տուինք Թիւրքիայի երկսայրի քաղաքականութիւնը պաշտօնական Եւրոպայի հանդէպ՝ «Արևելեան Խնդրի» և մասնաւորապէս «Հայկական Հարցի» նկատմամբ։ Այնուհետև մերկացրինք «Տաճկահայ Խնդրի» ֆիզիօնոմիան, որպէս պաշտօնական Թիւրքիայի և պաշտօնական Եւրոպայի դիւանագիտական յարաբերութիւնները օղակող մի խճճուած հանգոյց։ Մենք զատ-զատ և յաջորդաբար առաջ բերինք եւրոպական բոլոր շահագրգռուած մեծ պետութիւնների և անգամ Ամերիկայի Միացեալ Նահանգների պատրական քաղաքականութիւնը, պետական «էգոիզմի» պատկերը և նրանց վերաբերմունքը դէպի «Տաճկահայ Հարցը»։

Մեր այդ բոլոր ճշգրիտ, փաստալից և անկանխակալ դիտողութիւնները ուրուագծեցին մի սև ֆոն՝ իր ժխտական-բացասական էջերով, որի վրայ ամուր մեխուած է և կմնայ դեռ մինչ աննախատեսելի ապագայ՝ տասնեակ տարիներ քաշելով, դժբախտ հարցը։

Մենք վերլուծելով պետութիւնների ըստ շահերն ու ձգտումները, եկանք այն հաստատակամ եզրակացութեան, որ պետութիւններից և ոչ մէկը՝ Եւրոպայում թէ Ամերիկայում, չունի որ և է էական ինտերես՝ ձեռներէց լինելու Հայկական Հարցի լուծման, նրպաստելու առանձնապէս խոստացած ռէֆորմների

գործադրութեան։ Եւ եթէ մի կամ միւս պետութիւնը որոշ պայմաններում արտայայտել է ոյժ ու ցանկութիւն առաջ ընթանալու յօգուտ հայերի, ապա այդ եղել է ոչ թէ ի սէր հայերի, ոչ թէ «անկեղծ» մօտիւներից դրդուած, այլ իդէալիստ «ազգասէրների» չհաւանած «նիւթապաշտական» մօտիւներից «ստամոքսի գռեհիկ պահանջներից» շահագրգռուած։

Մենք առանձնապէս մատնանշեցինք ազդեցիկ ու հեղինակաւոր պետութիւնների դիւանագիտական յարաբերութիւնների աննպաստ դասաւորութեան վրայ, որ միանգամայն անհնարին է դարձնում պետութիւնների հաւաքական միջամտութեան ակտը և վիճակն ընթացքը յօգուտ «Հայկական Հարցի»։ Անգլո-ռուսական կատաղի հակամարտութիւնը մի կողմից, Ֆրանկո-ռուսական դաշնակցութիւնը—միահեծան ցարիզմի և բուրժուա դեմոկրատական հանրապետութեան ըստ երևոյթին պարադոքսալ այդ ալիանսը—երկրորդ կողմից և թիւրք-գերմանական սրտակցական բարեկամութիւնը՝ երրորդ կողմից,—ահա այն մանուածապատ կոմբինացիան երեք քաղաքական յայտնի երևոյթների, որոնք խորապէս շօշափելով եւրոպական չորս առաջնակարգ պետութիւնների պատմական քաղաքականութեան արմատները, միանգամայն չեզոքութեան ու անտարբերութեան են մատնում «Հայկական Հարցը» դիւանագիտական ընդհանուր պլատֆորմի վրայ։

Մեր հետազօտութեան եղանակը լինելով վերլուծական (անալիտիկ), մտածողութեան մեթոդը՝ դիալեկտիկական-մատերիալիստական, իսկ իրերի եւ երևոյթների գնահատութեան մասշտաբը՝ բէալիստական, անխուսափելիօրէն քայլ առ քայլ ընդհարուեցինք ուտոպիստ իդէալիստ-մորալիստ դաշնակցականների մտածողութեան եթերային ամրոցին և փլեցինք այն, որքան կարողացանք։ Մենք մերկացրինք հակասութիւնների այն լճացած քաօսը, որ արտադրում է անհրաժեշտօրէն ամեն մի դաշնակցա-

կան իդէօլոգ, ով ընդունում է և փորձել է իր գրիչը քաղաքագիտական մարդանքների սահմանում։ Ընթերցողների, մանաւանդ դաշնակցական աւուդիտորիայի համար աւելի ու աւելի հաժոզեցուցիչ դարձնելու համար մեր ըստինքեան հասկանալի պնդումներն ու փաստերը, մենք առաջ բերինք բաղմաթիւ լրացուցիչ վկայութիւններ դաշնակցական իդէօլոգիայի արսենալից։ Դրանք մի շարք դառն խոստովանութիւններ են օբիեկտիւ իրականութեան անողոք երևոյթների. դաշնակցական խոստովանութիւններ, որոնք ըստինքեան վերցրած, առանց կողմնակի կօմենդարիաների, գալիս բաղխում, ընդհարւում են նրանք քաղաքագիտական նայիվութեան, անհիմն լաւատեսութեան հետ։ Մի խօսքով՝ դաշնակցական գրաւոր խոստովանութիւնը տրամագծօրէն հակասում է նրանց գործնական ձգտումներին ու ակտերին։

Օրինակ դաշնակցական իդէօլոգները բացէ իրաց խոստովանում են, մանաւանդ իրենց նորագոյն քաղաքագիտական գրականութեան մէջ, այն ակնյայտնի իրողութիւնը, որ «Ռուսաստանը վճռական(ամենավրճռական, կաւելացնենք մենք) ֆակտօրն է թիւրքահայոց խնդրում», այդպէս լինելով հանդերձ, նա «դէմ է (բացարձակ դէմ է, Բ. Ի.) մեր հարցի գոհացուցիչ լուծման, լինելով գլխաւոր, գերակշռող ֆակտօրը...»։ «Բայց չէ՞ որ կան եւրօպական արէօպագում ուրիշ ֆակտօրներ (նոտրգրերը մերն է), նոյնպէս շահագրգռած թիւրքիոյ կացութեամբ ու բարենորոգութեամբ»—աւելացնում է պ. Ego-ն։ Ուրեմն եթէ կան «ուրիշ ֆակտօրներ» ևս, որոնց վրայ յոյս դնելու իրաւունք ունեն հայ յեղափոխականները, բնական է, որ այդ ուղղութեամբ պիտի գործէին։ Եւ իրաւ, «հայ կուռող մարմինը և նրա պրօպագանդիստ ներկայացուցիչները Եւրօպայում վերջին տարիներս մէկ էական ձգտումն ունէին (նոտրգրերը մերն են)՝ միացնել երեք արևմտեան ռամկավար պետութիւններին (Անգլիա, Ֆրանսիա և

Իտալիա) տաճկահայկական դատի շուրջը»։ Սակայն մի քանի տողից յետոյ պ. Ego-ն ուղղակի շեշտում է, որ «այդ աշխատանքի ներկայացուցիչները յոյս չունեն, որ յիշեալ երեք պետութիւնների վրայ յենելով՝ կարելի է հարցի շատ թէ քիչ արմատական լուծումն ստանալ»։ Ինչու, ի՞նչ պատահեց. որովհետև «այդ անկարելի է թւում առանց Ռուսաստանի համաձայնութեան» (նոտրգրերը մերն է) 35)։

Ընթերցող, ինքներդ հասկացէք դատողութիւնների այս խառնափնթորութիւնը, հակասութեան այս գոհարները։ Ճշմարիտ, Տաճկահայ Խնդրի դաշնակցական պաշտպանութիւնը շատ անաջող երգւեալ հաւատարմատար ունի յանձինս պ. Ego-ի։

Եթէ Դաշնակցութեան քաղաքագիտական իդէոլոգիան համոզւած է և խոստովանում է, որ Ռուսաստանը լինելով Տաճկահայ Խնդրում գերակշռող ֆակտ ը, դէմ է և բացարձակ թշնամի նրա լուծման մինչ այն աստիճան, որ առանց նրա համաձայնութեան անկարելի է հարցի շատ թէ քիչ արմատական լուծումն ստանալ, ապա, ասացէք, ի՞նչ լաւատեսութեամբ է «հայ կուռող ժարմինը» ուրիշ ֆակտորներ որոնում եւրոպական արէօպագում, ի՞նչ յոյսերով է նա աշխատում երեք ռամկավար պետութիւններին խմբել տաճկահայոց խնդրի շուրջը, երբ, կրկնում ենք, առանց Ռուսաստանի համաձայնութեան ոչինչ վճռական չի կարելի անել ու սպասել։ Երկուսից մէկը. կամ սխալ է ձեր կարծիքն ու խոստովանութիւնը Ռուսաստանի դերի նկատմամբ, կամ թէ չէ անմիտ ու անհիմն են ձեր գործնական ջանքերը արտասահմանում։ Բայց որովհետև Ռուսաստանի գերակշիռ դերն ու դիրքը՝ արևել-

---

35) Տես այդ ցիտատների համար՝ Ego, «Գորդեան հանգոյց» («Յառաջ» № 56)։

եան՝ ընդհանրապէս և հայկական՝ մասնաւորապէս, հարցերում մի արտառոց իրողութիւն է, մի աչք ծակող փաստ, որ նոր միայն զգում ու գիտակցում է Դաշնակցութիւնը, այդ պատճառով ճնում է, բնականօրէն, ընդունել, որ և՛ անմիտ ու ապարդիւն, և՛ հողմացոյց ու ուտօպիական է «հայ կուսող մարմնի» գործունէութիւնն ու նպատակը արևմտեան Եւրօպայում (մենք կդառնանք դեռ վերջնիս յետոյ)։

Ահա ձեզ հսկայական ու արմատական հակասութիւնը դաշնակցական խոստովանութեան և դաշնակցական գործունէութեան մէջ։

Բաւական չէ սոսկ խոստովանութիւնը։ Բաւական չէ, որ Տաճկահայ յեղափոխութեան նախանձախնդիրը բացէ ի բաց խոստովանէ, որ իրաւ հայկական կոտորածի դաւադիր պրովոկատորը ինքը՝ ցարի կառավարութիւնն է. բաւական չէ ասել ու կրկնել, որ Տաճկահայ Հարցի գորդեան հանդոյց դարձած վիճակի ամենամեծ պատճառը Ռուսաստանն է. յեղափոխութեան տրեգերը պէտք է քաղաքական հեռատեսութեամբ գիտակցէր մինչ օրս և գիտակցէ դոնէ այժմ, որ միանգամայն աննպատակ ու ապարդիւն են և պիտի լինեն յեղափոխական ճիգ ու ջանքերը, քանի ցարիզմը շարունակէ իրեն վերապահել եւրօպական ցինիկ դիպլոմատիայի հեգեմոնիան։

Այդ բոլորի փոխարէն Դաշնակցութիւնը տասնեակ տարիներ շարունակ մաշեց իր կեանքը դառն ինքնախաբէութեան ու անվերջ հիասթափումների մէջ, օրօրելով մասսայի նինջը սին պատրանքներով, ներշընչելով նրան պարզամիտ լաւատեսութեան անպըտուղ յոյսեր, գրգռելով հայդուկների ռազմական ինստինկտները սենտիմենտալ ու հրաբորբոք զգացմունքներով։ Այնտեղ, ուր անհրաժեշտ է անխնայ մերկացնել, անդամահատել, ու խիստ անալիզի ենթարկել քաղաքական երևոյթների բարդ ու անողոք ստրուկտուրան,

ճիշտ այնտեղ Դաշնակցութեան վերամբարձ իդէօլոգիան սքօղում է (անգիտակցաբար թէ դիտաւորութեամբ) տխուրն ու անմխիթարը, բացասական հետևանքները և իր փաստաղուրկ աբստրակցիաներով ու վերացական ընդհանրացումներով օդային ամրոցներ կառուցանում։ Այնտեղ, ուր հարկաւոր է սառն ու լուրջ մտածել, հեռատեսօրէն և հոտառոտ քաղաքագիտութեամբ դատել, այնտեղ հայ յեղափոխական կազմակերպութեան դեկավար ոյժերը բանաստեղծում ու վիպասանում են, երգում ու երազում են։ Եւ այդ պատճառով հէնց այնտեղ, ուր անհրաժեշտ է փաստացի քննութիւն և տարրալուծական քննադատութիւն, իրական համոզմունք և անխաղտ տեսակէտ, այնտեղ նրանք կերակրւում են յոյս ու հաւատով, անվերջ ակնկալութիւններով և իլլիւզիօն հեռանկարների գաղափարով։ Այնտեղ, ասում ենք, ուր կարևոր է կազմակերպւած ոյժ ու խորը գիտակցական վերաբերմունք, գործունէութեան խելացի, հետևողական տակտիկա, այնտեղ Դաշնակցութիւն ասածդ խաղալիք է խաժումուժ ամբոխի տարերային ոյժի ու շարժման բռնկումների ալիքներին, այնտեղ սառը և կշռադատող ուղղի փոխարէն՝ որոշիչ և ուղեցոյց ֆակտորը հանդիսանում է խուժանի, դաշնակցական միլիտարիզմի ինստինկտային ժղումները, անարխիստական անտակտ ու անհաշիւ գրոհը։

Մենք տեսանք և փաստերով հաստատեցինք դաշնակցական յեղափոխականութեան և մանաւանդ նրա քաղաքագիտական էիդօլոգիայի այդ ֆիզիօնոմիան. մենք տեսանք այդ և կտեսնենք դեռ յետագայ գլուխներում։

«Ամբոխային տրամաբանութեան» հասցէին այնքան առատութեամբ և խիզախութեամբ քարեր նետող իդէօլոգը ամենից շուտ և ամենից շատ տրամադիր է դատելու և փաստաբանելու ամբոխային-նահապետական տրամաբանութեամբ ու հոգեբանութեամբ։ Հայ յեղափոխական շարժման և հայակական կոտորածների

«պատճառներն» ու «առիթները» այնքան մեծ եռանդով «հետախուզող ու հետազօտող հանգուցեալ Միքայէլեանը շատ աւելի պարզամիտ ու իդէալիստ է, որպէս զի կարողանայ հասկանալ նաեւ «Հայկական Հարցի» անկախ, անլուծելի մնացած դրութեան և սուլթանական անսանձ բռնութիւնները «անպատիժ» թողնելու պատճառներն ու առիթները։ Ի՞նչու այնքան անտարբեր ու սառնասիրտ է պլատօնական Եւրոպան սրախողխող ժողովրդի աղեխարշ վիճակի հանդէպ, ինչո՞ւ այն աստիճան ցինիկ, «անգութ ու անողորմ» է միջազգային դիպլօմատիան տասնեակ տարիներ ձըգձըգուած դժբախտ հարցի նկատմամբ։ Այդ երևոյթի պատճառը քննելու և լուսաբանելու համար մեր յարգելի Դաշնակցութիւնը չի ունեցել և չունի երբէք ոչ գլուխ և ոչ տրամադրութիւն։ Իր բազմիցս ունեցած ձախորդութիւնների և առհասարակ ամբողջ անողոք իրականութեան հանդէպ՝ Դաշնակցութեան մեղկ իդէօլօգիան սովոր է և ընդունակ վշտագին տոնով բարոյական պարսաւանք ուղղելու քաղաքական աշխարհի հասցէին. «Թող դրոշմէ ուրեմն պատմութիւնը ժամանակակից Եւրոպայի ճակատին հրէշաւոր դաւաճանութեան (նօտրգրերը մերն է) յաւիտենական արատը, որից սակայն միշտ ազատ կմնայ հայ երիտասարդութեան այն փոքրամասնութիւնը, որ ընտրեց կաւի փշոտ դաշտը...» 36)։

Բարոյական նախատինք այնտեղ, ուր ամենից քիչ կարող է խօսք լինել կամ երբէք չի կարող լինել բարոյականութեան մասին։ Իսկ քաղաքականութեան «անողորմ» ձգտումների հանդէպ՝ մօրալիստի նայիւ թոթովանքներ...։ Այդ անարժէք պրիզմայի միջով են անդրադառնում Դաշնակցութեան քաղաքագիտական գործ-

---

36) Ք. Միքայէլեան, «Ամբոխային տրամաբանութիւն» էջ. 57։

նէութեան ու հասկացողութեան բոլոր գոհարները։ Ի՞նչ հրէշաւոր դաւաճանութեան մասին է Դաշնակցութեան նախկին պարագլխի խօսքը, չենք հասկանում։ Անարդարութիւն կամ դաւաճանութի՞ւն է մի պետութեան կամ պետութիւնների կողմից, եթէ նրանք ըստ իրենց էութեան և իրական շահերի ունեն միշտ համապատասխան քաղաքականութիւն, պատմական ձգտումներ, անկախ միանգամայն այն հանգամանքից, թէ այդ բոլորը ինչ մեծաքանակ զոհերի գնով են կատարւում։

Քանի իրերն ու երեւոյթները հասկանալու եւ գնահատելու համար Դաշնակցութիւնը քննադատական ելակէտ ընդունեց բարոյական սկզբունքը եւ իդէալիստական տենդենցը, այնքան էլ անըմբռնելի կմնայ նրա համար եւրոպական պետութիւնների իրական բաղաքականութեան պատմական տենդենցիան Թիւրքիայում։ Եւ քանի կշարունակէ երկրորդ հանգամանքը, այնքան էլ ընդմիշտ սխալ ու ապարդիւն կլինի հայ յեղ. կազմակերպութիւնների գործնէութեան տակտիկը Տաճկաստանում եւ այնքան էլ «Հայկական Հարցը» մի անորոշ, մութ ու մշուշապատ ապագայ կներկայացնէ նրանց համար։

XIII.

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ *)

1. Յեղափոխական Ճանապարհ կամ յեղափոխական գործունէութիւն երկրի ներսում.

Դաշնակցութեան գործունէութեան տարբեր ճանապարհները։— Նրա յեղափոխական գործունէութեան էութիւնը։—Ցոյցեր, արշաւանքներ, հրոսակային խմբեր, տերօրական գործողութիւններ։—Ո՞րն է յեղ. կուսակցութեան պայքարի իմաստը։—Անուղղակի նպատակը։—Ո՞րն է «բոնի ոյժ»-ի արժէքը։—Եւրոպական միջամտութեան խնդիրը։—Դաշնակցութեան տեսական ու գործնական սխալ ուղղութիւնները։—Յեղափոխ. ֆրազէօլոգիայի թութակում։ —Յեղափոխական գործունէութեան պօզիտիվ ձգտումները և նեգատիվ հետևանքները։—Յեղափոխ. շարժման բնոյթը թիւրքահայերի մէջ։—Հայկական շարժում և հայկական կոտորած։—Դաշ. յեղափոխական ձգտումների մաքսիմումը։—Անցեալ ապագայի հաւանական շանսերը։—Տաճկահայ խնդրի ու շարժման չեզոքացման տենդենցիան։—Ի՞նչ են ասում մեզ նեգատիվ հետևանքները։ —Քր. Միքայէլեանի գրքի արժէքը։—Դիալեկտիկայի հակադրական օրէնքը։—Թիւրքահայի քաղաքական վիճակի երեք շրջանները։—Կոտորածների ուժեղացման սիստեմատիկ քաղաքականութիւնը

Ո՞րոնք են գործունէութեան այն միջոցները, որոնցով հայ յեղափոխական կազմակերպութիւնները

---

*) Ինչպէս մինչև այստեղ են եղել, այնպէս էլ այսուհետև մեր քննադատական դիտողութիւնները կլինեն գլխաւորապէս Դաշնակցութեան մտածածների և գործածների մասին։ Մեր մէջ իրապէս միայն այդ կազմակերպութիւնն է, որ տաճկահայ դատը վարելու պատմական միսսիա է ստանձնել իր վրայ, ուստի աւելորդ համարեցինք առանձնապէս ծանրանալու Հնչակեան կուսակցութեան վրայ, որի փաստական գոյութիւնը տաճկահայ գործերում վաղուց է պատմութեան գիրկն անցել. իսկ նրա անցեալի գործելակերպը ըստ ինքեան քննադատւում է մեր կողմից այնքան, որքան դա նման է Դաշնակցութեան գործելակերպին։

ձգտել են իրականացնելու իրենց մտազբաղ նպատակը։

Ինչպէս ազատագրական շարժման նուիրուած ամեն մի կազմակերպութիւն, այնպէս էլ հայ յեղափոխականները ընտրել են գործնէութեան որոշ մեթոդ, առաջադրած նպատակին հասնելու յայտնի ճանապարհներ։ Ի հարկէ, սրանով չի ասուում միաժամանակ, որ ինչպէս սովորաբար առաջինը, այնպէս էլ երկրորդը ճիշտ ու խելացի ընտրութիւն է արել իր գործելակերպի նկատմամբ։

Մեզ զբաղեցնող նիւթի սահմաններից դուրս է միանգամայն շօշափել այստեղ հայ յեղափոխական կազմակերպութիւնների երկկողմանի գործնէութեան պատմական անցեալը, նրա աստիճանական առաջընթացումն ու օրգանական զարգացումը։ Մեր նպատակն է միայն քննադատել նրանց ընտրած գործելակերպի էութիւնը, իմաստն ու պատմական արժէքը։

Հ. Յ. Դաշնակցութիւնը իր գոյութեան սկզբից ի վեր հետևել է գործնէութեան երկու տարբեր ճանապարհների. տարբեր՝ իրենց ներքին էութեամբ և մեթոդական բնաւորութեամբ, սակայն նման և օրգանապէս շաղկապուած՝ նպատակով և ձգտումներով։

Այդ ճանապարհներն են՝

Յեղափոխական ճանապարհ և քաղաքական ճանապարհ. կամ աւելի ճիշտը՝ յեղափոխական գործնէութիւն երկրի ներսում և քաղաքագիտական-պրոպագանդիստական գործնէութիւն երկրից դուրս՝ արևմտեան Եւրոպայում։

Քրքրեցէք Դաշնակցութեան գործնական անցեալը, դիտեցէք նրա ներկան, թերթեցէք նրա ամբողջ յեղափոխական գրականութիւնը՝ լեգալ թէ անլեգալ, և դուք կգտնէք մեր վերոյիշեալ տողերի փաստական վաւերացումը՝ հարիւրաւոր օրինակներով ու զօկումենտներով։ Երկուսն էլ՝ յեղափոխական թէ պրոպագանդիստական գործնէութեան ճանապարհները, ընթացել են զուգահեռաբար. երկու կարգի գործելակեր-

պի վրայ էլ հայ յեղափոխականները տասնեակ տարիներ շարունակ ֆիզիքական, նիւթական և մտաւորբարոյական անասելի ջանքեր են թափել։

Տեսնենք ո՞րն է այդ երկակի գործնէութեան էութիւնը, իմաստն ու արժէքը։ Նախ առաջնի մասին։

Յեղափոխական ճանապարհ կամ յեղափոխական գործնէութիւն երկրի ներսում։

Յեղափոխական կռիւը՝ տաճկահայ հողի վրայ, ըստ երևոյթին հաժարուել է վաղուց հետէ ամենասրբբագործած ու նուիրական միջոցը հայկական ազատագրութեան։ Հայ վիպասանը (Րաֆֆին) իր հմայիչ ու երևակայական տիպերով, հայ բանաստեղծը (Գամառ Քաթիպա) իր գիւթիչ երգերով և հայ հրապարակախօսը (Գր. Արծրունին) իր կրակոտ յօդուածներով ոգևորում և ռազմատենչ հրաւէր էին կարդում հայ երիտասարդութեան՝ «հայկական ազատութեան արձանը հրաշակերտելու» սահմանի միւս կողմում՝ մայր հայրենիքում։ Լեզալ «յեղափոխականներին» հետևեցին անլեգալ յաջորդները, որոնք անխնայ և անվերապահ գլուխ էին խոնարհում և խունկ ծխում Զէյթունի անմատչելի լեռներում և Սասնոյ հպարտ բարձունքներում հափիզականների դէմ կռուի ահարկու թնդիւնը որոտացնող հայ քաջարի մարտիկների անջինջ յիշատակի առաջ։

Հայ յեղափոխական կազմակերպութեան և՛ «քաղաքագէտ» իդէօլոգը և՛ զինակիր հայդուկը՝ գիտակցաբար թէ ինստինկտային մղումներով տարուած, ակտիւ կռիւը երկրի ներսում համարել են հայկական հարցի դատավարութեան ու լուծման ամենաանհրաժեշտ և ներգործական միջոցներից մէկը։

Սակայն ինչի՞ մէջ պիտի արտայայտուէր այդ յեղափոխական կռուի էութիւնը, ո՞րն է նրա գործնական ընթացքը։

Հայ յեղափոխական կազմակերպութիւնները—ասա

և կրկնիր՝ յատկապէս Դաշնակցութիւնը—նուիրուել էր մեծ եռանդով կազմակերպելու ժողովրդային շարժումներ, ցոյցեր, արշաւանքներ, հրոսակային խմբեր, տերորական գործողութիւններ, զէնքերի, ռազմական այլ և այլ միջոցների և մարտական բանակների փոխադրութիւն դրսից դէպի ներս—աշխարհի զանազան անկիւններից դէպի Տաճկահայաստան։ Պօլսում, Սասունի լանջերում, Վանի շրջակայքում և Զէյթունի լեռներում կատարուած ցոյցերը, ռուս-պարսկական սահմաններից արուած արշաւանքները (Կուկունեան և Խանասոր), ապա մանր-մունր կռիւների և ընդհարումների մի ամբողջ շարք և վերջապէս բազմաթիւ տերորական գործողութիւններ՝ ուղղուած պաշտօնական անձերի և հայ լրտեսների ու դաւաճանների դէմ,—որանք բոլորը մի շարք յեղափոխական երեոյթներ են, որոնք գաղափար են տալիս տաճկահայկական յեղափոխութեան գործնական արտայայտութիւնների մասին։ Եւ ով ուզում է գաղափար կազմել նաև այս բոլոր փաստերի ու երևոյթների պատմական վաւերացման և դաշնակցական արդարացման մասին, թող նա թերթէ դաշնակցականների փիլիսոփայութեան մատեանի—«Ամբոխային տրամաբանութեան»—ամբողջ IV գլուխը (եր. 36—48)։

Բայց ինչի՞ մէջ է կայանում այդ յեղափոխական կուի ու պայքարի իմաստը. ի՞նչ նպատակի են ուղղուած մարտական այդ բոլոր ակտերը։

Տաճկահայ յեղափոխական շարժման միակ նպատակն էր. «կազմակերպուած ու բռնի ոյժով կուել, բողոքել Տաճկաստանում տիրող սպանիչ կարգերի դէմ, մինչև որ վեց պետութիւնների երաշխաւորած միջամտութեամբ այդ կարգերը դէպի լաւը կփոխուեն» 37)։ Այսինքն՝ աւելի մասնաւորելով

37) Ք. Միքայէլեան, «Ամբոխային տրամաբանութիւն» եր. 38։ Նոյն միտքը կարելի է գտնել Դաշնակցութեան գրական-հրապարակախօսական գրեթէ բոլոր նորագոյն արտադրութիւնների մէջ։

և ճշդրիտ արտայայտելով՝ մինչև կբարեփոխի հայի վիճակը, կլուծի հայկական հարցը։

Խնդիրը պարզ է և անվիճելի։ Դաշնակցութեան գործունէութեան յեղափոխական ճանապարհը չունէր ուղղակի և անմիջական նպատակ, այլ ընթանում էր դէպի մի անուղղակի նպատակ։ Յեղափոխական ակտերը, կռիւն ու ցոյցերը՝ ուղղուած անմիջապէս սուլթանական ռէժիմի դէմ, իրենց ոյժերից վեր են համարում, բնականաբար, անմիջական նպատակ դարձնելու նոյն այդ ռէժիմի խորտակումը, Թիւրք կառավարութեան պարտութիւնը և դրանով հայերի ազատագրումը, այլ այդ բոլոր մարտական գործողութիւնները՝ իբրև դժոխային կացութեան ցասկոտ և ըմբոստ արտայայտութիւններ, իրենց հեռաւոր անդրդառնումներով գալիս են բաղխելու պաշտօնական Եւրոպայի դիւանագիտութեան դռները, յիշեցնելու նրան իր ըստանձնած քաղաքական պարտականութիւնները։

Շատ բարի։

Իսկ ո՞րն է «բռնի ոյժի» գործնական արտայայտութեան արժէքը, ի՞նչ նշանակութիւն ունեն յեղափոխական ակտերը, հրոսակային խմբերի արշաւանքները իրենց հետևանքներով։

Դրա պատասխանի գլխաւորը ևս բաց է։ Անհրաժեշտ էին այդ բոլորը Եւրոպական միջամտութիւն առաջ բերելու համար. հարկաւոր էր, որ հայկական բողոքներն ու ըմբոստացումները տեղի ունենային մեծ պետութիւնների աչքի առաջ. կարևոր էր Կ. Պոլսի ցոյցը՝ «ամբողջ Եւրոպայի աչքի առաջ, նրանց շահերի անմիջական թատերաբեմում, ուր մի ատրճանակի պայթում աւելի է լսելի աշխարհին, քան հարիւրաւոր հրացանների որոտումը երկրի խորքերում»։ «Իսկ այդ ամենն ունեն այն խոշոր արժէքը, որ հարուածում են Թշնամու (Թիւրքիայի) հեղինակութեանը թէ ներսում՝ սեփական հպատակների աչքում և թէ դրսում՝

օտարների առաջ, ֆնասում են կառավարչական շահերին, զբաղեցնում են եւրոպական հասարակական կարծիքը և դիւանատները, այսինքն առաջ են մղում միջամտութեան գործը, առնուազը թոյլ չեն տալիս խնդիրը մոռացութեան տալու» 38):

Սրանով մենք կրկին յանգում են բուն խնդրին —միջազգային դիպլոմատիային, որի նպաստաւոր կոմբինացիաներին է վերապահուած, ինչպէս տեսնում ենք, գորդեան հանգոյցի դրական լուծումը:

Սրանով նաև դիւրանում է մեր վերլուծական և քննադատական պօզիցիան, որովհետև մեր հակառակորդների հարազատ խոստովանութեամբ մերկացրինք նրանց գործունէութեան առաջին ճանապարհի բնոյթը:

Ամենից առաջ շեշտենք, որ մեր դիտաւորութիւնից միանգամայն հեռու է՝ քննել այստեղ հայ յեղափոխական շարժման ծագման պատճառներն ու պայմանները, նրա իրաւացի և բնական լինել չլինելու խնդիրը. դա մեզ չէ վերապահուած, դուրս է մեր թեմայի շրջանից: Մենք պիտի քննադատենք միայն հայ յեղափոխականների գործունէութիւնը այնքան, որքան դրա հետ անմիջապէս շաղկապուած են նրանց բաղաքական իլիւզիաները:

Դաշնակցութիւնը՝ իր մտածող ու գործող գլուխներով, երկու խոշոր սխալ է գործել ու գործում —տեսական և գործնական ուղղութեամբ:

Սխալ է մտածում տեսական ուղղութեամբ, երբ նա իր յեղափոխական գործելակերպը պատմականօրէն արդարացնում և փաստաբանում է (տես «Ամբոխային տրամաբանութիւն» և «Հայրենիքի գաղափարը») առհասարակ յեղափոխական շարժումների (ընդհանուր եւրոպական) ընդհանուր թէօրիայի սկզբունքներով:

---

38) Քր. Միքայէլեան, «Ամբոխային տրամաբանութիւն» եր. 38 և 41:

Բոլորովին այլ է Թիւրքիայի մանր-մունր ժողովուրդների ազատագրական շարժումը, բռնակալական լուծը թօթափելու ձգտումները և այլ եւրօպական ազգերի պատմական յեղափոխութիւնը (այս կէտի մանրամասն պարզաբանութիւնը տես «Թիւրքիայի ապագան» վերնագրով գլխի մէջ)։ Նոյն իսկ անկարելի է պատմա-քաղաքական և յեղափոխական միևնոյն պլատֆորմի վրայ դասաւորել «Հայկական Հարց»-ը և «Արևելեան Խնդրի» միւս հատուածները, այնքան խոշոր են տարբերութիւնները առաջնի և երկրորդի մէջ։

Սխալ է գործում Դաշնակցութիւնը գործնական ուղղութեամբ, երբ նա մի յամառ լաւատեսութեամբ հաւատացել ու պնդել է միշտ, որ իր ձեռնարկած յեղափոխական ակտերը՝ ինչ որակով ուղում են լինեն, ոյժ ու հնարաւորութիւն կունենան երբ և իցէ վճռական միջամտութեան հարկադրելու եւրօպական պետութիւններին, կամ թէ նոյն իսկ միջամտական պրոցեսի դէպքում ամեն բան կերթայ հարթ ու անսայթակ ուղիով (իմա 1895 թ. չարաբաղդ մայիսեան ծրագիրը)։ Այդ անմիտ և ոչնչով չհիմնաւորուած լաւատեսութիւնը դարձաւ իրապէս Դաշնակցութեան ամենամեծ ինքնախաբէութեան և խրոնիքական հիասթափումների աշտական աղբիւրը։

«Սուրբ Ազատութիւնը ձեռք է բերում արեան գնով». «Մահ կամ Ազատութիւն»,—յափշտակուած ու շշմուած այս ընդհանուր նշանաբանով, Դաշնակցութիւնը իր աւելի քան 15 տարուայ գոյութեան ընթացքում ոչ միայն ձեռք չբերաւ «ազատութեան» ամենաչնչին շիւղն անգամ, այլև ակամայ իւղ ածեց կեանք ու գոյք լափող սուլթանական հրդեհի վրայ, իսկապէս դէպի «մահ» առաջնորդեց հայ ժողովրդի կեանքի մեխանիզմը։

«Ի՞նչ անել, ձեռք քաշել կուի ասպարէզից— գոչում է «Դրօշակը»—թողնելով ժողովուրդը իր ճակատագրին... Դա մի ելք է, հաճելի նրանց, որոնք սիրում են վճռել կնճռոտ, կենսական խնդիրները ժողո-

վրդից հեռու, նրա կեանքին անտեղեակ։ Բայց դա մի ելք է, որ յեղափոխականի աչքում հաւասար է դաւաճանութեան։ Յեղափոխական կազմակերպութիւնը կարող է ինքզինքը սնանկ յայտարարել...» 39)։

Դա մի դատողութիւն է, կասենք մենք, հաճելի և սիրելի նրանց, որոնք տեղի թէ անտեղի Ռուսիայում են յեղափոխական ֆրազէօլոգիա ամեն անգամ, առանց չափելու և կշռադատելու պատմական առանձնայատկութիւններն ու քաղաքական ուրոյն պայմանները, հասարակական ստրուկտուրան որոշ միջնավայրի, ուր կեանքը յեղափոխելու կարիք կայ։

Ո՞րն է յեղափոխական ակտիւ ոյժերի բեղերվը՝ սահմանի այս թէ այն կողմում, ո՞ւմ դէմ և ի՞նչ պայմաններում է ուղղած յեղափոխական կռւի թունաւոր սլաքը, ի՞նչ բնաւորութեամբ են դասաւորուած այդ բոլորի համար պատասխանատու և դատախազ պաշտօնական Եւրօպայի դիպլօմատիական յարաբերութիւնները, ի՞նչ հնարաւոր շանսերի հեռանկար ունէր քաղաքական հորիզոնի վրայ Դաշնակցութիւնը, որոնք նոյն իսկ հեռաւոր ու համեստ չափերով պսակէին իր ճիգ ու ջանքերը,—սրանք մի շարք հարցեր ու դրութիւններ են, որոնց հակադաշնակցական ըմբռնողութիւնն ու քննութիւնը պարզապէս ժխտում են Դաշնակցութեան յեղափոխական գործելակերպի էութիւնը։

Դաշնակցութեան ամբողջ յեղափոխական գործունէութիւնը առաջնորդուել է երկու անհաշտ ու հակասական տենդենցիաներով։ Առաջինը կազմակերպութեան պօզիտիւ (դրական) ձգտումներն են, երկրորդը՝ հակառակ նրա կամքի, անհրաժեշտօրէն առաջացած նեգատիւ (բացասական) հետևանքները։

Մենք ծանօթացանք արդէն այս նոյն գլխի մէջ նրա պօզիտիւ ձգտումների հետ, որոնցով հայ յեղա-

---

39) «Դրօշակ», 1905 թ. № 1, առաջնորդող։

փոխականները աշխատում էին և աշխատում են հաւաքական միջամտութեան հարկադրել եւրոպական մեծ պետութիւններին յօգուտ «Հայկական Հարցի»։

Ձևակերպենք մեր թեզիսը Դաշնակցութեան պօզիտիւ ձգտումների նկատմամբ և ապացուցենք այն։

Յեղափոխական ակտերն ու երեւոյթները Տաճկահայաստանում—իրենց կողմը թեքելու համար միջազգային դիպլոմատիայի ուշադրութիւնը—ոչ միայն՝ իբրեւ պատմական փաստ, բացարձակապէս ապարդիւն անցան, այլեւ չէին կարող եւ չպիտի կարողանան մինչեւ աննախատեսելի ապագայ նպաստաւոր (գաղափարի լայն իմաստով) հետեւանքներ ունենալ։

Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ մինչև օրս տաճկահայ յեղափոխութիւնը արտայայտւել է ոչ թէ մասսայական շարժումներով ու բռնկումներով, այլ աւելի շուտ պարտիզանական կռւի ձևով։ Յեղափոխութիւնը չի պսակւել հասարակական լայն ու կազմակերպւած խաւերի գործակցութեամբ, յամառ ու տևական ըմբոստացումներով ու խիզախ ճակատամարտերով, այլ աւելի շուտ եղել է հրոսակային խմբերի, տասնեակ անվեհեր հերոսների գաղտագողի յարձակում, յանկարծակի արշաւանք աշիրէթների բանակների վրայ։ Որքան յաճախ են եղել այնպիսի դէպքեր, երբ նոյն իսկ տասնեակների խմբերի առաքելութիւնը վիժել է կանխօրէն, վրիպել է կէտ նպատակից—կամ ընդհարւելով սահմանապահ զօրքի (ռուսական թէ տաճկական) հետ կամ թէ չէ կռւի բռնւելով քիւրդ ու թիւրք հովիւների հետ։

Բուն տաճկահայ ժողովրդի մէջ ոչ միայն բացակայում են զինւած մասսայ, կարևոր չափերով ռազմամթերք, տեխնիկական յարմարութիւններ, այլև յեղափոխականացած—ինչ ենք ասում, լոկ ըմբոստացող ու բողոքող—հասարակական լայն խաւեր։ Այդ է պատճառը, որ ցնցում ու շարժում առաջանում են բուն երկրի ներսում միայն այն ժամանակ, երբ կռւող հայդուկ-

ները գալիս են դրսից (Կովկասից), անցնում են սահմանը։ Այդ է պատճառը, ասում ենք, որ տաճկահայ յեղափոխական շարժումը միշտ տուժեց սիստեմատիկ կուի և ստրատեգիական միուրոյն տակտիկայի բացակայութեամբ։ Ի՞նչ անել, զինուորն ու զինուորականը գալիս էին օտար երկրից...

Արիւն հոսեցնել, կոտորել ու կոտորած տալ ազատագրութեան համար, այո, հասկանում ենք, երբ գոյութիւն ունեն արիւն գնահատելու հնարաւոր շանսեր, երբ ազատութեան նահատակը հասկանում է իր կռիւ մղելու պատմական ժամենան ու անհրաժեշտութիւնը և, որ գլխաւորն է, գիտակցում է նա այն անխուսափելի և նշանակալից հետևանքը, որ իր կռիւը պիտի ունենայ։ Այսպէս լինելուց շատ հեռու են, սակայն, ռուսահայ և թիւրքահայ զոհերը թիւրքական հողի վրայ։ Երկար ամիսների պրօպագանդայից յետոյ հազիւ յաջողւում է յեղափոխական իդէօլոգին մի քանի տասնեակ անձնուէր երիտասարդներ անցնելու Կովկասից Թիւրքիա մանր-մունր ջարդեր անելու համար։ Մարդիկ գնում են, մղած ցեղական բուռն ինստինկտներից, իրենց դժբաղդ եղբօրը օգնելու կամ ազատելու երևակայական գաղափարով տոգորուած։ Իսկ թէ ինչ հետևանք կունենայ իրենց փոքրիկ ջարդը—տասնեակ հայ գիւղերի այրման ու թալանման գնով ի հարկէ, —ապառաժ ժայռերին անխնայ զարնուելը, թէ ինչպէս օր օրի վրայ բարդանում և կնճռոտանում են զէւանագիտական յարաբերութիւնները եւրօպական լիազօրների—որոնց բռնած այս կամ այն ուղղութիւնից է կախուած նաև նրանց կուի հետևանքը,—դրանց մասին ամենևին հաշիւ չեն տալիս ոչ միայն կուող հերոսները, այլև իրենք՝ յեղափոխութեան պարագլուխները։

1890 թ. աւստրիական մինիստր Կալնօկի արտայայտելով տաճկահայ խնդրի մասին, ասել է ի միջի այլոց հետևեալը. «Եւրօպա չկայ, եւ մինչեւ որ հայկական

հողը չշաղախի արիւնով, թող դիտենան հայերը, որ ոչինչ չեն ստանայ» (նշարգրերը մերն են)։

Մինիստրը սխալ է ձևակերպել հարցը։ Տաճկահպատակ ոչ մի երկրում՝ սկսած յունական ապստամբութիւնից մինչև մակեդոնականը, թերևս հողը այնքան առատօրէն ժարդկային արիւն չէ ծծել, որքան հարիւր-հազարաւոր զոհերի ճարակ դարձած թիւրքահայ ժողովրդի բնակավայրերը՝ Զէյթուն-Սասունից մինչև Պոլիս։ Եւ ընդհակառակը, այդ երկրներից և ոչ մէկում այնքան թոյլ ու տարտամ, ցիր ու ցան, երկար ընդմիջումներով, անկազմակերպ, անսիստեմատիկ ու անարխիական ձևով չեն արտայայտուել յեղափոխական ակտերը, ոչխարի նման սրի կերակուր չի դարձել ժողովուրդը, որքան Տաճկահայաստանում է եղել։ Էականը հողը արիւնով շաղախելը չէ, այլ կուի այն մեթոդն ու որակը որ մղւում է յեղափոխական և հակայեղափոխական տարրերի մէջ։Փաստ է, որ թիւրքահայ ժողովուրդը ակտիւ կուի դաշտում չէ կուտակել իր անհամար դիակները, այլ պասսիւ վիճակի մէջ անզէն ու անկազմակերպ ոչխարի հօտը սրի ու հրի անխնայ ճարակ է դարձել։ Եւ եթէ ուղիղ 90-ական թուականներից սկսած «Հայկական Հարցը» «հասունացաւ, ժողովրդական դարձաւ և որոշ հասարակական կարծիք կազմեց իր շուրջը», ապա այդ հանդամանքը հետևողական արձագանք էր հայ ժողովրդի մասսայական նախձիրի, թիւրք կառավարութեան բարբարոսական սրածութեան ու աւերածութեան, և ոչ թէ յեղափոխական ակտիւ կռիւների ահեղ սոսկումների—մի բան, որ այդ ծաւալով չի եղել Տաճկահայաստանում։

Եւ մինչդեռ եւրոպացին—պլատօնական թէ ճըշմարիտ «մարդասէրը»—պատկառում է Բալկանների ապստամբական հուժկու որոտումների, անվեհեր հերոսութիւնների առաջ և իր հիացմունքն ու սիմպատիան արտայայտում նրանց հասցէին, հայերի նկատ-

մամբ, ընդհակառակը, նա ցաւում, խղճահարւում և լոկ արդահատանքի զգացմունք է արտայայտում. Նրա մարդկային գութը զգացում է սրախողող ժողովրդի աղեխարշ տեսարանների հանդէպ։ Աւելին ասենք։ Մինչդեռ եւրօպական դիպլօմատիան առաջին դէպքում որոշ ճնշում ու հարկադրութիւն է զգում իր շահերի տեսակէտից միջամտելու և վճռական ուլտիմատումներով բաւարարութիւն տալու անհանգիստ ու ապստամբ տարրին, հանգցնելու բոցավառ հրդեհը և դրանով առաջն առնելու հեռաւոր բարդութիւնների, որոնք կարող են շահերի հաւասարակշռութիւնը խանգարելու վտանգաւոր պրիտենզիաներ ունենալ, երկրորդ դէպքում (հայերի վերաբերմամբ), ընդհակառակը, ցինիկ դիպլօմատիան գործ ունի արդէն մի անդիմադիր ու մորթուող ժողովրդի հետ, որի նկատմամբ մի Դելկասէի գործակալներ ուղարկելը Վասպուրականի, Վանի, Մուշի կողմերը, մի անգլիական հիւպատոսի արած ազդարարութիւնը տեղական վալիին և ամենաւաւ դէպքում՝ պետութիւնների Բ. Դրան ուղղած մի թոյլ, վճռականութիւնից զուրկ ու ձևական ուլտիմատումը բաւական է, որ դիպլօմատիան առհասարակ իր «պարտքը կատարած» համարէ։

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ արևմտեան աշխարհում «սէր, համակրանք թէ իրարանցում» առաջ բերողը ոչ թէ հայկական շարժումն էր (յեղափոխական, գաղափարիս հարազատ իմաստով) այլ հայկական կոտորածը, իր մեծ անսովոր չափերով։

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ Դաշնակցութեան յեղափոխական ծգտումների մաքսիմումը՝ տասնեակ տարիների ընթացքում, ոչ միայն չունեցաւ որոշ կոնկրետ արդիւնաւոր հետևանքներ (հայերի վիճակը բարեփոխելու նկատմամբ), այլև չունի այսօր ըէալ ոյժերի մի սուար բանակ՝ տաճկահայ գործին նուիրուած, յեղափոխականացած, կազմակերպուած մասսայ, որի

վրայ նա յենել կարողանայ իր «յուսատու գործնէութիւնը» վաղայ համար։

Շատ հեռու չգնանք, շօշափենք ամենաթարմ անցեալի խոշոր երևոյթը։

Եթէ, իրաւ, հայ յեղափոխական կազմակերպութիւնը որև է զօրեղ ցնցում, մասսայական լայն շարժում առաջ բերելու ոյժ ու հնարաւորութիւն ունենար՝ իր տասնեակ տարիների մարտակոչ հրահանգներից յետոյ, ապա նա այդ փորձը կանէր և պէտք է անէր նորագոյն անցեալում, երբ ամենայարմար առիթ էր հանդիսացել նրա համար հայկական հարցը մակեդոնականի հետ միացնելու։ Զեղաւ, ոչինչ ձայն ու ծրպտուն չհանեց Սասունի լանջերում, Զէյթունի բարձունքներում։ Տաճկահայաստանը ընկղմել էր խոր քընի մէջ։ Իր բաղդակից զոհը խեղդուում, մորթոտուում էր սոսկալի կերպով հանրական թշնամու գիտակից ճանկերում, որոնց մէջ ինքը միշտ քաշուում, մղուում է, իսկ իրենք՝ հայերը, լեղապատառ պանիքով բռնուած լոկ դիտում էին նահատակող հերոսի աղիողորմ վիճակը։ Ինքը՝ «Դրօշակ»-ն իսկ դառնապէս գանգատուում է այդ «դատապարտելի» անտարբերութեան վրայ. «Հայերս—ասում է նա,—որ աւելի, քան որև է ուրիշ ազգ աշխարհի երեսին, խոր պիտի ըմբռնէինք մակեդոնական տառապանքը, մենք, որ գիտենք, թէ ինչ է նշանակում կուռողներից թոյլին օգնութեան հասնելը,—մենք լուռ մնացինք (նոտարգրերը մերն է) ապստամբ Մակեդոնիայի դիմաց, մենք չնեռեցինք կուի այն դաշտը, ուր ընդհանուր թշնամու առաջ շարքերով ընկնում էին հերոս մարտիկները. մենք անշարժ, լուռ մնացինք նրանց արեան հանդէպ, ինչպէս անշարժ են օտարները հայի ծով արեան հանդէպ» 40)։ Եւ այդ ինքնասաստ բողոքից յետոյ Դաշնակցութեան կենտրոնական

---

40) «Դրօշակ», 1903 թ. № 9, առաջնորդող։

•րգանը խոստովանում է, որ իրենք «կարելիութիւն» չունէին, որ իրենց բացակայում էր «ոյժ ու պատրաստութիւն»։

Տասնեակ հայդուկների ընդհարումներով՝ սահմանապահ զօրքի և քուրդ հովիւների հետ, և գաղտագողի մանր-մունը յարձակումներով լեռների ծերպերից, Դաշնակցութիւնը երեխայի պարզամտութիւն ունեցաւ շարունակ կարծելու, որ նա դրանով կդրդացնէ արևմուտքը և կհարկադրէ պետութիւններին հաւաքական միջամտութեան դիմելու։ Եւ քաղաքագիտական մի այդպիսի անծայր միամտութիւն դիւանագիտական յարաբերութիւնների դասաւորութեան այն շրջանում, երբ մակեդոնական հազարաւոր մարտնչողների հերոսական ճիգերը այնքան քիչ վարձատրեցին—ի՞նչ ենք ասում—գրեթէ չվարձատրեցին։ Պակաս էր որոտում նահատակ Մակեդոնիայի կուի ահարկու շաչիւնը, քի՞չ զբաղուեց Եւրոպայի հասարակական կարծիքը, մամուլը, պարլամենտական խորհուրդն ու դիպլոմատիան այդ ժողովրդի ապստամբութեան խնդրով։ Սակայն ի՞նչ վճռական քայլ արաւ Եւրոպան։ Ի՞նչ արաւ ամենից առաջ մակեդոնացիների ցեղակից և դաւանակից միահեծան ցարը. նա, որ մի ռուս մուժիկի արիւնն անգամ խնայելու տրամադրութիւն ցոյց տուաւ ի նըպաստ մի մորթոտուող ժողովրդի։ Դա մի սառը ջուր էր, որ ի զարմանս աշխարհի «Հիւսիսային Արջը» ցօղեցրեց Մակեդոնիայի շիկացած երեսին։ Բայց միևնոյն ժամանակ դա մի խոշոր փաստ էր, որ պարզապէս ցոյց տուաւ արևելեան քրիստոնեաների «հզօր հովանաւորի» ընտած ներկայ դիրքը դէպի «Արևելեան Խնդիրը»։ Բուլգարիայի «ապերախտութիւնը» չի կարող մոռացութեան մատնել միապետական քաղաքականութեան հաշուէցուցակում։ Եւ ի՞նչ է ուզում կամ սպասում տաճկահայը, նրա «դատի փաստաբան» Դաշնակ-

գությունը՝ դէպի Մակեդոնիան այդպիսի դիրք բռնող ռուսական դիւանագիտությունից...

Անհերքելի փաստ է, որ այն ինչ Մակեդոնիան ցոյց տուաւ իր տոկուն դիմադրությամբ, արիւնահեղ ընդհարումներով, երբէք չի կարողացել, չի կարող և—ամենայն հաւանականությամբ—չպիտի կարողանայ մինչև աննախատեսնելի ապագայ հայ յեղափ. տարրը անել Փոքր-Ասիայում։ Շատ են հաւանական շանսերը այսպէս դատելու և պնդելու համար։

1. Տաճկահայաստանի աշխարհագրական աննպատակ անդամահատուած դրությունը։

2. Հայ ժողովրդի ցրուածությունը, ապակենտրոնացումը. նոյն իսկ զուտ հայկական վիլայէթներում չէ ներկայացնում նա մի ինքնամփոփ, խտացած ու կոմպակտ բնակչություն, փոքր ինչ ազատ այլազան տարրերից։

3. Եւրոպական-կուլտուրական տարերքից հեռու լինելը և ընդհակառակը յետամնաց-բէակցիոնէր ու բարբարոս ժողովուրդներով շրջապատուած լինելը, որոնք իրենց կեանքը յեղափոխելու փոխարէն, դեռ շարունակում են լինել պատուարը սուլթանական բէժիմի խայտառակ տիրապետության։

4. Տաճկահայերը և տաճկահայ շարժումը զուրկ է մի պետական գէթ համեստ ոյժի օժանդակությունից ու աջակցությունից, ինչպէս օրինակ Բուլգարիան է է մակեդոնացիների համար, որի մակեդոնական ապստամբության ցոյց տուած նիւթական-ֆիզիքական-բարոյական օգնությունը մի ակնյայտնի ճշմարտություն է։

5. Կայ մի ծանրակշիռ հանգամանք, որ դաժոկլեան սրի նման կախուել է իւրաքանչիւր շրջահայեաց յեղափոխականի վերևից։ Այդ այն պարզ իրողությունն է, որ հայ յեղափոխության ղեկավար ոյժերի մեծագոյն մասը—մանաւանդ ինտելիգենցիան, յեղափոխական իդէոլոգիան — անմիջապէս չեն ծագում այն միջնավայրից, ուր կեան-

քի սոցիալ-քաղաքական պայմանները յեղաշրջելու կենսական անհրաժեշտութիւն կայ։ Մինչդեռ Մակեդոնիայի ալեկոծումը բղխում է նոյն ճնշուած մակեդոնական հողից, տաճկահայի յեղափոխութեան դարկերակը գտնւում է ռուսահայի ձեռքում, շարժման ցնցումներ սնող վարիչները գալիս են ըստ մեծի մասին տարբեր միջնավայրից՝ ռուսահայերի շարքերից։ Ինչով ուզում էք բացատրեցէք այն տխուր իրողութիւնը, թէ ինչու՞ ինքը՝ տաճկահայը, բարբարոսութեան անմիջապէս ենթակայ օբիեկտը, տեղից չի շարժւում, չի յուզւում ու կրակւում յեղափոխութեան կայծով, փաստը մնալու է միշտ փաստ, այսինքն այն, որ հայ յեղափոխական շարժումը՝ թիւրքահայ հողի վրայ էապէս գալիս է օտար միջնավայրից։

6. Նոյնքան իրողութիւն է, որ քանի առաջ գնանք, քանի ապագայ օրեր մաշենք, այնքան աւելի զգալի կերպով պիտի զարգանայ՝ տաճկահայերի շարժումը տաճկահայերի գործը դառնալու տենդենցիան։ Այնքան, որքան առաջ գնան ռուսահայերի մէջ հասարակական շերտաւորման խոր ակոսներ, որքան եւրոպական իմաստով ընդլայնւի ու խորանայ մեր մէջ դասակարգային դիֆերենցիացիան. որքան վերանայ քաղաքական ինդիֆերենտիզմը (անտարբերականութիւն) Ռուսաստանում, ստեղծւեն եւրոպական իրաւակարգեր, զարգանան տնտեսական ֆակտորները մեր մէջ, ուժեղանայ դասակարգային գիտակցութիւնը և կազմակերպւի կուսակցական կռիւը մեր իրականութեան մէջ. որքան ռուսահայ պրոլետարիատի շարքերում արմատանայ իր դասակարգային յատուկ իդէոլոգիան և նրա պատմա-քաղաքական ներկայացուցչին—սոցիալ-դեմոկրատիային—յաջողւի մերկացնել ու ցրել ռուսահայ նացիոնալիստների տաճկահայկական իլլիւզիոնիզմն ու ուտոպիզմը, կորզել նրանց վանդակապատ բանակից անգիտակից ու շահագործւող բանւորութեան ու գիւղացիութեան. ա-

ելին ասենք՝ այնքան, որքան մեր բուրժուական կուսակցութիւնները հարկադրական կարիք զգան։ ամուր հիմքերի վրայ խարսխելու իրենց դասակարգային սոցիալ-քաղաքական տիրապետութիւնը կովկասահայ կեանքում և քաղաքականապէս խելամտանան մինչ այն աստիճան, որ իրենք իրենց ոտներով տրորեն տարիներ շարունակ փայփայած լօզունգները՝ «ինքնավար Հայաստանի» ֆանտաստիկական հեռանկարը, և այլն և այլն,—այնքան էլ, կրկնում ենք, անհրաժեշտօրէն պիտի աւելի ու աւելի տաճկահայերի ցաւն ու դարդը դառնայ տաճկահայերի հոգացողութեան առարկայ. այնքան աւելի ու աւելի պիտի չեզօքանայ ու կղզիանայ տաճկահայ խնդիրը ռուսահայ իրականութեան մէջ։

Հէնց այժմ մենք դտնուում ենք այդ չեզօքացման տենդենցիայի սկզբնաւորութեան շրջանում,—խոստովանենք այս տարբրական իրողութիւնը։ Համեմատեցէք մեր տաճկահայ յեղափոխական կուսակցութիւնների պատմական անցեալը և նրանց ներկայի գործնական ընթացքը։ Հնչակեան կուսակցութիւնը, որ կեանքի է կոչւել միմիայն տաճկահայ խնդրի համար, այսօր նրա ռուսահայ մարմինները՝ ասել է կուսակցութեան մեծագոյն մասը, փաստապէս հրաժարւել է տաճկահայ գործերով զբաղւելու. համեմատեցէք նրա 80—90 թուականները ներկայի հետ։ Դաշնակցութիւնը՝ տաճկահայ յեղափոխութեան այդ «ռահվիրանը» և հայկական հարցի «երդւեալ հաւատարմատարը», որի մտահոգութեան առարկան եղել է միշտ և բացառապէս թիւրքահայի «դարաւոր տառապանքի ամոքումը», այսօր իր խառնափնթոր բանակով դարձել է ռուսահայկական մի սոսկավիթխար կազմակերպութիւն, որը իր «երիտասարդ ճիւղի» ծրագրային բեցեղաններով «խըստագոյն մեռամօրֆօզների» ենթարկւելու հաւակնութիւններ է ցոյց տալիս։ Համեմատեցէք այդ կազմակերպութեան անցեալը՝ սկսած 90-ական թուականնե-

բից մինչև 2—3 տարի սրանից առաջ, նրա ներկայի հետ։

Իսկ ի՞նչ է նշանակում տաճկահայ խնդրի ու շարժման չեզոքացում, կղզիացում, հասկանում էք։ Ի՞նչ է նշանակում կովկասահայերին հրաժարեցնելը այդ բոլորի մէջ ակտիւ մասնակցութիւն ունենալուց։ Դա նշանակում է զրկել ու հեռացնել տաճկահայի գործն ու շարժումը սնող «կաթնատու կովը» և թողնել անչափահաս ու անզօր որբին իր ինքնասասա ճակատագրին։ Դա նշանակում է դռները փակել այն անսպառ շտեմարանի, որ հայթհայթում էր տաճկահայ յեղափոխութեան համար և՛ նիւթական օժանդակութիւն և՛ ռազմական-մարտական բանակներ և՛ բարոյական աջակցութիւն։

Ահա այն բոլոր բնական շանսերը, որոնց հիման վրայ մենք պնդում ենք, որ հայ յեղափոխականները Թիւրքիայում անկարող պիտի լինեն կազմակերպել մի այնպիսի անարկու մարտական-ռազմական ոյժ, մասսական շարժում և առաջ բերել մի այնպիսի զօրեղ ցնցում, ապստամբութիւն in Permanenz, որ կարողանան հարկադրել Եւրոպային հաւաքական ակտիւ ու վճռական միջամտութեան դիմելու. մի դիւանագիտական ակտ, որի հեղինակն ու հեղինակութիւնը, անշուշտ, Ռուսաստանը պիտի լինի։ Մեզ համար անկարելի է թւում «Հայկական Հարցը» իր հետևանքներով բօլգարական, եթէ ուզում էք նոյն իսկ մակեդոնական հարց դարձնելը—այս է մեր ասելիքը։ Թէ ինչ հեռանկար ենք ուրուագծում մենք տաճկահայերի համար, դրա մասին կխօսենք «Թիւրքիայի ապագան» վերնագրով գլխի մէջ։

Ահա մեր հաշիւները Դաշնակցութեան պօզիտիւ ձգտումների նկատմամբ։

Ի՞նչ են ասում մեզ նրա յեղափոխական գործելակերպի նեգատիւ հետևանքները, տեսնենք այդ։

Հայ կազմակերպութիւնների յեղափոխական գործունէութիւնը Տաճկաստանում՝ արագացրեց եւ ուժեղ զարկ տուեց կո-

տորածների սիստեմատիկ քաղաքականութեան թիւրք կառավարութեան ձեռքով—ահա մեր թեզիսը

Դաշնակցութեան հանդուցեալ պարագլուխ՝ Քրիստափոր Միքայէլեանը, գրականական մի «փայլուն» աւանդէ թողել—«Ամբոխային տրամաբանութիւն» անունով, որ իր ժամանակին՝ յեղափոխական գործերի կրիզիսի շրջանում, համարեա թէ «ջախջախիչ» նշանակութիւն ունեցաւ: Շատ, անչափ շատ է չափազանցրած այդ բրոշիւրի արժէքը: Մի քանի ընդհատակեան դիտողութիւններով տեսանք մենք արդէն աշխատութեանս զանազան մասերում, թէ ինչպէս ամբոխային տրամաբանութեան ու մտածողութեան դէմ անսպառ եռանդով կռուող այդ «ժողովրդական հերոսը» շատ ու շատ կէտերում հանդիսանում է որպէս ամբոխային տրամաբան ու հոգեբան:

Ո՞րն է այդ գրուածքի հիմնական տենդենցիան:

Հերքել այն կարծիքը, որ իբր հայ յեղափոխական շարժումը եղել է «պատճառ» կամ «առիթ» հայկական կոտորածների: Ապացուցել, որ այդ շարժումը ոչ մի օրգանական առնչութիւն չունի սուլթանիզմի աւանդական ընդլինող քաղաքականութեան հետ: Ապացուցանել, որ հայ յեղափոխութիւնը մի կենսական, անհրաժեշտ, բնական ու իրաւացի շարժում է և այլն և այլն, մի խօսքով փրկել հայ յեղափոխականներին ժամանակակից «փարիսեցիների», «ամբոխային տրամաբանների» բողոքներից ու տրտունջներից:

Եւ այդ հերքումներն ու ապացոյցները յաջող տանելու համար, մեր յարգելի հեղինակը կարիք է ըզգացել եւրոպական շատ ու շատ գրողների և պետական-քաղաքական գործիչների արտայայտած գրաւոր «հեղինակաւոր կարծիքներից» համապատասխան կըտորներ բերելու, նպատակայարմար ցիտատներ քաղելու:

Ինչ ասել կուզէ, որ առհասարակ Տաճկաստանում

մասնաւորապէս թիւրքահայերի մէջ կատարուող անո-
րակելի խոտութիւններն ու բռնութիւնները, անասելի
հալածանքը և մասսայական անվերջ կոտորածը այնպիսի
մի երևոյթ է, որ շատ աւելի խոր ու հիմնական պատ-
ճառներ ունի, քան յեղափոխական շարժումը կարող է
լինել։ Եւ այդ ապացուցելու համար Դաշնակցութեան
իդէօլոգները կարիք չունեն ամենեին ականաւոր եւրոպա-
ցիների կարծիքներից ցիտատներ բերելու, այլ ուղղակի
մերկացնելու բռնակալական ռէժիմի ֆիզիօնոմիան և
նրա քաղաքականութեան պատմական տենդենցիան։

Սակայն միւս կողմից ապացուցել մի երևոյթի—
յեղափոխական շարժման—բնական ու իրաւացի լինե-
լը, չի նշանակում միաժամանակ փրկել ու ազատել
այդ երևոյթը այն անխուսափելի բացասական (նեգա-
տիւ) հետևանքներից, որ նա բերում է իր հետ ան-
հրաժեշտօրէն։ Այս կէտում արդէն Միքայէլեանը մատ-
նում է իր ըմբռնողութեան ու փաստաբանութեան ա-
մենաթոյլ կողմերը։ Հասարակական կեանքի պատմա-
կան զարգացման դիալեկտիկական մի անխուսափելի
օրէնք է, որ ամեն մի դրական ու պրոգրեսիւ երևոյթ
հանդէս է բերում իր հակակշիռ մեծութիւնը—բաց-
ասական ու ռէակցիօնէր երևոյթը, և ընդհակառակը։
Նայեցէք հէնց մեր համառուսական կեանքին։ Բռնու-
թիւնները, հալածանքն ու ջարդերը կազմում են ռու-
սական արբսոլիւտիզմի պատմական քաղաքականութեան
մի բնաանհրաժեշտ տենդենցիան. այդ տենդենցիան
արագացել և ուժեղ թափ է ստացել ներկայ ազատա-
գրական շրջանում։ Եւ Ռուսական Մեծ Յեղափոխու-
թիւնը՝ իբրև մի առաջին կարգի դրական ու պրոգ-
ռեսիւ երևոյթ, նոյնքան անհրաժեշտութեամբ տոն է
տուել միապետական արտակարգ բեպրեսիաների—բանտ,
կախաղան, տաժանակիր աշխատանք, պրովոկացիա,
ջարդ ու կոտորած, հրդեհ ու աւերածութիւն բովան-
դակ Ռուսաստանում։ Ռէակցիայի այդ «հանճարեղ»

արտադրութիւնները՝ իրենց լայն ու սրընթաց ծաւալով, կազմում են յեղափոխութեան անմիջական-բացասական հետևանքը. դա դիալեկտիկական առաջին հակադրութիւնն է։ Նոյն այդ բացասական հետևանքը առաջ է բերում մասսայի հոգեբանութեան մէջ դրական ու բարերար ներգործութիւն, որովհետև որքան ուժեղ ու զարհուրելի է բէակցիայի լուծը, այնքան աւելի ու աւելի է ըմբոստանում, յեղափոխականանում մասսան և երես դարձնում կառավարութիւնից, կուի ելնում նրա դէմ. դա էլ դիալեկտիկական երկրորդ հակադրութիւնը։ Ուրեմն, խոստովանել ռուսական յեղափոխութեան զոհողութիւններով լի ծանր երկունքը, չի նշանակում միաժամանակ վիճելի դարձնել նրա բնական, իրաւացի և անհրաժեշտ լինելու խնդիրը։

Դիալեկտիքական այդ օրէնքը հաստատ ու համարժէք է և՛ տաճկահայ յեղափոխութեան նկատմամբ։ Եւ Բր. Միքայէլեանը, իբրև մի իդէալիստ ու մօրալիստ մտածող, չի ըմբռնել բոլորովին, որ ընդունել հայ կազմակերպութիւնների յեղափոխական գործունէութիւնը և նրա խոշոր բացասական հետևանքները թիւրքահայերի մէջ, ամենևին չի նշանակում անբնական կամ անիրաւացի համարել յեղափ. շարժումը այնտեղ։

Բաւական չէ ասել ու պնդել, որ կարիք կայ, բնական և իրաւացի է յեղաշրջել, արմատական փոփոխութիւնների ենթարկել տաճկահայի դժոխային կացութիւնը. դա շատ քիչ է և տարրական մի իղձ։ Ամենակարևորն այն է, ցոյց տալ ամենահատու և նպատակայարմար ճանապարհը այդ ուղղութեամբ։ Ամենագնահատելի ծառայութիւնը—եթէ փաստաբանողը դաշնակցական իդէօլոգ է—այն կլինէր՝ ապացուցել ու համոզել, որ ընդունած և այժմ գործադրուող յեղափոխական գործելակերպը միակ միջոցն է կամ ամենագլխաւորը, որ պիտի դիւրացնէ և արագացնէ տաճկահայ խնդրի լուծումը. որ Դաշնակցութեան պօզիտիւ ու մաքսիմալ

ձգտումները իրականանալու անխախտ և անկասկածելի հիմքեր ունեն։ Ահա այս պիտի ապացուցէր մեզ «Ազգային տրամաբանութեան» հեղինակը. և դա մի խոշոր ծառայութիւն կլինէր Դաշնակցութեան համար։ Բայց մենք տեսանք նախկին գլուխներում և մանաւանդ այս նոյն գլխում, թէ ինչպիսի ինքնախաբուսիկ յոյսերի, իլլիւզիաների և ուտոպիաների հետ գործ ունենք յանձինս Դաշնակցութեան պոզիտիւ ձգտումների։

Այդ բաւական չէ։ Մենք շեշտեցինք նաև մեր վերոյիշեալ թեզիսի մէջ, որ յեղափոխական գործունէութիւնը արագացրեց և ուժեղ զարկ տուեց Թիւրքիայում հայկական կոտորածների սիստեմատիկ քաղաքականութեան։

Մթթէ բարոյական իրաւունք ունի Դաշնակցութիւնը յանուն իր իլլիւզիաների քողարկելու և ուրանալու պատմական իրողութիւնը։

Ի՞նչ է ասում մեզ կոտորածների քաղաքականութեան պատմութիւնը։

Բաւական է միայն երեք շրջանի վերածել Թիւրքահայի քաղաքական վիճակը, պարզելու համար այդ պատմական իրողութիւնը։

Առաջին շրջանը տևում է մինչև 1878 թ., մինչև Բերլինի կոնգրեսը—մինչև 61-րդ յօդուածով «Հայկական Հարց» ստեղծելը միջազգային դիւանագիտութեան մէջ։ Երկրորդ շրջանը սկսւում է այդ նոյն թուականից և տեւում մինչև 90-ական թուականները։ Իսկ երրորդ շրջանը՝ այդ թուականներից՝ մինչև մեր օրերը։

1878 թ. տաճկահայ ժողովուրդը ապրում էր այնպէս, ինչպէս այդ չէր կարելի այլապէս ենթադրել. մի բուռն քրիստոնեայ, կուլտուրական հակումներով օժտուած ժողովուրդ՝ ենթակայ մի մահմեդական բռնակալ, կիսավայրենի և բարբարոս պետութեան։ Ծանր հարկ ու տուրքը, ծեծն ու բանտարկութիւնը, սպանու-

թիւններն ու կոտորածը—սովորական երևոյթ էր։ Բերլինի կօնգրեսից յետոյ արդէն ուժեղանում է նոյն երևոյթի որակը։ Այն, ինչ պատահական էր՝ որպէս արդիւնք պետական ընդհանուր ընթացքի, դառնում է մտածւած ու ծրագրային, դառնում է սիստեմատիկ երևոյթ։ Բոլգարիայի ազատութեան փաստը, որպէս մի ճիւաղային ուրուական, սաւառնում էր Փոքր-Ասիայում, ներվային վիճակի մէջ ձգում փաղիշահին, վրդովում Աբդիւլ-Համիդի քունն ու հանգիստը։ Անկիւնաքարը այդ բոլոր «չարիքների» 61-րդ յօդւածն էր, ըէֆօրմների խնդիրը։ Խեղճ սուլթան, եթէ նա կարողանար նախատեսնել, թէ ինչ դիրք կրնէր պաշտօնական Եւրօպան դէպի «Հայկական Հարցը», թերևս այդքան չանհանգստանար։ Գաղթականական հալածանքը և բուն հայկական գաւառներում մահմեդականներ բնակեցնելը, մասսայական կոտորածը և այդ բոլորի միջոցով բուն Հայաստանում հայերի համեմատական թիւը նուազեցնելը ու դրանով հայկական հարցի ու ըէֆօրմի անարժէք դարձնելը,—կազմից սուլթանական կառավարութեան նախամտածւած ու սիստեմատիկ քաղաքականութեան էութիւնը, ուղն ու ծուծը։ Եւ այս միտքը հաստատում են գրեթէ այն բոլոր եւրօպացիները, որոնցից ցիտատներ է բերել Քր. Միքայէլեանը։

90-ական թւականներից սկսած արդէն էլ աւելի ուժեղանում և զարկ է ստանում կոտորածների քաղաքականութիւնը։ Յեղափոխական կազմակերպութիւններն են, որ նպաստում են այդ մեխանիզմը լարելուն։ Այդ ապացուցում է հէնց ինքը՝ «Ամբոխային տրամաբանութեան» հեղինակը հակառակ իր կամքի։ Միքայէլեանը սիրով հիւրընկալում է իր գրքի էջերում և ջուխտ ձեռքով ստորագրում Մակ-Կօլի, Էմիլ Դիլօնի, Ջէյմս Բրայսի, Լեպցիուսի և այլ գրողների ու գործիչների տողերը, որոնք միաբերան վկայում են, որ 61-րդ յօդւածը, ըէֆօրմներ մտցնելու վտանգը եղաւ ամենամեծ պատճառն

ու մղիչ ոյժը, որ հարկադրեց սուլթանին փութացնել իր կոտորածների քաղաքականութիւնը և հայ տարրի բնաջնջումով լուծել հայկական հարցը։ Ջէյմս Բրայսը ուղղակի յայտարարում է. «Այն միտքը, որ հայերը Անգլիայի հովանաւորութեամբ պիտի ձգտէին մի ինքնավար Հայաստան ստեղծելու, նման Բոլղարիային, և որ հայերին տրուած այս կամ այն զիջումները կարող էին սկիզբ լինել մի այդպիսի ինքնավարութեան—այդ միտքը ամենագլխաւոր պատճառն էր (նօտրգիրը հեղինակինն է), որ մղեց սուլթանին բոլղարական սարսափները աւելի մեծ չափերով կրկնելու Հայաստանում» 41)։

Այս բոլորի հետ, կրկնում ենք, համաձայն է Քր. Միք., միւս կողմից թէ նա և թէ նրա հետ միասին ամբողջ դաշնակցական քաղաքական իդէօլոգիան ընդունում են, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը պէտք է ձգտէ իր յեղափ. ակտերի միջոցով հարկադրել Եւրոպային մշակուած ու խոստացուած ռէֆորմները իրականացնելու, ամենայայտնի դէպքում՝ ինքնավար Հայաստան վերականգնելու։

Լաւ հասկացէք, ընթերցող։ Եթէ ռէֆորմների խնդիրը կատարեցրել է սուլթանական կառավարութեանն իր հայաջինջ քաղաքականութեան մէջ, իսկ հայ յեղ. կազմակերպութիւնների նպատակն է վճռական ուլտիմատում դարձնել այդ խնդիրը և արագացնել ռէֆորմների գործադրութիւնը, ապա ուրեմն պարզ տրամաբանական հետևանք է, որ ամեն մի յեղափոխական ձեռնարկ ու ակտ Տաճկահայաստանում կհանդիպէ թիւրք կառավարութեան կողմից ամենածայրահեղ թշնամութեան և էլ աւելի առիթ ու զարկ կտայ նրան արագացնելու և ծաւալելու կոտորածների քաղաքականութիւնը։ Ջէ՞ որ—մտածում ու երկիւղ է կրում թիւրք կառավարութիւնը—այդ յեղափոխական շարժումը կարող է հասունաց-

---

41) Քր. Միքայէլեան, «Ամբոխային տրամաբանութիւն» եր. 7։

նել տաճկահայ խնդիրը դիւանագիտական շրջաններում և ժողովել իր լուծման։ Ուրեմն մի կողմից նա աշխատում էր ամուր ու մշտատև հիմքերի վրայ դնել բնաջնջման պոլիտիկայի արագաշարժ մեքենան, միւս կողմից իր այս կամ այն կոտորածի և բռնութիւնների առիթն ու մեղքը վերագրել յեղափոխականների «խրժդը-ժութիւններին», եթէ թիւրք կառավարութիւնը հարկադրւած է լինում եւրոպական պետութիւնների առաջ արդարանալու, իր արիւնոտ ձեռքերը լուանալու։

Առիթների փաստաբանութիւն, արդարացման քաղաքականութիւն...

Այդ միջոցին դիմում է կենտրոնական իշխանութիւնը պաշտօնական Եւրոպայի առաջ, երբ որևէ մեծ ու մասսայական կոտորածի անմիջական հեղինակը, կազմակերպողը ինքն է լինում։ Այդ միջոցին դիմում են տեղական իշխանութիւնները, վիլայէթների փաշաներն ու վալիները, երբ այս կամ այն հայդուկային արշաւանքը փափուկ առիթ են ծառայեցնում տանջեակ հայ գիւղեր քարուքանդ անելու, հրդեհելու և բնակիչներին սրի անցնելու, ապա ժողքը փաթաթելու հայ ապստամբների շլինքին, եթէ պատասխանատուութեան հարց է ծագում անգլիական կամ ֆրանսիական հիւպատոսարանից։ Քանի՞-քանի՞ անգամ է կարդացել ժողովից ամեն մէկը բազմաթիւ սրտաճմլիկ նկարագրութիւններ Տաճկահայաստանի զանազան գաւառներից, ուր հայդուկների այս կամ այն տերրորը, պարտիզանական ցոյցն ու կռիւը կատաղեցրել է հայրիդէականներին և թիւրք ամբոխին հայերի դէմ և սրի ու հրի զոհ դարձրել մի քանի գիւղեր։ Այդ մահացու վախից դրդւած նոյն իսկ շատ հայ գիւղեր կան, որոնք չեն հիւրընկալում հայդուկներին։

Այսպէս ուրեմն մեր վերջին թեզիսը ևս լուսաբանուեց։

Այս ամբողջ գլխի մէջ մեր ջանքն էր ապացու-

ցել, որ Դաշնակցութեան գործնէութեան յեղափոխական ճանապարհն ոչ միայն ապարդիւն անցաւ ու վիժեց իր պօզիտիւ ձգտումների մէջ, այլև ունեցաւ իր խոշոր բացասական հետևանքները թիւրքահայերի կեանքում։

XIV.

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ

2. Քաղաքական ճանապարհ կամ քաղաքագիտական-պրօպագանդիստական գործունէութիւն երկրից դուրս.

Երկու ճանապարհի մեթոդական բնաւորութիւնը և նպատակը։—Դաշնակցութեան գործնէութիւնը արտասահմանում։—Գործունէութեան քաղաքագիտական և պրօպագանդիստական բաժինները։—Արտասահմանեան գործնէութեան իմաստը։—Հակասութիւնների քաօսը հետևանքների մասին. «Յառաջ», Ego, «Դրօշակ», «Ալիք» հակասում են միմեանց և իրենք իրենց։—Միուրոյն տեսակէտի և երևոյթների պատմական ըմբռնողութեան բացակայութիւն։—Տարբերութիւնը առհասարակ յեղափոխականների և դաշնակցական յեղափոխականների մէջ։—Քաղաքական մուրացկանութիւն։—Բանասաեղծ-քաղաքագէտների քաղաքական վուլգարիզմը։—Ո՞րն է քաղաքական պարտականութիւնը Եւրօպայի։—Ինքնախաբէութեան թանձր քօղը։—Հասարակական կարծիք, բուրժուական և պրոլետարական։—Յոյսեր բուրժուական դեմօկրատիայից և ֆիլանտրօպիայից։—Ակնարկ «հայասէրների»։

Մինչդեռ Դաշնակցութիւնն իր գործունէութեան առաջին ճանապարհով — յեղափոխական գործունէութեամբ—ձգտում էր խմբել ու կենտրոնացնել երկրի ներսում իր ռազմիկ, զինակիր ոյժերին, երկրորդ ճանապարհով—քաղաքագիտական - պրօպագանդիստական

գործունէութեամբ,—ընդհակառակը, ցրում, առաքում էր իր ոյժերը երկրից դուրս՝ արևմտեան Եւրոպայի գանազան վայրերը։ Մի տեղ սուր ու թուր, կռիւ ու արիւն, միւս տեղ՝ խաղաղ պրոպագանդա, քաղաքագիտական հնարներ։ Ինչպէս տեսնում ենք, սրանք մեթոդական բնաւորութեամբ միանգամայն տարբեր ուղիներ են, աննման ու անյարակից։ Սակայն իրենց ներքին խմաստով, նպատակով և տենդենցիաներով այդ երկու ուղիները նոյնն են, յար և նման։ Դաշնակցութիւնը մշակել է գործունէութեան այդ տարբեր մեթոդները միևնոյն հասարակական իդէալի իրականացման համար։

Ինչպէս գործունէութեան առաջին ճանապարհը, այնպէս և երկրորդը ունէր և ունի մի միակ նպատակ։ազդել Եւրոպական դիւանագիտութեան վրայ, հարկադրել պետութիւններին հաւաքական միջամտութեան դիմելու—ակտիւ, վճռական միջամտութեան, յօգուտ հայկական հարցի։

Եւ մինչդեռ դա անուղղակի և միջնորդական նպատակն էր կազմում—ինչպէս իր տեղում շեշտեցինք—առաջին կամ յեղափոխական ճանապարհի համար, Եւրոպայի ծոցում առաջ տարուող երկրորդ կարգի գործունէութիւնը, իր անմիջական և ուղղակի նպատակն էր դրել «միջազգային արէօպագում» նպաստաւոր կօմբինացիաներ առաջ բերել։

Հայանպաստ պրոպագանդն ու շարժումը արևմտեան Եւրոպայում կազմել են միշտ դաշնակցական բոլոր իդէօլօգների յուսավառ տենչն ու իղձը։ Գրական այն բոլոր արտադրութիւնների մէջ, որոնց հետ մենք գործ ունեցանք, կարմիր թելի նման անցնում է մի հիմնական տենդենց՝ յեղափոխական գործունէութեան հետ զուգընթացաբար և հաւասար եռանդով առաջ տանել պրոպագանդիստական գործունէութիւնը քաղաքակիրթ երկրներում։ Եւ՝ Քր. Միքայէլեան, և՝ Ego ու Վարանդեան, և Է. Ակնունի, և՝ «Դրօշակ»-«Յառաջ»-«Ալիք»-ի շէֆ

պուբլիցիստները և այլն,—բոլորն էլ նոյն երգն են երգում՝ յաճախ անախորժ դիսօնանսով, նոյն տենդենցն են արծարծում ու պնդում՝ յաճախ անուղղելի հակասութիւններով։

Նայեցէք գործնական ընթացքին։ Կազմակերպութիւնը «Արևմտեան Բիւրո» է հիմնել, իր ստորադրեալ մարմիններով թերթեր է հրատարակում, նոյն իսկ օտար լեզուներով («Pro Armenia» Փարիզում, Լօնդոնում) թերթերի հրատարակութեան նպաստում, օժանդակ օրգաններ է կեանքի կոչում, ինչպէս օրինակ «Եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւնը», որ իր ամբողջ գոյութեան ընթացքում եղաւ մի ստրկամիտ գործիք «Դրօշակ»-ի շէֆերի ձեռքին։ Եւ մի՞թէ չափազանցութիւն պիտի լինի, եթէ ասենք, որ Դաշնակցութեան արևմտեան գործունէութիւնը (Եւրոպայում) իր տևական ու անընդմէջ ընթացքով աւելի մեծ եռանդ և ուշադրութիւն էր կորզում կազմակերպութիւնից, քան արևելեան (Տաճկահայաստանում) երկար ընդմիջումներով և պարտիզանական եղանակով առաջ տարուող կռւի գործունէութիւնը։

Ո՞րն է Դաշնակցութեան արտասահմանեան գործունէութեան կոնկրետ արտայայտութիւնը, տեսնենք այդ։

Մենք քաղաքագիտական - պրօպագանդիստական անուանեցինք Դաշնակցութեան երկրից դուրս ունեցած գործունէութիւնը, ի նկատի ունենալով նրա երկու ուղղութեամբ՝ բայց միմեանց հետ սերտ շաղկապած, ձգտումները։ Քաղաքագիտական է նրա գործունէութեան որակը այն չափով, որչափով նա գործ ունի դիւանագիտական կաբինետների, զուտ քաղաքական մարմինների, օրգանների և գործիչների հետ։ Պրօպագանդիստական է նրա գործունէութիւնը այն չափով, որչափով նա գործ ունի բանաւոր ու գրաւոր պրօպագանդայի հետ մասսայական խաւերում, քաղաքակրթած հասարա-

կութեան զանազան շրջաններում։ Պատուիրակութիւն կամ պատգամաւորութիւն ուղարկելը հանրապետութեան նախագահի, մինիստր-նախագահի և արտաքին գործերի մինիստրի մօտ, պարլամենտական հարցապնդումներ (Interpellation) անել զանազան հայասէր քաղաքական գործիչների միջոցով՝ ֆրանսիական, անգլիական, գերմանական, իտալական և այլ պարլամենտներում, քաղաքական մեծ համախմբումների և կոնգրեսների ժամանակ հեռագրներով թէ խնդրագրերով դիմումներ անել այս կամ այն «բարեմակարար» տրամադրուած ներկայացուցիչներին՝ հայկական հարցը արծարծելու և նպաստաւոր որոշումներ ընդունելու,—ահա Դաշնակցութեան զուտ քաղաքագիտական գործունէութիւնը, նրա դիւանագիտական «հնարագիտութիւնը»։ Իսկ պրօպագանդիստականը։ Ո՜հ, որքան առատ ու «բեղնաւոր» բաժին է դա։ Էլ փոքր ի շատէ յայտնի քաղաք չմնաց արևմտեան Եւրոպայի առաջնակարգ երկրներում, ուր Դաշնակցութեան արևմտեան մարմինը միտինգներ, կոնֆերանսներ, գրականական երեկոյթներ չլինի սարքած, եղաւ այդ իր սեփական ձեռներէցութեամբ, իր ստորադաս օրգանների (Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան ճիւղերի) միջոցով, թէ իր առաջարկութեամբ «ականաւոր հայասէրների» ինիցիատիւով,—այդ միևնոյնն է։ Կոնգրեսներ, միտինգներ, կոնֆերանսներ և երեկոյթներ՝ Փարիզում, Լոնդոնում, Բրիւսելում, Բերլինում, Լայպցիգում, Հալլէում, Ժընևում, Ցիւրիխում, Հռովմում, Միլանում և այլն, և այլն։ Մարդիկը տենդային, եռուն գործունէութեան մէջ են։ Մարդիկը Ֆրանկո-անգլո-իտալական մի եռապետական դաշինք են գլուխ բերել «հայասէր» ականաւորներից. մարդիկը 4000 ուկնդիրների մասնակցութեամբ հսկայական միտինգ կազմեցին համաշխարհային մայրաքաղաքում—Փարիզում. մարդկանց յաջողուեց միևնոյն բողոքող ճառասեղանի շուրջը խմբելու տրամադրօրէն հակառակ

կուսակցութիւնների ներկայացուցիչներին — պահպանողական-կլերական Դը Կոշէն և Պոլ Լերոլ, նացիոնալիստական՝ Միլվուա, օպպորտիւնիստներ և արմատականներ՝ Անատոլ Լերուա Բոլիէ, դը Կոնստան և սոցիալիստներ՝ Ժորէս, Պրեսանսէ։ Մարդիկը Գէորգ Բրանդէսին հրաւիրում, բերում են բիսմարկիզմի մայրաքաղաքը՝ Վիլհելմ-Բիլօվեան դիւանագիտութեան դէմ կրակոտ ճառեր արտասանելու։ Մարդիկը վիպասանուհի Իլզէ Ֆրապանին պոտեցրին ամբողջ Գերմանիան ու Շվէյցարիան կոնֆերանսներ կազմելու և շանթահար բողոքներ ուղղելու գերմանական «քարասիրտ» անտարբերութեան դէմ։ Ո՞վ է ասում, որ գործունէութեան այդ բաժինը թերի է։ Հասարակական և սոցիալ-քաղաքական գրեթէ բոլոր միջազգային համագումարներին և խորհրդաժողովներին—Հաագի խաղաղարար ատեանի, մէջ պարլամենտական, խաղաղասիրական, սոցիալիստական, մամուլի ներկայացուցիչների և այլն,—Դաշնակցութիւնը չի թերացել կամ զլացել իր ներկայացուցչին—պաշտօնական թէ ոչ պաշտօնական—ուղարկելու կամ որև է «հայասէրի» միջնորդութիւնը խնդրելու՝ Հայկական Հարցը արծարծելու համար։ Գրաւոր պրոպագանդայի մէջ ևս Դաշնակցութիւնը մեծ եռանդ է թափել։ Նա հրատարակել է ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով և հազարաւոր օրինակներով ցրել ամենուրեք գրեթէ բոլոր ականաւոր «հայասէրների» ճառերը։ «Aurore»-ի և «Frankfurter Zeitung»-ի էջերը բաց են եղել նրա առաջ զանազան բեկլամների համար։ Վերջապէս «Pro Armenia»-ն—մի ամբողջ պարբերական օրգան, նուիրուած հայկական դատին։ Իսկ այն մեծահատոր գրական ժողովածուն, որ 3—4 տարուց ի վեր պատրաստում է «Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան» Լիպսիոր Կոմիտէն (Ժընևում). դա արդէն հայ ուսանողների միութիւնը «յաւերժացնող» և նրա դաշնակցական «ծառայութիւնն ու անսպառ դոր-

ծնէութիւնը» երաշխաւորող մի անմահ կոթող է։ Տասնեակ հազարներ (Ֆրանկ) կլանող մի հսկայ երկ է դա, որի մէջ կարելի է գտնել ամէն բան, ինչ հայկական է, ինչ Հայկայ հազարերորդ շառաւիղները ստեղծագործել ու պահպանել են—սկսած հայկական հնագիտութիւնից մինչև հայի իրականութեան նորագոյն երևէյթները. այդ աշխատութեան մասնակցում են իրենց յօդուածներով եւրօպական բոլոր ռասսաների (թուրքական, գերմանական, անգլօ-սաքսօնական և այլն) և կուսակցութիւններին (միապետական-կղերականից սկսած մինչև հանրապետականն ու սոցիալիստականը) պատկանող գրողներ ու գիտնականներ 42)։

Այլևս ինչ էք ուզում սրանից աւելի։

Բայց ինչո՞ւ են այդ բոլորը. ո՞րն է այդ բոլոր ձեռնարկների առաջ-մղիչ տենդենցը. ինչի՞ մէջ է կայանում այդ նիւթական զոհողութիւնների և բարոյական ջանքերի ներքին իմաստը։

Անհրաժեշտ է յիշեցնել, շարունակ յիշեցնել պաշտօնական Եւրօպային իր պարտականութիւնը՝ 61-րդ յօդուածով ստանձնած պարտականութիւնը. անհրաժեշտ է թարմ ու հրատարապ վիճակի մէջ պահել «Հայկական Հարցը» միջազգային արէօպագում», դիւանագիտական կաբինետներում. պէտք է ապացուցանել ի լուր և ի տես ամբողջ լուսաւոր աշխարհի, որ հայկական արիւնոտ դատը արդար է իր ամբողջ էութեամբ. հարկաւոր է ժողովրդականացնել, հասունացնել Տաճկահայ Խնդիրը և խմբել նրա շուրջը հասարակական նպաստաւոր կարծիք, բողոքող ձայն՝ ընդդէմ ցինիկ դիպլօմատիայի, ընդդէմ Թիւրքիայի անլուր կոտորածի, անծայր բռնութիւնների։ Եւ վերջա-

---

42) «Ընդամենը երեք տարուայ ընթացքում—ասում է պ. Ego-ն —շնորհիւ հաւաքական աշխատանքի, կատարուեց աւելի, քան կատարուել էր 15 տարուց ի վեր Բրուսալիների և Զերաղների ձեռքով» (տես, Ego «Գորդեան հանգոյց» «Յառաջ» № 53, 1906 թ.)։

պէս Դաշնակցութիւնը իր արտասահմանեան պրոպագանդիստական գործունէութեամբ «ուզում էր իր հարկը տալ այն նախապաշարուած «ամբոխային տրամաբանութեանը», որը յամառութեամբ պնդում էր, թէ Եւրոպայում հասարակական կարծիք պատրաստելը մի պանացէում է, մի տեսակ համադարման հայ ժողովրդի անբաւ ցաւերի» 43)։ Այս թւած բոլոր ձգտումները պէտք է հետզհետէ հող պատրաստէին դիւանագիտական նպաստաւոր կոմբինացիաներ, հաւաքական միջամտութիւն առաջ բերելու յօգուտ հայկական դատի։

Ահա Դաշնակցութեան քաղաքագիտական-պրոպագանդիստական գործունէութեան ամբողջ իմաստը, կէտ նպատակը։

Սակայն որքան արժէքաւոր ու նպատակայարմար, արդասաւոր ու հետևողական է՝ դաշնակցական իդէօլոգների կարծիքով ու փաստաբանութեամբ, գործունէութեան այդ մեթոդը, նրանց ընտրած քաղաքական ճանապարհը առհասարակ։

Այստեղ է արդէն աչքի զարնում Դաշնակցական երգիչների դիսոնանսն ու հակասութիւնը։

«Լաւագոյն Եւրոպան,—ասում է «Յառաջի» առաջնորդողը,—նրա ամբողջ մտածող մասը հայի դատը իր սեփականն էր համարում։ Եւրոպական հայասէր պրոպագանդան այսպիսով շատ բարեբեր, շատ յուսալի հող պատրաստեց» (նօտրգրերը մերն են) 44)։

Երկու համար յետոյ, միևնոյն առաջնորդողի շարունակութեան մէջ կարդում ենք. «Անուրանալի է, որ հայանպաստ պրոպագանդան մինչեւ այժմ (նօտրգիրը հեղինակինն է) շոշափելի արդիւնք չտւեց (նօտրգիրը մերն է), կամ աւելի ճիշտ, նրա բարերար ազդեցութիւնը

---

43) Ego, Ibid։

44) «Յառաջ» № 22, առաջնորդող՝ «Հայկ. հարցը և միջազգ. քաղաքականութիւնը» վերնագրով։

չարտայայտուեց հայ ժողովրդի ծանր կացութեան վրայ» 45)։

Ուրեմն և՛ «շատ բարերար, շատ յուսալից հող պատրաստեց» և՛ «շոշափելի արդիւնք չուեց, բարերար ազդեցութիւն չունեցաւ»,—ընթերցող, լաւ կարդացէք այս տողերը։

Անցնենք։

Պ. Ego-ն խօսելով իրենց արտասահմանեան գործունէութեան մասին, վերջին կցում է այս գնահատական տողերը. «Այդ բոլորը ապարդիւն.—երբէք։ Մի յայտնի ժամանակ մինիստրութիւնը Ֆրանսիայում, կարելի է ասել, հայասէրների տրամադրութեան տակ էր. նրանք կարողանում էին առաջ բերել այս կամ այն քայլը, յօգուտ թիւրքահայի, իրագործել էին տալիս այս կամ այն անկեղծագելի պահանջը» 46)։

Սակայն թերթի միևնոյն սիւնեակում պ. Ego-ն աւելացնում է, որ «ազդեցիկ եւրոպացիների դռներ բաղխող» Դաշնակցութիւնը «գիտէր, անշուշտ, որ իր ջանքերը չպիտի պսակուէին բաղձալի յաջողութեամբ». նա միայն «որոշ չափով է գիտակցում պրօպագանդի օգտակարութիւնը», ապա թէ ոչ նա իր այդ կարգի գործունէութեամբ «ուզում էր իր հարկը տալ ամբոխային տրաբանութեանը. և նա գիտէր, որ իրական միջամտութիւն (նօտրգիրը նրանն է) հրաւիրելու և գորդեան հանգոյցը լուծելու համար՝ անհրաժեշտ են այլ կարգի ձեռնարկներ» (իմա, յեղափոխական ճանապարհը) 47)։

Ուշադրութեամբ կարդացէք միևնոյն գրչի արդիւնք այդ ցիտատները։

Անցնենք։

---

45) Ibid, № 24։

46) Ego, «Գորդեան հանգոյցը», «Յառաջ» № 53։

47) Ego, Ibid։

Այլ բան է ասում Դաշնակցութեան կենտրոնական օրգանը՝ «Դրօշակը»։ Այն մինիստրութեան, որը պ. Ego-ի ասելով մի յայտնի ժամանակ գտնուում էր հայասէրների տրամադրութեան տակ, ասել է՝ առաջնորդուում էր հայասէրների լօզունգներով, այդ նոյն մինիստրութեան արտաքին գործերի ներկայացուցիչ Դելկասէին տուած խոստումներն ու յայտարարութիւնները «Դրօշակն» անուանում է «տարտամ, երկդիմի և անհաստատ ֆրազաներ»։Իսկ ինչպէ՞ս է գնահատում«Դրօշակը»այդ երկարամեայ գործնէութեան արդիւնքը. «Դաշնակցութիւնը անօրինակ ճիգեր թափեց,—ասում է նա վհատած ու շարած տոնով,—նա իր ոյժերի մեծ մասը ուեց թէ երկրի մէջ թէ արտասահմանում, եւրօպական դիպլօմատիայի առաջ, բայց էլի Նրա յոյսերը չարդարացան (նօտրգիրը մերն է)։ Նրա առաջ ապառաժի պէս ցցուեցին հայ քաղաքական կեանքի երկու անողոք գործօնները՝ թիւրք կառավարութիւնը իր սովորական ճնշումներով և դիւանագիտութիւնը, մանաւանդ ռուսականը, իր ցինիկ անտարբերութեամբ» 48)։

Բաւականանանք սրանով, թէ թուենք անվերջ նմուշներ դաշնակցական հակասութիւնների հարուստ արսենալից։ Բերենք հետևեալ կուրիոզը ևս, և այս անգամ «Ալիք»-ի շտեմարանից։

Վերջերս Տաճկաստանի մի քանի քաղաքներում—Էրզրում, Վան և այլն—տեղի ունեցած խլրտումներն ու ըմբոստացումները՝ թիւրք մասսայի կողմից թիւրք կառավարութեան դէմ, այնքան են ոգևորում դաշնակցական իդէօլոգներին, որ նրանք իրենց լեզալ բերանի միջոցով շատ հեռու են գնում։ «Ալիք»-ը «Կհրդեհի» վերնագրով մի առաջնորդողով գրւատում է հայ ու մահ-

48) «Դրօշակ» 1905 թ. № 1. առաջնորդող։

մեղական յեղափոխական տարրերի «ռազմական համերաշխութիւնը» և առաջ նետում «Տաճկաստանի ապագայ մեծ ֆեդերատիւ հանրապետութեան» լոզունգը։ Եւ այն կազմակերպութիւնը, որ տասնեակ տարիներ շարունակ, իր յեղափոխական և պրոպագանդիստական գործունէութեամբ աչք է յառել և միակ հնարաւոր փրկութիւնը սպասել պետութիւնների դիւանագիտութիւնից, յանկարծ մեծ ապլոմբով յայտարարում է հեռաւոր. «Ուզում ենք հաւատալ, որ փոխւել են ժամանակները։ Կեանքը կարծես իր հրամայական պահանջների հետ, արտադրում է և մի նոր բանակ՝ բուն մահմեդական ժողովրդի արգանդից, որ անհրաժեշտաբար պէտք է դուրս մղէ ֆրազների եւ դիւանագիտական միջոցների սիրահար իդէօլօգներին—Ահմէդ-Բիզաներին ու Սաբահ էդդիններին—և պիտի առաջնորդի նորաբողբոջ շարժումը ուրիշ աւազանով» (իմա. յեղափոխական ճանապարհով, նստրդիրը մերն է) 49)։

Երևակայեցէք, այդ «փոխւած ժամանակներից» ինն օր (յուլիսի 9—18) յետոյ «դիւանագիտութեան սիրահար» Երիտասարդ Թիւրքերին արհամարող «Ալիքը», նորից հանդէս է գալիս մի փառաւոր առաջնորդողով՝ «Հաագի երկրորդ համաժողովի առթիւ» վերնագրով, ուր նա մեծ յոյսեր ու ակնկալութիւններ է կապում եւրոպական և ամերիկական դիւանագէտ լիազօրների այդ հաւախմբման հետ։ Եւ զուտ յեղափոխական-ռազմական ոյժն ու համերաշխութիւնը փառաբանող դաշնակցական ապօլոգիան, դրւատւում ու փառաբանում է այս անդամ «միջազգային արէօպագի հզօր ու բարձրագոյն ոյժը, որը ձեռնհաս ու լիազօր է լուծելու արիւնոտ, անկախ մնացած կնճիռները, որի մի խօսքը բաւական

---

49) «Ալիք», 1906 թ. № 60, առաջնորդող։

է խելքի բերելու արիւնռուշտ վեհապետին և ընթացք տալու 61-րդ յօդուածին, մայիսեան ծրագրին»։ Եւ թէպէտև «ժամանակները փոխուել» են, այնուամենայնիւ դաշնակցական օրգանը «յոյսեր ունի», որ «հայկական հարցը յետ չի մղուի, եթէ նա դրուի ձեռնհաս կողմից, դիցուկ Ամերիկայի պաշտօնական ներկայացուցիչներից». նա «յոյսեր ունի», ասում ենք, որովհետև այդ սահմանում՝ «միջազգային արէօպագում» ևս, այժմ կարծես թէ փոքր ինչ փոխուած են պայմանները (նոտրգիրը մերն է). այժմ ժողովի ձեռնարկողը այլևս բռնապետական ու հայատեաց Ռուսաստանը չէ,—այժմ նախաձեռնողը Ամերիկան է, և մեր եւրոպացի բարեկամները աւելի յուսալի գուշակութիւններ են անում» 50)։

Լա՛ւ կարդացէք այդ ցիտատները։ Ի՞նչ ասենք այդ աղաղակող, միմեանց ջնջող հակասութիւններին։ Իսկապէս որ և՛ «ժամանակները փոխուեցին և՛ պայմանները», բացի դաշնակցական իդէօլօգների բաղաքաղիտական հասկացողութիւնից. նա չփոխուեց, օրգանապէս չաճեց էվոլիւցիօնաբար չհասունացաւ, այլ մնաց միշտ միևոյն նահապետական, պրիմիտիւ, նայիւ-ամբոխային ու մանկական աստիճանի վրայ։ Բաւական է մի թռուցիկ երևոյթ, մի էֆֆեկտաւոր մօմենտ իրերի սովորական ընթացքի մէջ, որպէսզի Դաշնակցութիւնը այսօր ասի՝ «ասանկ կըլլայ», վաղը ասի՝ «անանկ կըլլայ»։ Միևոյն տեսակէտի և սոցիալ-քաղաքական երևոյթների պատժական ըմբռնողութեան բացակայութեան շնորհիւ, նա հերքում է այսօր իր երէկուայ դատածն ու ընդունածը, ժխտում վաղը իր այսօրուայ պնդածը և սրբապղծում միւս օրը իր վաղուայ սրբացրածը։ Ամբոխային տրամաբանութիւնն ու հոգեբանութիւնը ամբողջ էութեամբ և անաղարտութեամբ փայ-

---

50) «Ալիք», №-65, առաջնորդող։

լում է Դաշնակցութեան քաղաքական իդէոլոգիայի մէջ։

Այսօր լուր բերաւ հեռագիրը, որ խլրտում, մասսայական յեղափոխական շարժում կայ Թիւրք ամբոխի մէջ մի քանի գաւառներում՝—այդ բաւական է արդէն, որ դաշնակցական յախուռն իդէոլոգը յեղափոխական իլլիւզիաների բարձրարերձ ապարանքներ կառուցանէ։ Վաղը արևմուտքից աւետում է նրան «Դրօշակի» խմբագրութիւնը կամ կամ մի Պիեռ Քիաո գործերի «յաջողութեան յուսալի նշաններ միջազգային արէօպագում»,—այդ բաւական է արդէն, որ նոյն յախուռն իդէոլոգը մոռանայ իր երէկւայ օրէնքերը և նորանոր քաղաքական իլլիւզիաների ու ակնկալութիւնների հեռանկարներ ուրուագծէ, յոյսեր դնէ «հայ բարեկամների» վրայ։

Այդպէս է մարդկանց լոգիկան, այդպէս են նրանք խաղում մի ամբողջ ժողովրդի քաղաքական բաղդի հետ, լուծում կենսական խնդիրները։

Մենք տեսանք թէ ինչպէս «Յառաջ»-ը (իր առաջնորդողով) հակասում է Ego-ին, Ego-ն հակասում է «Դրօշակ»-ին, «Դրօշակ»-ը հակասում է «Ալիք»-ին. մենք տեսանք նաև՝ միևնոյն յօդուածներից ցիտատներ բերելով, թէ ինչպէս «Յառաջ»-ը հակասում է «Յառաջ»-ին, Ego-ն—Ego-ին և «Ալիք»-ը—«Ալիք»-ին։ Ուրեմն ոչ միայն միմեանց տրամագծօրէն հակասում են միևնոյն դաշնակցական շկոլայի մէջ կրթուած ու սնուած հրապարակախօսները և «պրոֆեսիօնալ քաղաքագէտները», այլև դրանցից ամեն մէկը, ամեն մի գրիչ հակասում է ինքն իրեն, հերքում ու ջնջում է մի ձեռքով այն, ինչ պնդել ու հաստատել է միւս ձեռքը։

Եւ հակասութիւնների այդ անսպառ շտեմարանը բացէ ի բաց վկայում է, որ Դաշնակցութիւնը՝ իր մտածող ու գործող գլուխներով, և՛ համոզուած է և՛

համոզված չէ այն բոլորի օգտակարութեան ու նպատակայարմարութեան մէջ, ինչ նա ձեռնարկում է. որ նա չունի մի չափած ձեւած կրիտերիում միւսոյն տակտիկա մշակելու համար. որ նա ոչ թէ քննադատաբար վերլուծում է ընթացիկ երևոյթների քնոյթն ու էութիւնը, համեմատական հաշուէկշռի ենթարկում բէալ ոյժերի յարաբերութիւնները. թափանցում քաղաքական կնճռոտ բարդութիւնների խորքը և ըստ այնմ գործնէութեան ճանապարհներ հարթում, կուի մեթոդներ մշակում, այլ նրանք ամեն բանի մէջ առաջնորդւում են ոյժերի տարերային շարժումով, խուժանական ինստինկտներով, թռուցիկ երևոյթների ըոպէական էֆֆէկտներով, նայած թէ քամին որտեղից է փչում՝ արեւելից թէ արեւմուտից։ Ինքը՝ Ego-ի նման դաշնակցական իդէօլոգը, պարզ խոստովանում է (այդ կտորը բերանք վենք վերև), որ Դաշնակցութիւնը իր արտասահմանեան պրոպագանդիստական գործնէութեամբ «ուզում էր իր հարկը տալ նախապաշարուած» «ամբոխային տրամաբանութեանը»։ Էլ ինչ էք ուզում աւելին... sapinti sat։

Այսքանը ընդհանրապէս, որով, ինչպէս տեսանք, մեր յարգելի հակառակորդները «իրենք տապալուեցին իրենց իւղի մէջ», ինչպէս ժողովուրդն է ասում. այսինքն իրենք հերքեցին իրենց, իրենց սեփական դատողութեամբ ու փաստաբանութեամբ մերկացան մեր առաջ։

Անցնենք բուն խնդրի քննութեան։

Քաղաքական ճանապարհ կամ քաղաքագիտական պրոպագանդիստական գործնէութիւն երկրից դուրս...

Մենք պարզապէս խոստովանում ենք, որ մեզ դեռ ծանօթ չէ մի մանր ու ճնշուած ազգի ազատագրական շարժման պատմութիւն՝ հէնց բալկանների արիւնլայ բարձունքներում, որտեղ գործնէութեան այդ

ճանապարհը այնքան մեծ տեղ լինի դրաված և այնչափ ոյժեր ու միջոցներ լինի կլանած, որքան Դաշնակցութեան առհասարակ արտասահմանեան գործունէութիւնն է եղել: Նոյն իսկ հռչակաւոր հելլենիզմի չքնաղ հայրենիքը իր մօտ 60 տարի տևող ազատամարտական կռիւների ընթացքում այնքան դռներ չէ բաղխել, այնքան կոչեր ու դիմումներ չէ ուղղել «երախտապարտ» Եւրոպայի քաղաքականութեան ու «մարդասիրութեան» հասցէին, որքան այդ արել են հայ ժողովրդի (ռուսահայ թէ տաճկահայ) լեգալ գործիչներն ու անլեգալ յեղափոխականները 61-րդ յօդուածի ձեւակերպումից ի վեր: Ինչու՞ հեռու գնանք: Մեր առաջն է մակեդոնական դեռ ևս առկախ ու հրատապ խնդիրը: Մակեդոնիայի յեղափոխական կազմակերպութիւնները ունեցե՞լ են, ունե՞ն կամ անհրաժե՞շտ են համարում ունենալ դէթ 1/10-րդ մասը այն պրոպագանդիստական գործունէութեան, որ Դաշնակցութիւնը տասնեակ տարիներ շարունակ տենդային եռանդով ժղում է արևմտեան Եւրոպայում: Ամենևին. երբէք: Նրանց գործունէութիւնը բուն երկրի մէջ է, կենդանի իրականութեան ծոցում, կուի դաշտում: Ճշմարիտ յեղափոխական կազմակերպութիւնները կարիք չունեն ամենևին օգնութեան ձեռք կարկառելու դիմումների եւ խնդրագրերի քաղաքականութեան, որպէս զի դիւանագիտական կաբինետներում և պարլամենտներում խօսել տան իրենց և իրենց ձգտումների ու նպատակների մասին: Յեղափոխականի իրական, կենդանի գործն է, կուի ահարկու շաչիւնը, ոյժգին հարուածները են, որ ստիպում, հարկադրում են և դիւանագիտութեան և պարլամենտներին իրենց հարցի մասին մտածելու, խօսելու և որոշումներ կայացնելու: Երկրից դուրս եղած գործունէութեան ուժեղացումը պարզ ապացոյց է երկրի ներսում եղած ռազմական գործունէութեան թուլութեան

ու նուազման։ Եւ Դաշնակցութեան Եւրոպայում ունեցած գործունէութեան հակայ մեխանիզմի բանաւոր ու գրաւոր այնքան բազմաթիւ օրգաններն ու ապարատները ցոյց են տալիս, որ նրա յեղափոխական գործունէութիւնը բուն սահմանադրական միջնավայրում հասել է իր սնանկութեան աստիճանին, ֆիասկոն կատարեալ է։ Դա վկայում է ինքը կենդանի իրականութիւնը։

Այդքան մեծ է տարբերութիւնը առհասարակ յեղափոխականների և դաշնակցական յեղափոխականների գործի ու գործունէութեան մէջ։ Այդքան խոշոր է զանազանութիւնը պատմական յեղափոխականութեան և դաշնակցական յեղափոխականութեան վերաբերեալ եղած հասկացողութեան ու տեսակէտների մէջ։

Դաշնակցութեան արտասահմանեան բոլոր ճիգ ու ջանքերը, նրա այսպէս անուանուած ամբողջ քաղաքական գործունէութիւնը, մարդասիրական օգնութիւն հայցելը «լաւագոյն Եւրոպայից»,—մենք առանց այլևայլութեան անուանում ենք քաղաքական մուրացկանութիւն։ Եւ որքան մի թշուառ մուրացկանի,—որ իր օրուայ պարէնը հայթհայթում է հարուստի փարթամ սեղանից թափուած փշրանքներից,—կյանքի կապիտալիստ դառնալ, այնքան էլ յեղափոխական կազմակերպութեան կյանքի մարդասիրութեան օգնութեամբ մի զուտ քաղաքական խնդիր լուծելու։

Հարկաւոր է յուզել, աղմկել քաղաքական աշխարհը, յիշեցնել պաշտօնական Եւրոպային իր ստանձնած պարտականութիւնները, թարմ պահել և մոռացութեան չտալ հայկական հարցը դիւանագիտական կօնցերտում, հարցապնդումներ անել պարլամենտներում և այլն և այլն,—միաբերան պնդում են Դաշնակցութեան բոլոր բանաստեղծ-քաղաքագէտները՝ և՛ Քր. Միքայէլեան, և՛

Ego ու Վայանդեան, և՛ Ակնունի, և՛ «Դրօշակ», և՛ «Յառաջ», և՛ «Ալիք», և՛ «Հայրենիք», և՛ «Ռազմիկ»։ Ակամայ արգահատանք էք զգում մարդկանց և օրգանների այդ անծայր պարզամտութեան, քաղաքական վուլգարիզմի վրայ։

Մենք չենք հասկանում, թէ ի՞նչ իմաստով է այդքան յաճախ գործածւում «պարտականութիւն» խօսքը Դաշնակցութեան գրականութեան մէջ։ Բարոյական իմաստով, բայց բարոյական հասկացողութիւն գոյութիւն չունի դիպլոմատիական տերմինօլոգիայի մէջ, այդ պէտք է իմանան և իրենք դաշնակցականները։ Թէ՞ Եւրոպան քաղաքական պարտականութիւն ունի հայկական հարցի նկատմամբ. եթէ այո, ապա մեր յարգելիները պէտք է իմանան նաև, որ մի պարտականութիւն միայն այնքան քաղաքական արժէք կարող է ունենալ պետութեան կամ պետութիւնների համար, որքան այդ պարտականութիւնը կատարելը մի անյետաձգելի անհրաժեշտութիւն եւ կենսունակութիւն է ներկայացնում պետութիւնների համար։ Ասացէք, ներկայացնում է հայկական հարցի բարերար լուծումը պետութիւններից մի քանիսի կամ բոլորի համար նոյն իսկ ամենաանաղ չափով կենսական անհրաժեշտութիւն, որ նրանք ունենան դրա նկատմամբ քաղաքական հարկադրական պարտականութիւն,— հէնց այդ խնդիրն էր հիմնական բաժինը մեր ամբողջ թեմայի, որ բազմակողմանի լուսաբանելով եկանք բացասական եզրակացութեան։ Եթէ պաշտօնական Եւրոպան շահագրգռած լինէր, եթէ ոչ աւելին, գէթ 61-րդ յօդւածը պարունակող ռէֆորմները իրականացնելու, ապա նա իր սրբազան էգօիստական պարտականութիւնը կկամարէր այդ վճռական քայլը շատ վաղուց անելու, առանց դիմումների և հարցաքն-

դումների։ Իսկ եթէ նա շահագրգռած չէ, ինչպէս մենք այդ ցոյց տուինք նախընթաց գլուխներում, նշանակում է ապարդիւն են յոյսերով լի այն ջանքերը, որ ունի Դաշնակցութիւնը երկրի ներսում թէ դրսում։ Որովհետև այդ բոլորը այն չեն և չեն էլ կարող լինել՝ ինչպէս անցեալ գլխում տեսանք, որպէս զի դրդեն ու հարկադրեն պետութիւններին որոշ վճռականութեան դիմելու։ Եթէ Դաշնակցութիւնը գոհ է և ինք զինքը մխիթարում ու շոյում է այն հանգամանքով, որ մի Դելկաս է կամ մի անգլիական դեսպան կոտորածների վտանգաւոր նախօրեակին գործակալներ են ուղարկում Վանի և Մուշի կողմերը տեղական վալիներին զգուշացուցիչ ազդարարութիւններ հաղորդելու, ապա թող այն ժամանակ դէն շպրտէ իրենից «յեղափոխական կազմակերպութիւն» պատւանուն ֆիրման և յայտարարէ իրեն լիբերալի պալիատիւներով կերակրուող ու բաւականացող մի մարմին։ Այդ ողորմելի պալիատիւներովն է պարծենում պ. Ego-ն, առանձին ինքնագոհութեամբ շեշտելով, որ «մի յայտնի ժամանակ ֆրանսիական միներտրութիւնը գտնուում էր հայասէրների տրամադրութեան տակ»։ Այդ և նմանօրինակ պալիատիւները քաղաքական ակտեր չեն ամենևին, այլ պաշտպանողական մի զգուշաւոր միջոց հեռաւոր բարդութիւնների առաջն առնելու համար. եթէ քաղաքական ակտ լինէր, ֆրանսիական և անգլիական հիւպատոսները չէին շարժուիր տեղներից առանց ռուսականի համաձայնութեան. փաստ, հիւպատոսական միջնորդութեան ծրագիրը Սասունի ապստամբութիւնից յետոյ, երբ Բիթլիս գնացած անգլիական և ֆրանսիական հիւպատոսները ոչինչ վճռական քայլ չկարողացան անել, առանց ռուսական հիւպատոսի ներկայութեան, և որովհետև վերջինս երբէք ներկայ

չեղաւ, այդ պատճառով Բիթլիսի ծրագիրը ևս վիժեց մայիսեան ծրագրի նման։

Եւ այն հեղինակը, որ իր յօդուածի առաջին մասում առանձին պարծանքով է յիշատակում եւրոպական պրօպագանդիայի «արդիւնաւոր հետևանքները», այդ նոյն հեղինակը ստիպւած է իր յօդուածի չորրորդ մասում դառնագին շեշտերով խոստովանելու այլ բան. «Եւ ինչ... մինիստրական խոստումներ ու դիմումներ, ազդարարութիւններ Կ.Պոլսում, ազդարարութիւններ վալիների մօտ, իսկ վճռական քայլ-երբէք։ Դիւանագիտութիւնը անտարբեր հանդիսատես եղաւ Սասունի լեռներում խաղացող ողբերգութեան, նա շարունակեց իր պարապ, անոյժ ազդարարութիւնները...»։ «Եւ դարձեալ ով էր միծագոյն յանցաւորը այդ ոճրագործ յապաղումների մէջ,—ռուսական դիւանագիտութիւնն էր, հայութեան այդ մահացու թշնամին։ Անգլիան, ըստ առաջնոյն, միայնակ միջամտելու տրամադիր չէր (և երբէք էլ տրամադիր չի լինելու, Բ. Ի.) Ֆրանսիան էլ որև է լուրջ քայլ անել չկարողացաւ կամ չուզեցաւ առանց իր դաշնակցի» 51)։

Հէնց այս ինքնաժխտումը և ինքնաջինջ խոստովանութիւնն էր հարկաւոր մեզ։

Անհասկանալի տարօրինակութիւն։ Մարդիկ քաղաքական անցքերի ու երևոյթների մի տխուր հարուստ անցեալ ունեն իրենց յետևը, թէ ինչպէս դիւանագիտական ամեն մի ձեռնարկ քարին է զարնւում, վիժում ու խափանւում առանց այլևայլութեան, երբ ռուսական դիպլոմատիան, «հայութեան մահացու թշնամին», ծառանում է այդ բոլոր ձեռնարկների հանդէպ և հակադնում է իր անողոք ժխտումը՝ «non pos-

---

51) Ego, „Գորդեան հանգոյց“, «Ցառաջ» № 61.

sumus, non procedatur»—մենք չենք կարող, չպէտք է հեռու գնալ։ Մարդիկ, դաշնակցական գրեթէ՝ բոլոր իդէօլօգները, միաբերան խոստովանում ու վկայում են, որ Ռուսաստանը կազմում է ամենածանրակշիռ ու աղդեցիկ ֆակտորը հայկական հարցում, որ առանց նրա համաձայնութեան անկարելի է տեսնել ոչ միայն տաճկահայ խնդրի լուծումը, այլև փոքր ի շատէ արմատական բարեփոխութիւններ մտցնելը Փոքր-Ասիայում։ Հարց է ծագում. այդ բոլորը դիտելուց և վկայելուց յետոյ նրանք այլևս ի՞նչ են ուզում կամ սպասում անգլիական, ֆրանսական և իտալական դիպլոմատիայից. ի՞նչ հաւանական շանսեր, դրական յոյսեր են կապում մեր յարգելիները իրենց արտասահմանեան գործունէութեան հետ. այլևս ի՞նչ արժէք ունի այնքան թանդ նստող պրոպագանդիստական ֆրազէօլոգիան արևմտեան Եւրոպայում, ինքնախաբէութեան այդ թանձր քօղը, խեղջ հայդուկին, թշուառ մշեցուն ու էրզրումցուն նինջ ու օրօր կարդացող այդ հովերը, փքուն, անիմաստ ու անարժէք բարձրակոչ բարբառը։

Հարկաւոր է ընդլայնել ու խորացնել մասսայական հայանպաստ պրոպագանդը լուսաւոր աշխարհում, հարկաւոր է ստուարացնել հայասէրների բանակը և պատրաստել հասարակական նպաստաւոր կարծիք, բողոքող ոյժ ու տրամադրութիւն՝ ընդդէմ թիւրքական բռնութիւնների, ընդդէմ եւրոպական անտարբերութեան, դարձեալ միաբերան պնդում են բանաստեղծ-քաղաքագէտները։ Երջանիկ իդէալիստներ, որ այդքան լաւատես էք «լուսաւոր աշխարհի» նկատմամբ։ Մի նահապետական խորին պարզամտութիւն է փչում այդ տողերից, որ կարող է ամեն բան լինել, բացի քաղաքական հասկացողութիւնից։

Նախ ոչ հասարակական կարծիքին է վերաբերում խօսքը, դա պարզ չէ և երբէք էլ չբացատրուեց դաշնակ-

ցական լեքսիկոնի մէջ դաշնակցական իդէոլոգի կողմից։

Հասարակական կարծիք հանրամարդկային, համազգային, կամ համաժողովրդական բնաւորութեամբ, ինչպէս գիտենք, գոյութիւն չունի։ Ամեն մի հասարակական կարծիք պայմանաւորուած է որոշ դասակարգային կաթէգորիայի շրջանակով։ Ո՞ր դասակարգային կաթեգորիայի հասարակական կարծիքի մասին է խօսքը. պրոլետարիատի՞, թէ՞ բուրժուական տիրապետող դասակարգերի։ Շահագործող տարրերի, «երիտասարդ Եւրոպայի» մէջ է ուզում Դաշնակցութիւնը նպաստաւոր կարծիք, բողոքող տրամադրութիւն պատրաստել ընդդէմ բռնութեան ու մարդկային հալածանքի, թէ՞ շահագործող ու արտօնեալ տարրերի, «ծերացած Եւրոպայի» մէջ։ Թէ մէկը և թէ միւսը բոլորովին կարիք չունեն այդ կողմնակի «լուսաւորութեան սիսիֆին», որովհետև թէ մէկը և թէ միւսը ունեն իրենց մի անդամ ընդմիշտ յայտնի սկզբունքային դիրքը դէպի բոլոր նմանօրինակ քաքաքական հարցերը։

Կարիք չունի պրոլետարիատը, ասում ենք, կազմակերպած ու գիտակից պրոլետարիատը արևմտեան Եւրոպայի, որովհետև նրա դասակարգային կուսակցութեան միջազգային քաղաքականութեան մէջ այդ բաժինը աւելի քան պարզ ու որոշ է (տես «Սոցիալ-դեմոկրատիան և տաճկահայ խնդիրը» վերնագրով գլուխը)։

Կարիք չունի բուրժուազիան, որովհետև հարիւրաւոր փաստերով ու օրինակներով ճշտուած կենդանի իրականութիւն է նրա համաշխարհային աւարառու քաղաքականութեան այդ վիրաւոր բաժինը։ Հին-հին իդէալներով սնուած հայ յեղափոխականները լաւագոյն յոյսերի խաբուսիկ հեռանկարով ճշմարիտ մարդասիրութեան հետքեր են որոնում այնտեղ, ուր նախ մարդասիրու-

թիւն չկայ և երկրորդ, եթէ նոյն իսկ լինէր, միանգամայն անպէտք ու անարժէք կլինէր իրենց ցաւ ու դարդի համար։ Գթասրտութիւն, հասարակական նպաստաւոր կարծիք առաջ բերելու ջանքեր չինայել այնտեղ, ուր իրերի և երևոյթների կարևորութեան ու կենսունակութեան աստիճանը չափւում, գնահատւում է հասարակական ստամոքսի «գռեհիկ» պահանջների —տնտեսական-քաղաքական շահերի— մասշտաբով. տեսնչալ «ճշմարիտ հայասէրների» սուար բանակ կազմելու այն իդէօլոգներից, որոնք ընդունակ չեն այլ ուղղութեամբ մտածելու և դատելու, քան այդ թելադրում է տիրապետող դասակարգի հասարակական իդէալը և այլն,—դա ցոյց է տալիս, թէ որքան հեռու են մեր հակառակորդները քաղաքական խոշոր խնդիրները պատմականօրէն ճշգրիտ ըմբռնելու մեթոդից։ Լուսաւոր աշխարհում տիրապետող (այսինքն բուրժուական) հասարակական կարծիքի արտայայտութիւնը կազմում է դասակարգային պետութեան գաղութային քաղաքականութեան պատմական տենդենցիան. և մենք ծանօթացանք արդէն այդ պատմական տենդենցիայի հետ, երբ դատ-դատ թուեցինք բուրժուական-դասակարգային մեծ պետութիւնների քաղաքական պօզիցիաները տաճկահայ խնդրի նկատմամբ։ Գուցէ Դաշնակցութիւնը այն աստիճան պարզամիտ է, որ իր պրօպագանդայով քաղաքական յոյսեր է դնում բուրժուական դեմօկրատիայի հատընտիր իդէալիստների վրայ, նրանց, որոնց ձեռնարկներից մէկի (դիմումը նախագահ Ռուզվելտին) փառահեղ ֆիասկօն տեսանք ժամիկ անցեալում. յոյսեր այն բուրժուական ֆիլանտրօպիայից (մարդասիրութիւն), որ պատմականօրէն ամենահողագուրկ, քաղաքականապէս ամենաանիմաստ և ազդեցութեամբ ամենաանարժէք շարժումն է Նորագոյն Եւրոպայում։ Բուրժուական աւարառու և

աշխարհակալական քաղաքականութեան տոն տուողները կազմում են այն ռէալիստ քաղաքագէտները, բուրժուական շահերի և պետական էգոիզմի այն ապологէտները (ջատագով), որոնք, իբրև այդպիսիք, գրաւում են պետական մեխանիզմի մէջ ամենաբարձր պօստերն ու պատասխանատու ֆունկցիաները. որոնք, իբրև այդպիսիք, ասում ենք, դառն ու հեգնական ժպիտ են արձակում ֆիլանտրօպ իդէալիստների և նրանց ճառերի ու ըէզոլիւցիաների վրայ։

Բուրժուական ֆիլանտրօպիա դիւանագիտութեան սահմանում.—դա կուշտ կերած արիստոկրատների նոյն հովերն են, նոյն ֆանտազեօրների ֆրազէօլոգիան, ինչպէս այսպէս անուանուած խաղաղասէրների 1—2 տարին մի անգամ գումարուող միջազգային խաղաղասիրական կոնգրեսները են, որոնք առանց շօշափելու ներկայ հասարակական կարգերի գոյութեան հիմնական արմատները, առանց միլիտարիզմի վերացման պահանջ ունենալու, Թոմաս Մօրու երևակայական թռիչքներով պատկերացնում են մի այնպիսի ուտոպիական դրութիւն, ուր չլինի կռիւ, պատերազմ, արիւնհեղութիւն ու կոտորած, այլ ամեն բան այնպէս խաղաղ ու սիրով երթայ, որ գայլն ու գառը միմեանց մօտ արածել կարողանան,

Անշուշտ ֆիլանտրօպ, իդէալիստ, ակնաւոր (ինչ ուզում էք անուանեցէք) «հայասէրները»—ազարտուած ու այլանդակուած դեմօկրատիզմի այդ անշնորհք երկրպագուները, որ ազգից ուզում են թող լինեն—կցանկանան մի շարք բարեփոխութիւններ, 61-րդ յօդուածի գործադրութիւնը Տաճկահայաստանում, գուցէ և ինքնավար Հայաստան Փոքր-Ասիայում, այո, կցանկանան այդ բոլորը, իբրև բարեպաշտական իղձ ու բաղձանք. կճառեն, շանթահար բողոքներ կարձակեն միտինգներում

«քարասիրտ» դիպլոմատիայի հասցէին. բայց իրապէս նրանցից ամէն մէկը—անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի թէ նոյն իսկ ռուս կաղետ—աւելի շուտ իր մատերը կկտրէ, քան համաձայն կլինի, որ իր ազգային պետութեան ազդեցութիւնը թուլանայ «միջազգային արէօպագում», քան կընդունէ, որ իր ազգային պետութեան տնտեսական-քաղաքական շահերը յետ մղեն Թիւրքիայում, Փոքր-Ասիայում։

Այդպիսի ակնաւոր «հայասէրների» հետ գործ ունի «սոցիալիստ» Դաշնակցութիւնը. սկսած «Մեծ Մարդասէր» Գլադստոնից մինչև պատիկ Լեպցիուան ու Բոհրբախը, մինչև կաթոլիկ ու բողոքական հաւատաւորս միսիոնարները։

Որքան բուրժուական այդ դատարկաբան ֆրազէօլոգները կարող են և ընդունակ կլինեն ճշմարիտ մարդասէր լինելու, այնքան էլ Դաշնակցութիւնը կարող է իսկական սոցիալիստական կուսակցութիւն համարուել. եւ որքան հայկական «գորդեան հանգոյցը», տաճկահայ թշուառ ժողովուրդը կարող է իրական օգնութիւն սպասել, իր հարցի լուծումը յուսալ այդ բուրժուական ֆիլանտրոպայից, այնքան էլ կովկասահայ բանւորութիւնը իրաւունք կունենայ դասակարգային կռիւ սպասելու եւ հարազատ սոցիալիստական գործնէութիւն յուսալու նացիոնալիստ Դաշնակցութիւնից։

Pari passu, pariter—*միևնոյն չափով, միևնոյն եղանակով։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՏԱՃԿԱՀԱՅ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԻՊԼՈՄԱՏԻԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

I

Ներածութիւն

Քաղաքական խնդիրների և հասարակական երևոյթների երբակի բնոյթը։—Հայկական հարցի երեք կողմերը։—Մեր թեման և նրա ծաւալը։—Հայ յեղափոխականների վերաբերմունքը դէպի իրենց հակառակորդները։—Մեր հակառակորդների քաղաքագիտական մտածողութեան հորիզոնը։ . . . . . Եր. 7։

II

Տաճկահայ խնդրի լուծման Ճանապարհը

Ազատագրութեան երեք միջոցներ։—Երբորդ միջոցի կիրառումը պատմական անցեալում։—Հաւաքական միջամտութիւն։—Տաճկահայ խնդրի դիպլոմատիական բնաւորութիւնը։—Հայ յեղափոխական շարժման նպատակը։—Դաշնակցական իդէոլոգների վկայութիւնները։—Գործնէութեան երկուստեք ուղին։—Ե՞րբ է հնարաւոր պետութիւնների հաւաքական միջամտութիւնը։ Եր. 11։

III

Եւրոպայի շահերը Թիւրքիայում

Տաճկաստանը որպէս մի շահագրգիռ օբիեկտ։—Եւրոպական մեծ պետութիւնների քաղաքական և տնտեսական-ֆինանսական շահերը Թիւրքիայում։—Թիւրքիայի պետական պարտքերը։ Երկաթուղային գծերի կառուցումը։—Գերմանիայի նուաճումները։—Թիւրքիան, որպէս ներմուծման և արտահանութեան շուկայ։—Դիպլոմատի և կապիտալիստի ապահով յոյսերը։—Շահը և դիպլոմատիան։ . . . . . Եր. 18։

IV

Պետութիւնների դիպլոմատիան եւ Թիւրքիան

«Արևելեան հարցի» վիրաւոր կողմերը։—Եւրոպական դիպլոմատիան Բերլինի կոնգրեսից առաջ։—Պաշտօնական հովանա-

ւորութեան շրջանը։—Դիւանագիտութիւնը 1878 թ.-ից յետոյ։—Թիւրքիան՝ դիալեկտիքական հակասութեան մէջ։—Պետութիւնների իրական և պաշտօնական քաղաքականութիւնը։—Մարքսի կարծիքը։—Թիւրքիայի երկայրի քաղաքականութիւնը։—Լոկ խոստումների արտաքին միսիան և իրական ներքին միսիան եր. 24։

V

Հայկական հարցի լաւատեսութեան եւ հոռետեսութեան շրջանը

Դիպլոմատիական դուալիզմը։—Տաճկահայ խնդրի քաղաքական երկակի բնոյթը Բերլինի վեհաժողովից յետոյ։—Ակնկալութիւնների և իլլիզիաների շրջանը։—Դաշնակցութեան իդէօլոգների խանդավառ յոյսերը։—Սիստեմատիկ կոտորածների միտումաւոր քաղաքականութիւնը։—Քր. Միքայէլեանի հակասութիւնները։—61-րդ յօդուածը՝ լաւատեսութեան և յոռետեսութեան մի միայուն աղբիւր։—Եւրոպական պետութիւնների և Թիւրքիայի ընդհանուր քաղաքական պլատֆորմը և Տաճկահայ խնդիրը։ Եր.32։

VI

Ռուսաստանի քաղաքականութիւնը եւ տաճկահայ խնդիրը

Ռուսաստանի ծանրակշիռ դերը «Արևելեան Հարցում»։—Նրա իմպերալիստական ձգտումների նպատակը։—Ռուսաստանի մանակցութիւնը Կրետէի և արևել. Ռումիլիայի գործում։—Ցարի դիպլոմատիան Մակեդոնիայի նորագոյն ապստամբութեան օրով։—Եւրոպայի դիրքը Ռուսաստանի առաջխաղացման հանդէպ մերձաւոր արևելքում։—Ռուսաստանի քաղաքականութիւնը «Հայկական Հարցի» նկատմամբ։—Դաշնակցական իդէօլոգների խոստովանութիւնը։—Ռուսաստանի հետևողական ու սիստեմատիկ քաղաքականութեան մօտիները «Հայկական Խնդրի» վերաբերմամբ։—1. Թիւրքիայի ամբողջութեան անձեռնմխելիութեան խնդիրը։—2. Ռուսաստանը՝ ինքնավար Հայաստանի պատմական թշնամի։—3. Ռուսաստանի և Թիւրքիայի մտերմութեան-բարեկամութեան ձգտումը։ . . . . . Եր. 38։

VII

Անգլիայի քաղաքականութիւնը եւ Տաճկահայ Խնդիրը

Անգլիան և տաճկահայ խնդիրը։—Անգլիան՝ «հայասիրութեան» հայրենիք։—Դաշնակցական իդէօլոգների քաղաքագիտա-

կան բոքկութիւնը։—Ուլտիմատումներն և ճառերի անվերջ հակասութիւնները Անգլիայում։—Անգլիական ճարպիկ ու առաձրգական քաղաքականութեան տենդեցները։—Անգլիան, որպէս առաջնակարգ արտայայտիչ համաեւրօպական տենդենցիաների։—Նրա «հայասիրութիւնը» և հակամարտ քաղաքականութիւնը Ռուսաստանի դէմ։—Անգլիայի վերջին տարիների ձեռնպահ դիրքի պատճառը «Հայկական հարցի» նկատմամբ։ . . . . . Եր. 49։

VIII

Ֆրանսիական քաղաքականութիւնը եւ Տաճկահայ խնդիրը

Նոր ակնկալութիւնների շրջանը։—Ֆրանսիան և Տաճկահայ խնդիրը։—Դարձեալ յուսախաբութիւն։—Դաշնակցական «Հայրենիք»-ի յոյսերը ֆրանսիական նոր մինիստրութեան վրայ։—Յեղափոխական անվերջ լարախաղացութիւն։—Ունի՞ Ֆրանսիան առանձնայատուկ շահեր՝ գործելու ի նպաստ հայկական դատի։—Ֆրանսիայի դիպլոմատիան պայմանաւորուած ֆրանկո-ռուսական դաշնակցութեամբ։—Պատմա-քաղաքական անցեալը և ներկան։—Բնական հետևանքները։ . . . . . Եր. 55։

IX

Գերմանիայի քաղաքականութիւնը եւ Տաճկահայ խնդիրը

Գերմանիայի դարաւոր քաղաքականութեան դէմքը։—Գերմանիան և ճնշուած ազգերի ազատագրութիւնը։—Գերմանիան և Հայկական Հարցը։—Գերմանիայի քաղաքականութիւնը մերձաւոր արևելքում։ Նրա գաղթականական և տնտեսական-առևտրական ձգտումները Փոքր-Ասիայում։—Պանգերմանիստ քաղաքագէտների իղձերը։—Բաղդատի երկաթուղին և տաճկահայերը։—Դարձեալ յոյսեր ու երազներ։—Երկաթուղու տնտեսական-կուլտուրական ներգործութիւնը հայերի համար։—Կապիտալիստական շահագործութիւնը և քաղաքական միտումները։—Անհիմն երազներ։ Եր. 63։

X

Աւստրիան, Իտալիան եւ Տաճկահայ խնդիրը

Աւստրիայի և Իտալիայի դերը միջազգային դիւանագիտութեան մէջ։—Աւստրիան, Իտալիան և Արևելեան Խնդիրը։—Նրանց դիրքը Հայկական Հարցի նկատմամբ։—Նրանց գրաւած տեղը դիպլոմատիական կոմբինացիաների ժամանակ . . . Եր. 70։

XI

Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Տաճկահայ խնդիրը

Ակնկալութիւնների և իլլիզիաների նորագոյն ֆազիսը։— Դաշնակցական իդէօլօգիայի հակասութիւնների անվերջ շղթան։— Պրիմիտիւ քաղաքագիտութեան և նահապետական-գոնեկական լոգիկայի փաստաբանութիւնը։—Ամերիկայի Միաց. Նահանգների շահերի և ազդեցութեան պայքարը Թիւրքիայում։—Միաց. Նահանգները և Տաճկահայ Խնդիրը։—Ամերիկայի քաղաքական կոմպետենցիան սուլթանի երկրում։— Ռուզվելտի մերժողական պատասխանի իմաստը . . . . . եր. 73։

XII

Ամփոփում եւ եզրափակում

Պետութիւնների շահերն ու ձգտումները Թիւրքիայում։— Դիւանագիտական յարաբերութիւնների անննպաստ դասաւորութիւնը՝ անգլօ-ռուսական հակամարտութիւն, ֆրանկօ-ռուսական դաշնակցութիւն, գերման-թիւրքական բարեկամութիւն։—Մեր հետազօտութեան եղանակը։—Պ. Ego-ի մեծ հակասութիւնը։— Ճաւական չէ խոստովանութիւնը։—Դաշնակցութեան քաղաքագիտական իդէօլօգիայի պակերը։—Բ. Միքայէլեանը և ամբոխային-նահապետական տրամաբանութիւնն ու հոգեբանութիւնը։— Բարոյական նախատինք և բէալ քաղաքականութիւն։ . . եր. 80։

XIII

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ

1. Յեղափոխական Ճանապարհ կամ յեղափոխական գործունէութիւն երկրի ներսում.

Դաշնակցութեան գործունէութեան տարբեր ճանապարհները։—Նրա յեղափոխական գործունէութեան էութիւնը։—Ցոյցեր, արշաւանքներ, հրոսակային խմբեր, տերօրական գործողութիւններ։—Ո՞րն է յեղ. կուի ու պայքարի իմաստը։—Անուղղակի նպատակը։—Ո՞րն է «բռնի ոյժ»-ի արժէքը։—Եւրոպական միջամտութեան խնդիրը։—Դաշնակցութեան տեսական ու գործնական սխալ ուղղութիւնները։—Յեղափոխ. ֆրազէօլօգիայի թութակում։ —Յեղափոխական գործունէութեան պօզիտիւ ձգտումները և նեգատիւ հետևանքները։—Յեղափոխ. շարժման բնոյթը Թիւրքահայերի մէջ։—Հայկական շարժում և հայկական կոտորած։—Դաշ.

յեղափոխական ձգտումների մաքսիմումը։—Անյաջող ապագայի հաւանական շանսերը։—Ցաճկահայ խնդրի ու շարժման չեզոքացման տենդենցիան։—Ի՞նչ են ասում մեզ նեգատիւ հետևանքները։—Դր. Միքայէլեանի գրքի արժէքը։—Դիալեկտիկայի հակադրական օրէնքը։—Թիւրքահայի քաղաքական վիճակի երեք շրջանները։—Կոտորածների ուժեղացման սիստեմատիկ քաղաքականութիւնը։ . . . . . Եր. 89։

XIV

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ

2. Քաղաքական ճանապարհ կամ քաղաքագիտական-պրոպագանդիստական գործունէութիւն երկրից դուրս.

Երկու ճանապարհի բնաւորութիւնը և նպատակը։—Դաշնակցութեանգործունէութիւնը արտասահմանում։—Գործունէութեան քաղաքագիտական և պրոպագանդիստական բաժինները։—Արտասահմանեան գործունէութեան իմաստը։—Հակասութիւնների քաօսը հետևանքների մասին. «Ցառաջ», Ego, «Դրօշակ», «Այիք» հակասում են միմեանց և իրենք իրենց։—Միւրոյն տեսակէտի և երեւոյթների պատմական ըմբռնողութեան բացակայութիւն։—Տարբերութիւնը առհասարակ յեղափոխականների և դաշնակցական յեղափոխականների մէջ։—Քաղաքական մուրացկանութիւն։—Բանաստեղծ-քաղաքագէտների քաղաքական վուլգարիզմը։—Ո՞րն է քաղաքական պարտականութիւնը Եւրոպայի։—Ինքնախաբէութեան թանձր քօղը։—Հասարակական կարծիք, բուրժուական և պրոլետարական։—Ցոյսեր բուրժուական դեմոկրատիայից և ֆիլանտրոպիայից։—Ականաւոր «հայասէրներ» . . . . . Եր. 114։

Ծանօթ.—Մեզանից անկախ մի շարք պատճառներով դրժրախտաբար անկարող եղանք այս գրքի մէջ զետեղել հեղինակութեանս վերջին երեք գլուխները. այն է՝ Գլ. XV Թիւրքիայի ապագան։—1. Թիւրքիայի ապագան ընդհանրապէս։ Գլ. XVI Թիւրքահայերի ապագան մասնաւորապէս։—Գլ. XVII.—Ս օց.-դեմոկրատիան եւ տաճկահայ խնդիրը։ ՀԵՂԻՆԱԿ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Սխալ	Երես	ուղիղ
են (10 տող վերևից)	14	էին
բացառիկ (10 տող ներքևից)	14	բացառակի
իրենց (12 տող ներքևից)	16	իր
ունենայ (18 տող վերևից)	19	ունենալ
ծանոթ. վերջում	19	գնել («Neue Zeit» 1902 թ. № 26)
(14 տող վերևից)	20	Jbid
ծանոթ. վերջում	23	Jbid
ամենապեղեցիկ (1 տող վերևից)	23	ամենաազդեցիկ
ծանրանայ (13 տող ներքևից)	30	ցածրանայ
պահ (12 տող վերևից)	33	պահ
Քոքը (10 տող ներքևից)	45	Փոքր
Լօտանդօնների (11 տող վերևից)	56	Լօրանդօնների
ի դէպս (1 տող ներքևից)	56	'ի դէմս
դրաւոր (5 տող վերևից)	64	դարաւոր
Մի (12 տող վերևից)	67	Մեծ
փեստրաւար (13 տող վերևից)	75	փետրաւար
պատրական (14 տող ներքևից)	81	պատմական
քալելով (7 տող ներքևից)	81	քաշկռտուող
ընդունուում է (1 տող վերևից)	83	ընդունակ է
նրանք (12 տող վերևից)	83	նրանց
հողմացոյց (5 տող վերևից)	85	հողմաղաց
խաժուամուժ (19 տող վերևից	86	խաժամուժ
անարխիստական (11 տ. ներք.)	86	անարխիական
պլատօնական (8 տող վեր.)	87	պաշտօնական
են (6 տող վերևից)	94	ենք
գիտակից (16 տող վերևից)	101	գիշատիչ

5547
5548

0001495

2018